

Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ)** նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)** presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: [info@artsakhib.am](mailto:info@artsakhib.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>


ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>



ՎԱՐԴԳԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՊՐԱԾ  
ԵՎ ՉԱՊՐԱԾ  
ՏԱՐԻՆԵՐ



Պետրոսյան Վ. Հ.

Պ 505 Չորս վիպակ: Վիպակներ: [Դպր. միջին և տարիքի համար]/Վարդգես Պետրոսյան, Յարալյան].— Եր.: Արևիկ, 1990, 392 էջ:

Ժողովածուն բովանդակում է Վարդգես Պետրոսյանի շապրած տարիներ», «Ճամակներ մանկության կայսր» «Բեղատուն սևեր» և «Վերջին ուսուցիչը» վիպակները:

4808080201 (00) 70—50

707 (01) 90

ԳՄԳ

### ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ներկա ժողովածուի մեջ ամփոփված վիպակները (որ գրված են 1967—1978 թվականներին), իրար մոտիկ են ասելիքով, նաև գրողական հայացքի ուղղությամբ և, այդ տրամաբանությամբ էլ, կառուցված էին հավաքվել մի գրքի «կառույցի տակ»: Բոլոր վիպակների ասելիքը, կենսական նյութը սվյալ ժամանակի պատմակությունն է, երիտասարդությունը, որ փորձում է, հանախ՝ տանջալիորեն, սեփական պատասխանները գտնել անհուսալիորեն հին, թայց և ամեն ժամանակի հետ ետից-եւոր ծնվող հարցին. ինչի՞ համար է մարդ ապրում... Գրողական հայացքի ուղղությունը չորս վիպակներում էլ նույնն է— հասկանալ, առնվազն հիգ անել հասկանալու նոր, հաճախ անսովոր սերունդին, լսել նրա ոչ միայն խոսքը, այլև լռությունը, սեփական փորձի տրամաբանությամբ չմերժել նրա կասկածները, մանավանդ՝ տաղտկալի բարոյախոս չդառնալ:

Երևի հարկ չկա հիշեցնելու, որ 1967—1978 թվականները բնավ էլ ամենաբարեկապատ ժամանակները չէին կյանքի գուտ ճշմարտությունը մարմնավորելու համար և, այնուամենայնիվ, երբ վերահրատարակության նպատակով ես վերընթերցում էի այս վիպակները, չուզեցի բառացիորեն որևէ փոփոխություն կամ խմբագրում անել, թեպետ... Թեպետ այսօր արդեն կարելի էր բացել շատ փակագծեր, կարելի էր դուրս գալ ենթատեքստի գերությունից, գոնե տեղ-տեղ վերձանել եզովառայան լեզուն: Ապրածը-ապրած է, գրվածը-գրված: Եվ դրա համար՝ ընթերցողից ես ներողամտություն չեմ, որ կուզենայի ակնկալել: Երկու բան կուզենայի:

Առաջին: Այս վիպակների երիտասարդ հերոսների հասակակիցները, որոնք այսօր երեսուն-քառասուն տարեկան են,



այս վիպակները կարդարով, գոնե մի պահ վերապրեին իրենց պատանեկությունն ու ջանելությունը, վերադառնալին արդեն հուշ դարձած իրականության, ապրած հույսերի ու կասկածների այն մթնոլորտը, որ, անկախ ամեն ինչից, սիրելի է ու նվիրական:

Եվ երկրորդ: Կուզենայի, որ նրանք, այն ընթերցողները, որ այսօր են լասկոթ-քսան տարեկան, այս վիպակների մեջ կարողանային տեսնել վայսուրձ-յոթանասնական թվականների իրենց հասակակիցներին, որ և՛ նման, և՛ տարբեր են իրենցից: Եվ փորձեին հասկանալ նրանց: Նրանց ուրախությունը, նրանց տառապանքը:

Եթե այդպես լինի, իբրև գրող ես ինձ մեծապես վարձատրված պիտի զգամ, որովհետև խոսքի ազատության ամենակաշկանդված ժամանակներում անզամ գրողը մի իրավունք հաստատ ունեցել է՝ շատելու, չգրելու այն, ինչ չի մտածում: Այս վիպակներում շատ բան կա իմ սեփական կենսագրությունից, իմ սերնդի ապրած կյանքից, բայց, բնականաբար, ավելի շատ՝ այդ ժամանակների երիտասարդության կենսագրությունից: Իմ հերոսներից շատերը իրական նախատիպեր են ունեցել, սյուժետային շատ գծեր ես բաղել եմ կյանքից:

Ինչպե՞ս, ի՞նչ չափով է ինձ հաջողվել՝ կյանքի ճշմարտությունը մարմնավորել իբրև արվեստի ճշմարտություն (կերպարներ, ոճ, լեզու և այլն), այստեղ միակ դատավորը ընթերցողն է, որին ես, ինչպես միշտ, հավատում եմ:

գեկտեմբեր, 1989 թ.



ԱԳՐԱԾ ԵՎ ՉԱԳՐԱԾ  
ՏԱՐԻՆԵՐ



Ա.

Անձրև չէր գալիս:

Տկտկացողը գրամեքենան էր, որի առաջ նստած մարդը կլի-  
ններ երևի երեսուներեք-երեսունչորս տարեկան: Սենյակը փոքր  
էր, և գրամեքենայի ձայնը սովորականից բարձր էր թվում,  
իսկ մարդը ծխում էր: Լուսամուտը դեռ վտանգավոր էր բացել,  
թեպետ մայիս էր, երկնքում արև կար, ծառերին՝ ինչ-որ կանաչ  
փոշի:

Մի ժամ անընդհատ մարդը նույն բանն էր մեքենագրում,  
նույն շափսի սպիտակ թերթիկների վրա և, որովհետև անու-  
շազիր էր՝ սխալվում էր հաճախ, բարկանում, մի տանի հա-  
մար պատում թուղթը, նորից սկսում: Միտում համարյա երեկո  
էր, լուսամուտը նայում էր բակին, այստեղ չէին թափանցում  
փողոցի ձայները: Ահա և վերջին մեքենագրված թուղթը: Կար-  
դաց. «Բարև, մարդ: Եթե դու չես մոռացել, որ մենք տասնհինգ  
տարի առաջ նույն դպրոցն ենք ավարտել, եկող շաբաթ, կի-  
րակի օրը արի մեր դպրոցի մոտ: Առավոտյան տասնմեկին:  
Չմոռանաս գրպանումդ ունենալու ոչ պակաս քսան ուրբի: Լեռն,  
6-ը մայիսի»): Հաշվեց թղթերը, ուղիղ տասնյոթ հատ: Քթի տակ  
ժպտաց. իր համար էլ էր մեքենագրել, որովհետև իրենով էր  
միայն լրանում տասնյոթը: Ոչինչ, թող ինքն էլ ստանա, վա-  
ղուց իրեն ոչ ոք նամակ չի գրում: Հետո սկսեց գրել հասցենե-  
րը: Սեղանին դպրոցական հին լուսանկարներ էին: Ահա իրենք  
լրիվ կազմով: Մոցատետրից նայեց հասցեները: Վերջին  
վեց-յոթ ամսում ոչ մեկին չէր տեսել, զուցե փոխված լինեն:  
Ամենահաստատունը Հակոբի հասցեն է՝ Երևան, կենտրոնական



գերեզմանատուն: նրան այլևս ոչ մի նամակ չի հասնի: Բայց նրա համար էլ մեքենադրված թուղթ կա: Տխուր ժպտաց: Հիշեց Հակոբի դեմքը՝ առանց նկարին նայելու: Մալեց Հակոբի նամակը, դրեց առանձին: Կթողնի գերեզմանաքարի վրա: Հետո քմծիծաղ տվեց այդ զգայական մտքից: Գրեց մյուսների հասցեները: Գրեց անտարբեր, շուգենալով հիշել ոչ նրանց դեմքը, ոչինչ: Առհասարակ, ի՞նչ կարիք կա հավաքվելու, ի՞նչ կարիք կա քրքրելու անցյալի փեթակը. կարծում ես այնտեղից բզզալով դուրս կթռչնի հուշերի մեղունները: Հաղիվ թե: Համարյա ամեն ինչ մոռացվել է, մեղունների մեծ մասը պարզապես դեղին փոշու մի շերտ են փեթակի հատակին և թող հանգիստ մնան: Բայց հինգ տարի առաջ, երբ հավաքվել էին տասնամյակը նշելու, իրեն պատվիրեցին հիշեցնել տասնհինգը: Հաստատ համոզված է, որ կզան շատ-շատ վեց-յոթ հոգի: Գրեց վերջին հասցեն: Իր հասցեն: Եթե ինքը չզնա, կասի նամակ չի ստացել: Բարձր ծիծաղեց: Փակեց զրամեքենան, պառկեց բազմոցին: Երբ մարդիկ սկսում են հիշել մանկութունը, նշանակում է ծերանում են: Ինչ հանճարեղ միտք, ծիծաղեց ինքն իր վրա և որոշեց ոչինչ չմտածել: Գուցեև քնի, մինչև տպարան գնալը: Իր ականարկն է տալում, ուզում էր անպայման կարող վերջին անգամ: Փակեց աչքերը: Բայց մարդ մի՞թե աչքերով է ընում: Ուզում ես անգամ կարիր մարդու կոպերը, մեկ է, երբ միտքն արթուն է, չի օգնի: Գարձյալ հանճարեղ միտք: Հետո հիշեց, որ կարելի է երաժշտություն լսել: Գրասեղանի վրա լուռ բազմել է մագնիտաֆոնը: Նման է բամբակոտ կնոջ. մի կոճակը սեղմեցիր՝ վերջ, փրկութուն չկա: Գուցե սենյակը հավարի: Այսպիսի անորոշ վիճակում դա ամենահարմար զբաղմունքն է: Մի հայացքով մոտ բերեց իրերը: Չարժե: Գեո մի քանի օր էլ կարելի է այսպես թողնել: Խմելու բան չկա: Գուցե զանգահարի՞ մեկնումեկին: Հեռախոսի թելը երկար էր, նա սովորաբար որտեղ պառկեր կամ նստեր, մոտիկ էր տանում, որ շարժվի տեղից:

Կոպացվ, հավաքեց համարը:

— Աշոտ...

— Ասա, կտոն:

— Ի՞նչ ես անում:

— Կինո եմ նայում: Հեռուստացույցով. շատ երկար բառ է:

— Բայց հայերեն է: Իսկ բորդյուր, օրինակ, գեղեցիկ բառ է, բայց հայերեն չէ, բա՞...  
Միծաղեցին:

— Ուրեմն, զբաղմունք ունես:

— Զբաղմունք չունեմ, հեռուստացույց ունեմ և կին, որ պատրաստվում է գիտնական դառնալու:

— Ալինա՞ն...

— Բա էլ ով: Գնացել է փիլիսոփայություն դասի: Իր նման երկու, թե երեք հարյուր հոգի կա: Բուլոբն էլ գիտնական են դառնալու: Ես էլ երեխաներին եմ պահում՝ մինչև փիլիսոփա մասնա տուն գա:

— Ճաշ եփե՞լ ես:

— Վառեցի:

— Գե լավ է, լավ: Լսիր, էդ երեք հարյուրից մեկը չկա՞, որ Ալինան հաջողացնի ինձ համար: Ես էլ եմ ուզում ճաշ եփել:

— Գժվել ես,— ամփոփեց Աշոտը:

Երևի քնել էր: Արթնացավ հեռախոսի զանգից: Երկար գլխի չէր ընկնում. որտեղի՞ց է գալիս ձայնը: Բարձր դրել էր հեռախոսի վրա: Տպարանի հերթապահն էր. «Խմբագիրը շտապ կանչում է, կատաղած զոռում էր հեռախոսով, հը՞...»:

— Գալիս եմ:

Երևի զրածը չի հավանել: Բայց դրա համար հաղիվ թե գոնա: Կամ գուցե կովել է կնոջ հետ, կամ վերևում են վրան խոսել: Չգիտեմ ինչու պատկերացրեց Աշոտի կնոջը՝ Ալինային, գերմանացի փիլիսոփա Հեգելի հետ թևանցուկ, երևանի կենտրոնական հանրախանութում: Իդեալիստ Հեգելը, մոտենալով վաճառասեղանին, երևի կասի մոտավորապես այս ոգով. «Պուր ունե՞ք վերարկուի իդեա: Ո՞չ: Իսկ գլխարկի բացարձակ իդեա»: Ալինան, պարզ է, կբացատրի. «Պրոֆեսորը վերարկու և գլխարկ է ուզում»: «Վերարկու և գլխարկ ունե՞ք,— երևի կասի վաճառողուհին,— իսկ իդեաներից զվվել ենք»: «Ինքն էլ է զվվել,— կասի Ալինան,— ցույց տվեք այն վերարկուն»:

Կտոնը հայելու մեջ լեզու ցույց տվեց ինքն իրեն, հետո ծիծաղեց զվարթ ու անհոգ. Հեգելն ու Ալինան, պարզվում է, որ շատ ուրախ մարդիկ են եղել:

Բուլոբ ծրարները զրպանը դրեց: Ճանապարհին փոստարկղ կցցի, բացի Հակոբի ծրարից: Ինչո՞ւ է կանչել խմբագիրը:



Ինքը գրել է մի երիտասարդ բժշկի մասին, որն, ասում են, հրաշքներ է գործում, եթե, իհարկե, հրաշքներ դեռ հնարավոր են այս ձանձրացած հողի վրա: Տեսավ բժշկին վիրահատության պահին, խոսեց, կարգաց նրա ստացած մի քանի նամակը՝ ապաքինված հիվանդներից: Թվում էր, թե բավական է: Կար ժամանակ, որ ինքը բավական չէր համարի, կգնար նրանց տուն, կխմեր նրա հետ, կվիճեր, կկովեր, կգտներ նրա մտերիմներին, սիրած աղջկան... Եվ նոր միայն կգրեր կամ չէր գրի: Ինչ կարիք կար այդ ամենը...

Մի կերպ ձգեց փողկապը: Դա՞ ով է հնարել: Կարծես թե մարդուն լարելու, նրան սանձած պահելու քիչ միջոցներ կան: Հազավ բաճկոնը: Կարելի է գնալ: Լույսը հանգցրեց:

Փողոցում, իրոք, որ մայիս էր: Դա ոչ այնքան ծառերից էր երևում, որքան մարդկանցից: Լեռնը ժպտաց իր կողքից անցնող, երևի տասնյոթ-տասնութ տարեկան մի աղջկա: Աղջիկն էլ ժպտաց: Ու երկուսն էլ անցան: Լեռնը ետ նայեց, տեսավ, որ աղջիկն էլ է ետ նայում: Օհո՞... Բայց շարունակեց ճանապարհը: Երևի ծերանում է: Եվս մի ապացույց: Ինչ-որ մեկը, հենց քթի տակ՝ առաջարկեց վարդեր գնել:

— Իսկակա՞ն են:

— Քանաքեռի:

— Հա, որ Քանաքեռի է, լավը կլինի,— անտարբեր ասաց նա.— տուր մի երկու հարյուր գրամ...

Նոր տեսավ մարդու դեմքը, որ ավելի կարմիր էր, քան վարդը: Երևի խմած էր. երջանիկ մարդ: Հետո ձեռքը տարավ զրբպանը, փող հանեց:

Ճանապարհը շարունակեց՝ վարդը ձեռքին: Կարծես ժամադրության է գնում: Հիշեց, որ հանդիպելու է խմբագրին, որը վարդն էլ կհամարի կապիտալիզմի մնացուկը:

Գուցե խմի մի հարյուր գրամ: Մտավ սրճարան, կուլ տվեց մի բաժակ արևադույն հեղուկ: Արևադույն: Զգլանքով կրկնեց այդ ամսականը: Ամեն քանի ինչ-որ հավելում կա, բոլոր բաները առանձին վերցրած կորցրել են իրենց իմաստը: Ածական է հարկավոր: Մեկի մասին ասում են՝ լավ մարդ է: Կարծես թե քիչ է մարդը: Բարի մարդ է: Կարծես թե քիչ է մարդը: Թու՛հ, էլի սկսեց փիլիսոփայել: Իսկ խմբագրին այնտեղ հիմա կատաղել է: Արագացրեց քայլերը: Վարդը մնացել էր սրճարանում: Ոչինչ, մեկնումեկը կվերցնի:

Ահա և տպարանը: Բոլոր պատերին կապույտ կամ կարմիր տառերով գրված են զանազան կոչեր, լողունգներ: Քսանական-երեսնական թվերին են գրել: Հայերեն, ռուսերեն, ադրբեջաներեն: Քրդերեն չկա: Հա, քրդական թերթը վերջերս էրացվել: Աջ ու ձախ քայլում են նույն մրոտ, հոգնած կերպարանքները, որ նա տեսնում է ահա արդեն ութ տարի:

— Ա՛, բարև, Սամսոն քեռի...

Սամսոնը յոթ երեխա ունի, դրա համար օրը տասնչորս ժամ է աշխատում: Երբեմն քնում է: Մեծ մասամբ՝ աշխատանքի ժամերին: Հանկարծ շոշափեց գրպանը: Վարդերից մեկը մնացել էր: Կտա սրբագրուհուն: Տղեղ աղջիկ է, ո՞վ պիտի նրան վարդ նվիրի:

— Որտե՞ղ էիր, մեր տղա...

— Տանը:

— Ի՞նչ էիր անում:

— Պառկած մտածում էի:

— Հետո՞:

— Հետո դանդահաբեցին, որ տպարան գամ: Հագա շորերս, ճանապարհին ժպտացի մի աղջկա, վարդ առա՛՛ Սուսաննայի համար:

— Ծնորհակալ եմ,— ասաց Սուսաննան:

— Ձեռ՞ես առնում,— ասաց խմբագիրը:

— Ո՞ւմ...

Խմբագիրը չէր կարող ասել «ինձ»՝ դրա համար էլ կուլ տվեց մի ամբողջ վանկ: Նրա ձեռքին կարմիր, հաստ մատիտ կար: Աչքերի տակն էլ կարմիր էր. կարծես նույն մատիտով էր ներկել:

— Նյութդ հանել եմ:

— Դրա՞ համար եք կանչել: Ինչո՞ւ:

— Որովհետև ինքդ էլ չգիտես, թե ում մասին ես գրել:

— Երբ չես իմանում, ավելի լավ է ստացվում:

Խմբագիրը շատ հոգնած էր ու դեռ պիտի մածուն ճարեր որևէ խանութից:

— Չես էլ հարցնում ինչու եմ հանել:

— Խմբագրին «ինչու» հարցը չեն տալիս, մանավանդ գիշերը՝ տպարանում...

— Սրամտությունդ թող: Քո այդ հրաշք բժիշկը կապված է



իր բուժքույրերից մեկի հետ: Քաղկոմում նամակ կա: Ինքն էլ երկու երեխա ունի:

— Բուժքույրը:

— Չէ, հերոսը:

— Դրա համար եք հանել:

— Քի՞չ է,— խմբագիրը մտածեց, որ ոչ մի խանութում այս ժամին մածուն չի ճարի և Արման նորից կասի, որ ինքը դժբախտ է:— Քի՞չ է...

— Ես գնացի:

Ու շարժվեց դեպի դուռը: Խմբագիրը ձայն տվեց:

— Մի քիչ սպասիր, ես էլ եմ գալիս:

— Կամ...

Դուրս եկավ տպարանի բակը: Չորս-հինգ ավտոմեքենա կար կանգնած:

— Բարև, Քերոբ:

Քերոբը նստած էր մեքենայի դեկի մոտ և դռնակը բաց էր թողել: Նա դարձյալ սափրված չէր և, ինչպես միշտ, ծխում էր՝ երկար, սև մուշտուկը դեղնած ատամների արանքում:

— Բարև:

Նստեց Քերոբի կողքին: Քերոբի երկար կիսադեմը եզրատական փարավոնի արձանի բեկոր էր թվում, խանգարում էին միայն աչքերը, որ փայլփլում էին հիվանդ, բայց կենդանի, մի տեսակ տենդոտ: Լևոնը գիտեր, որ Քերոբը գիշերներն է աշխատում, որովհետև ցերեկներն էլ ինչ-որ ուրիշ տեղ գործ ունի: Ատամների արանքում վառվում էր ծխախոտը, հոնքերի ու այտոսկրերի արանքում՝ աչքերը: (Մխախտոր շուտով կհանգչի: Կարելի է նորը վառել: Կարելի է ուրիշից ուզել: Իսկ եթե աչքն՝ զանգնե՞ն: Քո՛ւ, էլի փիլիսոփայեց... Բայց նա հաճախ էր մտածում Քերոբի մասին: Ե՞րբ է քնում այդ մարդը: Կիրակի՞ օրերին... «Այդպիսի մարդիկ շուտ են մեռնում, երևի քնի պակասը լրացնելու համար»,— տխուր ժպտով երբեմն մտածում էր Լևոնը և ամեն անգամ ուզում էր ավելի երկար խոսել նրա հետ: Քերոբը խուսափում էր: Եթե ազատ է, ավելի լավ է՝ քնի:

— Քերո՞բ...

Հը...

— Երեխեքը ո՞նց են սովորում:

— Սովորում են:

— Ասում եմ՝ ո՞նց...

— Եսիմ: Մի քիչ քնեմ, հիմի կգա:

Փակեց աչքերը: Այդպես նա ավելի էր նման եզրատական փարավոնի:

— Քերո՞բ...

— Թող, էլի, հիմի կգա:

— Բարկացած է:

— Ինձ ինչ:

Քերոբը նորից փակեց աչքերը: Երևի լավ տղա է այս Լևոնը, իրեն միշտ ձեռքով է բարևում ու երբեք չի հարցնում, թե ինքն ինչպես է պահում երեխաներին: Ո՞ւմ ինչ գործն է, ո՞վ ինչով կօգնի: Հետո քնի մեջ հիշեց հանկարծ, որ մեքենայի յուղը քիչ է, համարյա վերջացել է, իսկ զեռ պիտի քաղաքը ոտի տակ տան՝ մածուն ճարելու: Երեկ թոռնիկն էր տուն եկել, մեծ աղջկա տղան՝ Արայիկը: Ինքը հազիվ ժամանակ էր գտել թախտի վրա մի քիչ քնելու, մեկ էլ վեր թռավ: Արայիկը բռնել էր պապի քթից և բաժակով ջուրը լցնում էր բերանը: «Ի՞նչ ես անում, Արայիկ, հո գիժ չե՞ս»: «Պապին... դեղ խմի...»: Նա երկու օր առաջ տեսել էր իրեն զեղ խմելիս և ահա... Շատ ծիծաղեցին, իսկ Արայիկը դարմացած կանգնել էր. ինչո՞ւ են ծիծաղում, չե՞ որ ինքը ճիշտ նույնն արեց՝ ինչ պապիկը երկու օր առաջ: Առաջին թոռնիկն է:

— Լևոն:

Լևոնը դարմացած նայեց:

— Ինչի՞ շես պսակվում:

— Ում է պետք:

— Թոռ կունենաս:

— Թո՞ռ,— Լևոնը զվարթացավ,— միանգամից թո՞ռ...

— Ինչի՞ միանգամից,— դարմացավ Քերոբը,— սկզբից հլա երեխա կունենաս, հետո...

Գիշերն ավելի էր խտանում և ավելի էին ընդգծվում տպարանի լուսամուտները, որ բարձր ջերմություն ունեցող հիվանդի աչքերի էին նման: Լուսամուտների ապակիներին զեռ երևում են պատերազմի ժամանակ խաշաձև կպցրած թանդիֆի շերտերի հետքերը: Երևի որակով սոսինձ է եղել: Ասենք, Երևանը շո՞քափոփեց, ի՞նչ խմանա... Քերոբը նորից փակել էր աչքերը, երևի քնել, որովհետև ձեռքը թուլացած, ընկած էր մեքենայի դեկին:



— Լավ է, որ համբերել ես, — ասաց խմբագիրը, մեքենայի դուռը բացելով, — գնացի՞նք:

Քերորը նույնիսկ չբացեց աչքերը: Միայն աջ ոտքը շարժվեց, հետո մատները ճանկոտեցին մեքենայի դեկը: Այս ճանապարհը նա անցրեց գիտքի, ձեռքերի և ոչ մի շարժման ուղեղն ու աչքերը չէին մասնակցում: Ով էր ավելի շատ մեքենա. մեքենա՞ն, թե՞ Քերորը... Լեոնը նայեց ժամացույցին, տասնմեկն է:

— Մածուն չես ճարի: — Խմբագրի հետ նա դրսում միշտ դուռով էր խոսում:

— Օպերայի մոտի խանութը տասնմեկն անց կես է փակվում: Լեոն...

— Հը...

— Հոգնած եմ: Հետո էլ՝ դու ես մեղավոր:

— Ե՞ս: Ինչի՞...

— Որ բժիշկը չիներ, հիմի մածունը ճարած կլինեի:

Լեոնը նայեց խմբագրի հոգնած կիսադեմին, մութի մեջ տեսավ նրա մի աչքը: Աչքի տակի կարմիր գիծը հիմա սև էր երևում և նման էր մատիտով քաշածի: Լեոնին խմբագիրը թվաց ավտոմեքենայի թիկնակին ջրաներկով նկարած մի կերպարանք, որ կարելի է հեշտությամբ ջնջել, կարելի է հեշտությամբ լրացումներ, ուղղումներ անել: Լեոնին այդ մտապատկերը ճնշեց. ավելի լավ էր քիչ առաջվա խմբագիրը, որի մատների մեջ կարմիր մատիտ կար, աչքերի մեջ՝ բարկություն և միաբ: Խմբագիրը հիմա նման էր կորստուր հանած տարեց կնոջ, որի մարմնի մասերը միանգամից կորցնում են իրենց ձևերը, փլվում: Լեոնը չէր սիրում թույլ տղամարդ, ինչպես չէր սիրում ուժեղ կին:

— Իմ բժիշկը կարգին մարդ է, — չոր ասաց Լեոնը, սպասելով հակահարձակման: Նա պարզապես ուզում էր արթնացնել խմբագրին իր թմբիրից, ուզում էր, որ նա հիմա էլ զոռա, աղմկի:

— Չեմ վիճում, — ասաց խմբագիրը, — չեմ վիճում...

— Իսկ ինչո՞ւ հանեցիր գրածս, հը...

— Է՞... — խմբագիրը թափ տվեց ձեռքը:

Մեքենայում, փողոցում, աշխարհում մութ չէր: Երբեք մութ չի լինում: Մութը հնարում են մարդիկ: Մարդիկ՝ իրենց թուլությունը, հանցանքը, հայացքը, հազար ու մի բան թաքցնելու համար: Մութ չկա, Լեոնը հանկարծ թոթափեց օրվա հոգնու-

թյունը, հանկարծ կռվել ուղեց: Բայց կողքին նստած էր թույլ մարդ: Հորանջեց:

— Ի՞նչ գիշեր է, չէ՞...

— Մի նեղանա, — ասաց խմբագիրը, — դու գիտես, որ ես քեզ սիրում եմ:

— Ավելի ձեռնտու կլինեիր, եթե դա նույնիսկ Սուսաննան ասեր:

— ...Իսկ ականարկդ լավն էր, — շարունակեց խմբագիրը, — վերջը հատկապես:

— Թեք էր, — կատաղեց Լեոնը, — վերջն էլ, սիկզբն էլ, ամենասովորական թեքի: Քեզ էլ թվում է՝ գրածս եմ ափսոսում:

Մածուն չկար:

Խմբագիրը դարձավ սև ջրաներկով նկարած մի կերպարանք և քնեց մեքենայի մի անկյունում: Նրա գրպանում թերթի հաջորդ օրվա համարն էր, որի ոչ մի էջին նորություն չկար: Իսկ աշխարհում ամեն բոլոր ծնվում և մեռնում էր միլիոն նորություն:

Ք.

Մեքենան կանգնեց Լեոնենց շրամուտքի առաջ:

— Գնանք, — ասաց Լեոնը, — մի քիչ կնստենք: Հը...

— Չէ, ի՞նչ ես ասում:

— Մի կես ժամ: Ֆրանսիական կոնյակ ունեմ...

— ...Ինչպես...

Լեոնը ծիծաղեց:

— Ֆրանսիական: Շշի վրա նապոլեոնի նկարն է:

— Նկարը հեշտ: Ասում ես՝ իջնե՞մ:

— Կզանգահարենք, կասենք թերթն ուշանում է, նոր նյութ ենք ստանում:

Խմբագրի մի ոտքն արդեն մայթին էր:

— Մի կես ժամ, ասում ես...

— Մի շիշ կոնյակ է, ուտելու բան էլ չկա: Մի բռայե...

Նա մոտեցավ պատի փոստարկղին և ծրարները ներս գցեց: Նամակները կքնեն այս գիշեր, իսկ առավոտյան ճամփա կընկնեն:

Անասելի տիրությամբ նայեց կապույտ, մետաղե արկղին:

— Դե գնանք:

Խմբագիրն էր: Լեոնը մոռացել էր նրա մասին:



— Գնանք:

Առաջին բաժակը խմեցին անխոս:

— Լավն էր, — ասաց խմբագիրը, — ի՞նչ նամակներ էին:

— Ընկերներով պիտի հավաքվենք, դպրոցական ընկերներով: Մի շարաթ հետո:

— Լավ է:

— Ի՞նչը, կոնյակը, — հարցրեց Առնը:

— Չէ, որ հավաքվում եք: Մեր տղաներից չորսս ենք կենդանի մնացել: Քառասունմեկ թվին դպրոցը վերջացրինք: — Առանց Առնին նաչելու մի բաժակ էլ խմեց: — Աղջիկներն էլ հիմի ատիկներ են, ո՞ւմ հետ հանդիպես:

Առնը զգաց դիմացինի տխրությունը: Հազվադեպ է, երբ մարդ զգում է դիմացինի տխրությունը: Այս անգամ զգաց: Այս մարդն էլ եղել է տասնվեց տարեկան: Ինքն էլ է եղել: Ինքը հիմա երեսուներեք տարեկան է: Այս մարդը երեսուներեք տարեկան էլ է եղել: Հիմա քառասուներկու տարեկան է: Ինքը՝ Առնը, քառասուներկու տարեկան չի եղել: Կլինի՞: Ի՞նչ իմանաս:

— ...Արմային շղանգահարեցիր:

— Ոչինչ, — խմբագիրը թափ տվեց ձեռքը, — ոչինչ:

— Մածուն էլ շատար:

— Ոչինչ, — այս անգամ ձայնի մեջ բարկություն շեշտ կար, — ոչինչ:

Առնը ուրախացավ, հետո զղջաց. ինչ կարիք կար: Մի բաժակ էլ խմեցին. խմբագիրը միանգամից, Առնը՝ կում-կում:

— Փոքր է սենյակդ:

— Երեխ, — ասաց Առնը: — Ուղո՞ւմ ես զանգահարեմ, աղջիկներ գան: Կխմենք, զրույց կանենք: Հը՞...

Խմբագիրը նայեց տարօրինակ ու զարմացած:

(Աղջիկներ... պատկերացրեց նա: Երեխ ջահել կլինեն, գեղեցիկ: Կգան, կլցնեն սենյակը իրենց աչքերով, ծիծաղով: Կխմեն: Լավ կլինի: Կմոտանա տպարանը, կնոջը, մածունը, որ չճարեց): Եվ ասաց.

— Խելքը թոցրե՞լ ես, ի՞նչ է, ինձ ո՞ւմ տեղ ես գրել...

— Ինչպես ուզում ես, — ասաց Առնը, — իսկ աղջիկների հետ կարելի է նաև զրուցել կամ, օրինակ, հաշվել աստղերը: Եվ ոչ այն, ինչ բո մտքով անցավ:

— Ի՞նչ անցավ իմ մտքով:

— Չգիտեմ: Վոյ՞ Մեսինդը չեմ, մտքերդ կարգամ: Կխմես, է՞...

Խմբագիրը այս անգամ էլ միանգամից դատարկեց բաժակը: Շշի վրա նապոլեոնի նկարն էր: Կայսրը երեխ երբեք չէր մտածի, թե կոնյակի անուն կդառնա: Իսկ մի քանի օր առաջ, երբ Առնը գյուղ էր գնացել, տեսավ, որ հին գերեզմանատան տեղը վարել են: Մնացել էր միայն մի քանի քար. կղզու նման թողել էին մեջտեղում: Երբ երեխա էին, այդ գերեզմանատան քարերի մեջ պահմտոցի էին խաղում: Շատ էին քարերը. հասարակ, շքեղ, ջնջված տառերով: Հիմա վարել են, կաղամբ կամ լոբի կցանեն: Գուցե կարտոֆիլ: Առնը այն ժամանակ տխրեց այդ քարերին նաչելիս, բայց հիմա հանկարծ հասկացավ, որ վարած գերեզմանների համար չի տխրել, այլ՝ մանկություն: Եթե վարել են, ուրեմն շատ տարիներ են անցել: Իսկ նապոլեոն Բոնապարտը ժպտում է շշի վրայից:

— Հո չնեղացա՞ր, — հարցրեց խմբագիրը, — որտեղի՞ց ես ճարել կոնյակը: Այ, խմելու բան է, հա՞:

— Փարիզում մի ընկեր ունեմ, նա էր ուղարկել, — ասաց Առնը:

Փարիզում նա ընկեր ուներ և կոնյակ նա իրոք ուղարկել էր: Բայց վաղուց խմել էին, ֆրանսիական շշի մեջ նա պարզապես լցրել էր երեքաստղանի կոնյակ: Առնը անասելի տխրությամբ նայեց նրա դատարկ բաժակին. — ասում ես լավն էր, հա՞...

— Լավն էր, բայց դու նեղացար:

— Չէ, ինչ ես ասում, ուղղակի ուրիշ բան հիշեցի, մեր գյուղի հին գերեզմանատունը վարել են:

— Վարե՞լ են:

— Ըհը: Լավ հող է և հետո գերեզմանատունը վաղուց հիշող չկար: Հիշողներն էլ մեռել են:

— Տխուր բան ես ասում, — խմբագիրը թաղվեց բազկաթոփ մեջ, ներս քաշեց ծուխը, երկար ժամանակ լռեց:

Առնը նայեց ժամացույցին, միացրեց ընդունիչը:

— Տեսնե՞ք մերոնք ոնց են խաղացել Կիևում:


Ընդունիչը հազորդում էր, որ երկրի հյուսիսում փչում են թույլից մինչև շափավոր քամիներ:

— Ուշացանք:

Իսկ խմբագիրը գեմ մտածում էր գերեզմանատան մասին,

2- Վ. Գևորգյան

8867





որ վարել են: Տարիներ հետո իր գերեզմանն էլ կվարեն, ի՞նչ  
իմանաս: Իրար վրա խմեց երկու բաժակ: Ինչ-որ թմբություն  
զարթնեց ուղեղում, դա հաճելի էր, մոռացնում էր շատ բան՝  
հարցեր, կասկածներ:

— Դու ինձ չես հասկանում,— դարձավ նա Լևոնին,— անունդ  
էլ զրոզ ես զրեւ, բայց չես հասկանում,— նա համարյա հարբած  
էր,— դու կարծում ես, ես... Չես հասկանում: Ծս պատերազմ  
եմ տեսել, շատ բան եմ տեսել, շատ բան...

Դա արդեն ամենահավորն էր: Լևոնը զգաց, որ նա հիմա  
կոճակ-կոճակ կսկսի քանդել իր սրտի օձիքը, կսկսի բացատրել  
իրեն: Գրա համար էլ ասաց.

— Կխմե՞ս: Կոնյակ էլի ունեմ:

— Չգիտեմ,— ասաց խմբագիրը,— շշի մեջ մի քիչ կա: Իսկ  
դու մարդկանց աշխատիք ճանաչել ամեն կողմից,— նա երեի  
արդեն քանդել էր սրտի մի կոճակը,— քեզ թվում է, ես չոր մարդ  
եմ, հուզվել չգիտեմ, լավն ու վատը չեմ տարբերում, վախ-  
կոտ եմ... Թե դու լինեիր իմ տեղը...— նա խմեց վերջին բա-  
ժակը,— հը՞...

Լևոնը ոչինչ չասաց:

— Մենակ թե մի՞ նեղանա,— ասաց խմբագիրը:

Լևոնն ասաց, որ չի նեղանում:

— Գնամ,— ասաց խմբագիրը,— ուշ է: Դուրս մի գա, չկար-  
ծես հարբած եմ:

Ընդունիչը ասաց, որ կհաղորդեն գործիքային թևթև երա-  
ժըշտություն: (Երաժշտությանն էլ վերնագիր են դնում, կշռում  
են, կարծես պանիր է կամ միս: Կարծում են մարդիկ չեն հաս-  
կանա. ծանր է, թե՞ թևթև):

— Բարի գիշեր,— ասաց խմբագիրը,— կոնյակդ լավն էր:  
Լևոնը հանվեց-պառկեց մահճակալին: Մոտ բերեց հեռա-  
խոսը, հավաքեց համարը: Այն կողմում լսափողը երկար ժա-  
մանակ չէին վերցնում: Ի վերջո.

— Լսում եմ, ո՞վ է...

— Կիլի՞թ, բարի գիշեր, Կիլի՞թ...

— Աննորմալ,— կինը զրեց լսափողը:

Հետո նա հավաքեց Աշոտի հեռախոսի համարը: Ալինան  
վերցրեց:

— Ծս եմ, Լևոնը, ինչպե՞ս է, Հեղելի համար վերարկու  
վերցրի՞ր հանրախանութից:

— Ո՞ւմ,— Ալինան զարմացավ:

— Հեղելի:

— Աննորմալ: Գրա՞ համար զանգ տվիր:

— Հա: Արայիկն ի՞նչ բանի է:

— Պարապում է, մի խանգարիք, լվացք եմ անում:

Ալինան ծիծաղելով զրեց խոսափողը:

Երկու աննորմալ ստանալ նույն երեկոյում՝ շատ է, մտածեց  
Լևոնը և լույսը հանդցրեց:

— Շրջան ես գնում մի օրով,— ասաց քարտուղարուհին,—  
խմբագիրը կանչում է:

— Ո՞ր շրջանը:

Ասաց:

Լավ է, Ռուբենին էլ կտեսնի, վաղուց չի տեսել: Կխոսեն:  
Պատերազմի տարիներին մի անգամ Ռուբենը դասի եկավ շարժ  
կապած: Շարժ էր, էլի, սովորական շարժ, քեռին էր ուղար-  
կել Գերմանիայից: Գասարանում ոչ ոք շարժ չունենր: Հենց  
այդ օրն էլ Ռուբենին դասից դուրս արին: Վահիկի վերարկուն  
թանաք էր լցրել: Գիրեկտորը նաչեց նրան ու ասաց. «Մարդ  
է դառել, շարժ է կապում»: Ռուբենը հիմա կուսակցության  
չրջկումի առաջին քարտուղար է, իսկ իրենց գիրեկտորը հիմա  
գիրեկտոր չէ, այլ քիմիայի սովորական դասատու: Հանկարծ  
դա հիշեց. «Մարդ է դառել, շարժ է կապում»:

Խմբագիրը կարմիր հեռախոսով խոսում էր ինչ-որ մեկի հետ:  
Լևոնը զվտով բարեկեց, նստեց: Խմբագիրը փոքր-ինչ գունատ  
էր: Մոռացե՞լ էր կամ չէր հասցրել սափրվել... Սեղանի վրա  
թղթեր էին, նամակներ, մատիտներ, ապակու տակ՝ հեռախոս-  
ների համարներ և երեխաների լուսանկարը: Երկուսն էլ աղբիկ՝  
ժպտուն աչքերով: Չգիտես ինչու, ամեն անգամ, երբ Լևոնը  
մտնում էր նրա առանձնասենյակը, անպայման նայում էր այդ  
լուսանկարին: Նայում էր, ինքն իրեն ժպտում:

Ի վերջո խմբագիրը լսափողը ցած դրեց:

— Ինչի՞ համար եմ գնում:

— Նախ բարևիր...

— Գլխով բարեկեցի:

— Գլուխը բարեկու համար չէ:

— Ուղում եք ասել՝ զխարկ գնելու համար է:

— Սրամիտ չէր:

— Ինչո՞ւ եմ գնում:



Խմբագիրը կարմիր հեռախոսի վրա ինչ-որ համար հավաքեց:  
— Ես եմ: Հիմի ի՞նչ պիտի անենք ինքնասպանություն հար-  
ցր: Ո՞ւմ եմ ուղարկում: Լեոնին: Նա այդպիսի բաների մաս-  
նագետ է: Գե լավ, զնն-գա տեսնենք:— Լսափողը ցած դնելով  
ասաց,— հասկացա՞ր ինչի համար ես գնում: Մի տղա և մի աղ-  
ջիկ ինքնասպանություն են գործել...

— Հետո...

— Հետո ա՛յն, որ զնա տես ինչպես է պատահել:

— Ենթադրենք տեսա: Եվ հետո որտեղի՞ց եք եզրակացնում,  
որ ես այդ գործերի մասնագետ եմ:

— Հետո խոսել չի լինում,— խմբագրի ձայնի մեջ բարկու-  
թյան երանդներ կային,— կարծում եմ քեզ հետաքրքիր կլինի:  
Քո սիրած գրողն ո՞վ էր, հա, Ռեմարկը, նրա հերոսներն են, չէ՞,  
որ սիրում են իրենց սպանել:— Լեոնը նայում էր անտարբեր,—  
ի՞նչ է, չե՞ս սիրում Ռեմարկին...

— Սիրում եմ ձեր քարտուղարուհուն, Սեդային, իսկ Ռեմարկ  
կարդում էի մի շորս-հինգ տարի առաջ:

Խմբագիրը բրբջաց.

— Գե լավ, ուզում ես հենց այսօր էլ զնա: Բայց լավ նա-  
յիր, հա, ինքը՝ Ստեփանյանն է հետաքրքրվում: Եղա՞վ:

— Մի օրում ի՞նչ պիտի անեմ:

— Նրանց թաղել են երեք օր առաջ: Ուսուցիչների հետ կիսո-  
սես, ընկերների, ծնողների,— հետո հանկարծ շուռ եկավ,—  
գիշերվա կոնյակից շունե՞ս...

— Չէ,— ասաց Լեոնը,— ես կարո՞ղ եմ զնալ:

— Կարող եք,— «դուք»-ի անցավ խմբագիրը,— խնդրում  
եմ ամեն ինչ՝ մանրամասն, զեկուցագիր պիտի ներկայացնենք  
Ստեփանյանին:

— Ես զեկուցագիր գրող չեմ:

— Գիտեմ, Ռեմարկ ես, բայց գրելն, իհարկե, կգրես:

Լեոնը դուրս եկավ: Ինքնասպանություն, կոնյակ: Նույն  
նախադասության մեջ: Միայն ստորակետով բաժանված: Ինչ-  
պե՞ս կարող է մարդու գլխում այն երկու միտքը ծագել կողք-  
կողքի: Հետո զգաց, որ պարզապես շարացած է խմբագրի վրա:  
Իսկ այդ մտքերը միասին ծագել կարող էին: Քանի անգամ  
է գերեզմանատանը մտաբերել ամենաանհեթեթ անեկզուտը ու  
քիչ է մնացել փոթկա: Առհասարակ եթե հնարավոր լիներ կինո-  
սպարատով նկարահանել մարդու մտքերը: Ինչ հետաքրքիր

բան կստացվեր, կողք-կողքի, իրար հետևից՝ ինչ տարբեր բա-  
ներ կլինեին: Հանկարծ պատկերացրեց այդ կինոժապավենը,  
թեկուզ մարդու մի օրվա մասին, թեկուզ... Ըստ այդ կինոնկար-  
ների, մարդիկ իրար շատ նման կլինեին, որովհետեւ դա կլինի  
իսկականը, ինչ մտածում են: Առհասարակ եթե մարդկանց  
հոգիները մերկացնես, իրար շատ նման կլինեն, նրանք մո-  
տավորապես նույն բանն են սիրում, նույն հաճույքներն են  
ուզում: Ուրիշների առաջ մարդիկ այդ ամենը թաքցնում են,  
ձևանում, դիվանագիտություն խաղում: Մարդկանց միջև տար-  
բերությունները գրանից են: Լեոնը ծիծաղեց իր մտքերի վրա:  
Նա փրկսոփալու էր բարկացած ժամանակ:

— Ինչպե՞ս ես, Սեդա,— ասաց նա քարտուղարուհուն,—  
չամուսնանա՞նք...

Աղջիկը շփոթված նայեց.

— Միշտ կատակում եք:

— Սիրո մասին բարձր կարելի է ասել միայն կատակով:  
Ի՞նչ ես անում: Նեղացա՞ր, դե լավ...

Դռան վերևի դանգը Սեդային ներս կանչեց:

Քերորի մեքենան կանգնած էր դռան առաջ:

— Ինձ չե՞ս տանի մեր գյուղ:

— Իրեն ասա:

«Ինքը» խմբագիրն էր:

— Նրա կարծիքով ես հիմի ուրիշ տեղ եմ:

— Նստիր,— ասաց Քերորը,— կհասցնեմ, ետ կգամ: Ինչի՞  
ես գնում:

— Կարոտել եմ մեր ձորին:

— Հա՛,— Քերորը այնպես հա արեց, կարծես ամեն ինչ  
հասկացավ:

Ինչո՞ւ հանկարծ որոշեց գյուղ զնալ: Նամակներն էլ հիմա  
գնում են: Օղով, ավտոմեքենայով, փոստատարի պայուսակի  
մեջ: Մարդն էլ ավելի շատ չէ, քան նամակ: Նույնպես ծրար-  
ված, նամականիշով կամ առանց նամականիշի, պատվիրված  
կամ հասարակ: Նամակներին էլ են սպասում, մարդկանց էլ:  
Նամակներին էլ չեն սպասում, մարդկանց էլ: Քերորը մեքենան  
վարում էր զգույշ և այլևս ոչինչ չասաց:

— Ի՞նչ է պատահել, Քերոր:

— Ինչի՞:



— Սափրված ես:

— Հա, ի՞նչ պիտի պատահի:

Տասը-տասնհինգ բոսի անց հասան: Կամրջի մոտ կենդ  
իջավ մեքենայից:

— Շնորհակալ եմ:

— Գնացի:

Կամրջի մոտով ուղիղ իջավ ձորը: Չէր ուզում ծանոթ կամ  
ազգական հանդիպի, իսկույն կասեն՝ ինչու ես եկել, տուն  
կհրավիրեն, կհարցնեն ինչի շի պակվում: Միայն տատին  
կուզենար հանդիպել: Ամուր կին է: Տեսել է Խրիմյան Հայրի-  
կին, Թումանյանին, տեսել է երեք պատերազմ, մի երեսունյոթ  
թիվ, կորցրել երեք եղբայր, տասնհինգ տարի սպասել է կո-  
րած որդու վերադարձին և աշխարհում ճանաչած միակ քա-  
ղաքը Երևանն է: Տա՛տր... Երբ նա գրկում է իրեն, կարծես  
հանկարծ ձեռքեր է ստանում ծեր սալորենին: Տեսնես ի՞նչ է  
անում հիմա...

Ոտքերի տակ ցեխ էր, հողը նոր էր զարթնում: Բայց կտնի  
համար գարնան սկիզբը ուրիշ նշաններ ուներ: Ծիշտ է, նա  
ծնվել, մինչև տասներկու տարեկանն ապրել էր գյուղում, բայց  
ուղեղի, սրտի և նյարդերի մեծ մասով քաղաքացի էր: Ու դրա  
համար բնության փոփոխությունները նա զգում էր մարդկան-  
ցով: Գարնան գալը նա աղջիկներով էր որոշում: Հենց որ  
աղջիկները սկսում էին հանվել, ուրեմն գարունը մոտիկ է: Հան-  
վել, այսինքն ոչ լրիվ վերարկուները, հետո՝ թիկնոցները, գուլ-  
պաները, հետո...

Քասախի ձորը շատ խորն է, երբ նայում ես այստեղից՝  
աշխարհից ոչինչ չի երևում և մարդ կարող է կորցնել ժա-  
մանակի զգացումը: Ոտքերի տակ փափկած հող է, երկու կող-  
մում՝ ժայռերից դոյացած հսկա պատեր, իսկ վերևում՝ երկնքի  
կափարիչը: Եթե չի ենն ժայռերի գլխին տնկված բարձր լար-  
ման էլեկտրասյուները, կարելի էր մտածել, որ աշխարհում  
ամենաշատը տասներեքերորդ դարն է: Կտնը պառկեց թաց  
հողին, գլխի տակ գրեց արևով տաքացած մի քար ու փակեց  
աչքերը: Միայն ձորի աղմուկն էր լսվում՝ ինչպես քսան տա-  
րի առաջ, ինչպես հարյուր տարի, ինչպես հազար տարի  
առաջ: Ինչպես հարյուր տարի հետո կլսվի: Կտնը հանկարծ  
հոգնեց այդ միամիտ մտքերից, որ երևի զարթնում են ամեն  
մարդու մեջ, ով ձոր է իջնում: Վառեց ծխախոտը: Փորձեց

հիշել մանկությունը: Իզուր է թվում, թե հեշտ է հիշել ման-  
կությունը: Տարիներ հետո մարդիկ ոչ այնքան հիշում են ման-  
կությունը, որքան հորինում են, մոտավորապես նման, մոտա-  
վորապես իրենցը: Փորձեց հիշել. խառը, անորոշ պատկերներ  
եկան աչքերի առաջ: Բայց դրանք ավելի շատ կի՛նոյի կազրե-  
րի էին նման, որ կարող էին և՛ քոնը լինել, և՛ ուրիշինը, և՛  
բուրբուղի չլինել: Գեաթ ազմուկը բարձր էր, զարմանալի բարձր:  
Հետո հիշեց. գարուն է, շատ ջրեր են լցվում, գետը վարարել է:  
Վարարել է... Այդ բառը կարծես լուցկի էր, որ վառեցին հան-  
կարծ, լուսավորելով մանկության հին սննյակները:

Վարա՛րը...

Ե՛րբ էր, քանի՞ տարեկան էին: Երևի ինը, տասը, պատե-  
րազմը դեռ չէր սկսվել: Մայիսի վերջը կամ հունիսն էր:  
Լողանում էին երեքով՝ ինքը, Վարդանը և Պապիկը: Պապիկը մեծ  
էր, երևի տասնհինգ տարեկան: Այդ տարի առաջին անգամ  
էին լողանում: Պապիկը մեծ էր, չէր թողնում խոր տեղեր գնա-  
լին, իսկ իրենք ուզում էին գնալ, խորը ձգում էր: Եվ մեկ էլ  
հանկարծ.

— Վարա՛ր,— ճչաց Պապիկը,— երեխեք, վարարը, դուրս  
եկեք ջրից...

Նայեցին: Աջուրաքարի տակից առաջ էր հորչում պղտոր,  
կատաղած ջուրը: Ինչ-որ անտեսանելի ուժ դուրս էր քշել գետը  
իր հունից, լցրել ափերը: Ահավոր էր: Մի կերպ դուրս թռան  
ջրից, բարձրացան քարափի վրա, սարսափած աչքերով սկսե-  
ցին նայել: Առաջին անգամ էին տեսնում, թե ինչ սոսկալի  
բան է ջուրը, իրենց գետը, ձորը:

— Շորերը տարավ,— հանկարծ ճչաց Պապիկը,— շորերը:  
Շորերը այն ափին էին, նրանք շտեսան շորերը, պարզա-  
պես տեսան, այն ափը ամբողջովին կորել է պղտոր ջրի տակ:

— Բա ի՞նչ պիտի անենք,— ասաց ինքը:

— Ես իմ,— ասաց Պապիկը,— մի բան կանենք:

Վարդանը լաց էր լինում.

— Մերս կծե՞ծի, բլուզս նոր էր առել, ասել էր չհագնես...

Վարարը հոտում էր առաջ, վերջանալու միտք չունեիր: Նրանք  
կարող էին այս ափով տուն գնալ, բայց շորե՛րը: Ինչպե՞ս  
գնային:

— Սպասենք,— ասաց Պապիկը,— մեկնումեկը կերևա, լուր  
կտանք տեսցիներին, շոր կրերեն:



Ուրիշ ի՞նչ պիտի անեին:

Եվ մերի, զողողալով, նրանք մնացին քարափի գլխին: Մնացին, մինչև մութն ընկավ: Ոչ ոք չերեաց ձորում:

— Հիմի ի՞նչ անենք, — ասաց ինքը:

— Ծար չկա, — մռայլ ասաց Պապիկը, — տկուր պիտի գնանք, այգիների միջով կգնանք, մարդ չի տեսնի: Ուրիշ ինչ անենք, հո չենք սառի ամբողջ գիշեր:

Ու գնացին:

Հիշում է, հրբ տան դուռը բացեց, մայրը ճշաց, եղբայրը՝ Վահրամը, ոչինչ չասաց: Հայրը տանը չէր, Օշական էր գնացել: Եթե լիներ, նա հանգիստ կմտենար, չէր ճշա, չէր բարկանա, ամենից առաջ կգրկեր, կտաքացներ, կհագցներ շորերը: Յրտից լեզուն փակվել էր, մի կերպ կարողացավ բան հասկացնել.

— ...Վարարը, վարարը տարավ...

Եղբայրը հասկացավ, մայրն անիծել սկսեց իր բախտը, ասածուց աղաչել որդուն արժանի պատիժ:

Վարարը: Վարարը շորերը տարավ, նրանց թողեց մերկ: Չորս տարի անց Պապիկը կոխվ գնաց ու անհայտ կորավ, Վարդանը կոլտնտեսության հաշվապահ է: Վարարը...

Լեոնը բացեց աչքերը: Ինչո՞ւ հենց դա հիշեց:

Վարարը:

Հետո կյանքի վարարը եկավ, փշրեց-տարավ՝ ինչ որ կար նրանց հոգիներում, հոգիները թողեց մերկ...

Ինչո՞ւ այդ օրը հիշեց, գուցե նրա համար, որ քիչ առաջ անցան Պապիկինց տան մոտով, որտեղ մայրը դեռ սպասում է որդուն: Մոր մի աչքը կուրացած է, ձեռքերը զոդում են, բայց դեռ սպասում է. սև թուղթ չեն ստացել, անհայտ կորել է, կարող է գա, ուրիշները զալիս են, հրեն ճանճապանյան Բարկենի տղան: Խեղճ կին, նրան թվում էր, թե կյանքի վարարը անպայման պիտի սև թուղթ ուղարկի, նա ի՞նչ գիտի կյանքի վարարից, նրան ուղղակի իր զավակն է պետք:

Վարարը:

Ինչո՞ւ հիշեց հենց այդ: Իսկ գուցե չի՞ եղել այդ վարարը, իսկ գուցե Պապիկն էլ չի եղել, չի եղել նույնիսկ Վարդանը, որ հիմա կոլտնտեսության հաշվապահ է... Լեոնը վեր կացավ: Ամենից շատ նա վախենում էր անհեթեթ մտքերից,

գրանք խառնում են կյանքի բոլոր օրենքները, որովհետև անհեթեթ մտքերը հաճախ ավելի տրամաբանական են թվում:

...Չորը խշշում էր մեղմ, դարմանալի: Գարուն է, ինչպես այն ժամանակ: Գետը մաքուր է, հանգիստ: Բայց, ի՞նչ իմանաս, գուցե շատ հեռվում, անդունդների ու հոգիների մեջ՝ վարար է ծնվում: Ի՞նչ իմանաս...

Ավտոբուսը տեղից շարժվեց թե չէ, Լեոնի կողքին նստած մարդը փակեց աչքերը: Գալավ է, Լեոնը վախեցավ, որ հիմա նա կսկսի պատմել իր կենսագրությունը, կառաջարկի «Կադրեկ» ծխել, կգժոհի ջահելներից, որոնք մեծերին հարգել չգիտեն, որոնք ոչ մի բանի չեն հավատում, որոնք... Բայց նա քնեց:

— Ժամանակը չե՞ք ասի, — հարցնողը ջահել մի աղջիկ էր:

— Քսաներորդ դարի երկրորդ կեսը...

Լեոնի հայացքը դեռ զրսում էր, հեռվի սարերին, որտեղ ձյուն կար: Աղջիկը կլիներ քսան-քսաներկու տարեկան, երևի նման հեռվի սարերի ձյունին, որ վաղը-մյուս օրը կհավլի, կզառնա առու, ծաղիկ, իսկ ավելի շատ՝ ցեխ: Աղջկա թևին էլ ժամացույց կա, ինչո՞ւ է հարցնում: Ինչ-որ ալիք բարձրացավ ներսից, ինչ-որ օձ զարթնեց, թեպետ աղջիկը գեղեցիկ էր: Այդ գեպընդ տառը խորհուրդ էր տալիս մտքի մեջ հաշվել մինչև երեսուներ, բայց նա չհաշվեց: Գրանից մարդ ծերանում է, ներսում հաշվելուց, և հետո՝ մինչև երեսուներ հաշվել, մեկ է, չի կարող: Եվ շարունակմբ ասաց.

— Օրիորդ, իսկ ձեզ չի՞ հետաքրքրում, թե ինչ հիվանդությունից մեռավ Նապոլեոնի հորաբույրը:

— Ինչի՞ց:

— Ենթաստամոքսային գեղձի սուր բորբոքումից, — ասաց Լեոնը, — ուրի՞շ...

— Հորաբույրերի առումով՝ ոչինչ, իսկ իմ ժամացույցը չի աշխատում:

Լեոնը ծիծաղեց: Հեռավոր սարերի ձյունը մոտիկից երևի այդքան ճերմակ չթվա: Իսկ ավտոբուսի ռադիոընդունիչից Շառլ Ազնավուրը կանչում էր Բզաբելին: Լեոնի հարևանը զարթնեց:

— Սկսեցին, — քրթմնշաց նա, — ռադիոյով մի հայի ձայն չես լսի: Վարպետ, դրա ձեռք կտրի...



— Չէ, չէ, ի՞նչ եք ասում...— բողոքեց աղջիկը:

— Երգողը հայ է, տատն էլ Լենինականում է ապրում, գյում-րեցի է,— հանգիստ, անտարբեր ասաց Լեոնը և, դառնալով աղջկան, շարունակեց,— ժամը տասնմեկն անց է տասնհինգ:

Հեռավոր սարերի ձյունը արևի տակ թվում է սպիտակ հրդեհ: Իսկ Շառլ Ազնավուրը կանչում էր Իզաբելին: Ասում են մարդը պարզապես նստած է գերեզմանի մոտ, սիրած աղջկա՝ Իզաբելի գերեզմանի մոտ ու կանչում է նրան: Ինչքան տարբեր կարելի է արտասանել նույն անունը՝ Իզաբե՛լ, Իզաբե՛լ, Իզաբե՛լ... Կամ գուցե ուրիշ բանի մասին է երգը, գուցե Իզաբելը պարզապես լքել է հեռացել, ու նա մորմոքում է օրերի համար, որ չեն կրկնվելու: Ո՞վ գիտե: Լեոնին շէր հետաքրքրելու, թե ինչի մասին է իրոք երգը, նա հավատում էր իր հնարած պատմությունը և նույնիսկ պատկերացնում Շառլին՝ Երևանի գերեզմանատանը, թարմ հողաթմբի մոտ: Իսկ երգը շարունակվում էր: Իզաբե՛լ, իմ սեր... Միլիարդ անգամ մարդիկ ասել են այս նախադասությունը, և միայն աղջկա անունն է ուրիշ եղել: Միլիարդ անգամ: Լեոնը նայեց աղջկան, տեսավ նրա կիսափակ աչքերը և վախեցավ, որ հիմա նա կպատմի սիրո հոգևած մի պատմություն կամ կասի, որ կյանքում դեռ իրեն ոչ ոք այդպես չի կանչել, որ եթե իմանար կկանչեին, ինքն էլ պատրաստ կլիներ մեռնելու...

— Ո՞ւր եք գնում,— հարցրեց նա աղջկան, ինչպես կասեր՝ խնդրում եմ փոխանցել երկու տոմս:

Աղջիկն ասաց, թե ուր է գնում.

— Ես էլ:

Ազնավուրը վերջին անգամ կանչեց Իզաբելին, իսկ Լեոնի հարևանն ասաց.

— Փառք ասածո:

Ասում են, թե Շառլը օրվա մի քանի ժամ մենակ է մնում Փարիզի իր այգում, անջատվում աշխարհից և խոսում կորցրած մտերիմների հետ: Ասում են: Երեկ մարդուն իրոք հարկավոր է երբեմն մենակ մնալ, ինքն իր հետ, ինքն իր դեմ, և, երևի, հենց այդ ժամանակ են զալիս իսկական մտերիմները, որոնց կորցնում ես, որովհետև մտերիմները նրանք են, որոնց կորցնում ես: Միայն պատահական մարդիկ են, որ միշտ կողքիդ են:

Գյուղխորհրդի նախագահը չզարթնածի դեմք ուներ: Լեոնը ցանկացավ որոշել՝ աչքերը կիսափակ են, թե՞, ինչպես մայրը կասեր՝ ասեղով ծակած: Մազերը սանրած չէին, իսկ պատուհանի գոգին դրված էր նավթի լամպը:

— Լույս չեք ունենում, հա՞,— հարցրեց Լեոնն առանց բարևի:

— Մեկ-մեկ կտրում են, ժողով, բան է լինում՝ լամպ ենք վառում, ի՞նչ անենք,— նախագահը նոր միայն բարձրացրեց գլուխը,— մի քիչ համբերիր:

Նա նստած էր շատ փոքրիկ սենյակում, շատ մեծ գրասեղանի առաջ ու եռանդով պտտում էր հեռախոսի լծակը: Կարծես միս է աղում:

— Կենտրոն, այ կենտրոն,— նախագահի դեմքը մեկ աղաչական էր, մեկ բարկացած,— կենտրոն... Օֆիկ ջան... մի շրջկոռու տուր, Սամսոնին... նստիր,— դա արդեն Լեոնին էր վերաբերում, որը տեղ էր գտել լուսամտի գոգին, նավթի լամպի մոտ,— աթոռին նստիր, Օֆիկ... Վա՛յ, ես ձեր տեխնիկա ասողին, էլի կտրվեց...

Այսպիսի հեռախոս Լեոնը վերջին անգամ տեսել էր «Զապաև» կինոնկարում, իսկ նախագահի աչքերը բաց կապույտ էին: Սեղանին գրիչ կար, թանաքաման, իսկ պատին՝ նախագահի զլխավերևում՝ ինչ-որ հին նկար: Լեոնը երևի փոքր-ինչ երկար նայեց նկարին, չկարողացավ որոշել ով է, իսկ նախագահը մի աչքով նրան էր նայում, մի աչքով՝ հեռախոսի նախադարյան ապարատին:

— Օֆի՛կ, ա՛յ Օֆիկ... Հունվարին նոր նկար կառնենք, փողը փոխանցել ենք... Օֆիկ,— նորից սկսեց պտտել լծակը, հետո հանկարծ միանգամից զզվեց,— զե արի աշխատի էս հեռախոսով: Երևանի՞ց ես...

— Երեսուն թվին հեռախոս միայն շրջկենտրոնում կար,— Լեոնն ասաց այն, ինչ ամեն օր իրենց սերնդի երեսով են տալիս,— Երևանից եմ, թերթից...

— Նո՞ր եկաք,— նախագահը հանկարծ դուր-ի անցավ:

— Ավտոբուսով: Գյուղխորհրդի մոտ է կանգնում:

— Բա ո՞նց:

— Կավ է: Գործուղման թուղթս չե՞ք կնքի:

— Գնո՞ւմ եք,— զարմացավ նախագահը, հետո հանկարծ,



կարծես ինչ-որ բան հիշելով, ձեռքը մեկնեց սեղանի վրայով ինչպես հեռագիր կամեկներ,— Պապիկյան Բենո,— հետո ուղղեց,— Բենիամին...

— Լեոն,— ասաց Լեոնը,— կարող է գիշերով գնամ, մեկ էլ ձեզ շտեպս:

— Հա: Վաղն էլ շրջկենտրոն են կանչել: Խե՞ր-շառ...

— Դպրոց պիտի գնամ:

— Դպրո՞ց, ուրեմն էրեխեքի համար եկած կլինեք:

— էրեխեքի,— քմծիծաղ տվեց Լեոնը:

— Խայտառակվեցինք, առավոտն էլ դատախազն էր էստեղ:

Ասում են Մոսկվայից էլ պիտի գան: Մի մատ մեղր գառանք...

Որ Մոսկվայից էլ գան...

— Ինքը պիտի գա,— հանկարծ լուրջ-լուրջ ասաց Լեոնը, պատի նկարն ակնարկելով,— երևի գյուղատվեա էլ կմտնի: Լավ է, նկարը կտեսնի, մի քիչ կփափկի,— ու զլխով արեց պատի կողմը:

Բենո կամ Բենիամին Պապիկյանը միանգամից ձեռքը տարավ դեպի զինվորական գոտին, որի ճարմանգի վրայի աստղը չկար, երևի երեխաներն էին թոցրել: Նա գոտին մի անցք առաջ տարավ, ձգեց, ուղղեց բլուղը, որ վիետնամական էր ու հետաքրքրությունը նայելով Լեոնին, ասաց.

— Ոնց թե. ընկեր Թելմանը...

— Ի՞նչ Թելման,— զարմացավ Լեոնը,— իսկ Մոսկվայից գալու մասին՝ կատակ արեցի:

Պապիկյանը կարծես առաջին անգամ նայեց նկարին.

— Շարաթ օրը, էսօր ի՞նչ օր է, շորեքշաբթի՞, հա, շարաթ օրը բերեցի պահեստից: Կարինետում որ նկար չլինի, ի՞նչ... Փառնակը՝ թե Թելմանի նկարն է, է՛նեստ Թելմանի: Հետո էլ պարծեցավ, թե Թելմանին տեսել է, ձեռքով բարեկ...

— Ո՞վ է Փառնակը:

— Գերի է եղել:

— Բացի դրանից...

— Մեր հաշվապահ: Ասում են հարյուր քսանհինգ գիրք է կարգացել: Կարգացած կլինի: Գերմանիայից ուրիշները շորբան էին բերել, սա հինգ շամպան նկար էր բերել, զբքբու Թուզթղ տուր տեսնեմ:

Լեոնը մեկնեց գործուղման վկայականը:

Պապիկյանը շատ լուրջ վերցրեց, երկար շուտումուռ տվեց,

երևի սուսերեն դժվարանում էր կարողալ, հետո բացեց գրասեղանի դարակը, կնիքը հանեց: Կնիքը շատ էր մեծ ու ժառանգություն էր մնացել երևի քսանական թվերից, այս դյուղխորհրդի առաջին նախագահից: Լեոնի մտքով անցավ աշխարհի ամենաշարուն միտքը. այս կնիքն ինչքա՞ն բան կպատմեր, եթե խոսել սովորեր... Պապիկյանը մեծ արժանապատվություններ կնիքը Բանաբոտեց համապատասխան բարձիկի վրա, հետո մոտեցրեց բերանին, սկսեց արագ-արագ արտաշնչել:

— Որտե՞ղ: Երկու ամիս է նախագահ եմ, առաջ ակումբում էի, վարիչ:

— Շնորհավորում եմ,— Լեոնը ցույց տվեց, թե սրտեղ պիտի կնքի,— այստեղ էլ ստորագրեք:— Հետո հարցրեց,— գյուղում վանք կա՞...

— Բա ո՞նց, դպրոցի բակում, Փառնակն ասում է հազար տարվա վանք է, բայց,— երևում է նկարի պատմությունը տատանել էր նախագահի հավատը,— այսինքն, ինչ իմանաս, առաջ պահեստ էր...

— Երևի դպրոցն է վանքի բակում,— կծեց Լեոնը:

— էդպես որ ասիր, ճիշտ ասիր,— մեղմացավ նախագահը, հետո մի քիչ մտածեց,— տուն շմտնե՞նք, դպրոցը հո չի՞ փախչի, է՛ն ա վանքի բակում,— վերջին միտքը նա հաճույքով կրկնեց,— սոված կլինես, Տիկուշը մի բան կսարքի, հավ շատ ունենք, լավ արաղ կա: Հը՞...

Լեոնը անըմբռնելի քնքշանքով նայեց Պապիկյանին. տեսավ նրա դեմքի ծալքերը, խորշումները (կարծես նրա շորբոթը դասարանցի տղան հոր դեմքին է փորձել գրչածայրը, գրչածայրը լավ չի գրել, ու նա խզվել է երկար-բարակ), տեսավ նրա կոշտ, ասես կարմիր տուֆից սարքած ձեռքերը, շկարած եղունգները, մտավ նրա գրասեղանի դարակը, որտեղ երևի երկու-երեք թուղթ կլինի շրջկենտրոնից ստացած, մեկ-երկու դիմում, որոնց ձախ անկյունում նա քիչ հետո երևի կմակագրի կարմիր մատիտով. «Գուրս գրել ութ մանեթ օգնություն՝ իբրև բազմադավակ մոր»: Լեոնը նայեց, մտածեց, ծպտաց, հետո նայեց պատի նկարին, շժպտաց: Հետո գործուղման թուղթը ծալեց-դրեց գրպանը:

— Հը՞,— ասաց Պապիկյանը, այսինքն, տուն գնո՞ւմ ենք, Տիկուշը հավը եփում է, արաղ խմո՞ւմ եք, թե՞ չէ...— Իսկ Լեոնը ասաց.



— Գիտե՞ս ում նկարը կպցրու,— նա արդեն «դու»-ի էր անցել,— Հովհաննես Քոմսանյանի:

— Քոմսանյանի՞: «Ապրեք երեսեք, բայց մեզ պես շապրեք»: Հը՞: «Ափսո՛ւ, Անուշ, սարի ծաղիկ...»,— Պապիկյանի դեմքը երանութուն էր արտահայտում,— գրախանութում վայ թե շի՛նի,— հետո մտածեց,— Երեանից բերել կտամ կամ Փանակը կունենա: Հը՞...

— Ես գնացի,— Լեոնը ձեռքն առավ թղթապանակը,— շուտ վերջացրի, վայ թե գամ, կհարցնեմ՝ տունդ ցույց կտան:

— Ցույց կտան,— ու ժպտաց գոհ,— բա ո՞նց:

Լեոնը դուրս եկավ գյուղխորհրդից: Բակում ամալի լուսթյուն էր, որին կարոտ են աշխարհի բոլոր քաղաքաբնակները և որից զզված են բոլոր գյուղերում: Ոչ ոք չկար: Բակի միակ շնչավորը մեծամիտ մի աքաղաղ էր, որ դեսուղեն էր անում, երևի կեր փնտրելով կամ ընկերուհի: Նախ՝ երևի կեր: Լեոնը նայեց աքաղաղին, որը նրան շնայեց, հետո նայեց կորացած աներին, երկնքին, որի վրայից ասես հենց նոր իջել էր գյուղի ներկաբարը, որին պահեստից միայն մի գուլն էին տվել՝ սպիտակ: Նայեց հատուկենա ծառերին, որ այդ ամալուսթյան մեջ թվում էին սխալ, թվում էին մոռացված մեկ-ճումեկի կողմից, որ հիմա ուր որ է կհիշի, կվերադառնա, հանելով հողից կտանի ու կլինի լրիվ իսպանական ամալուսթյուն: Գպրոցը երկհարկանի, սպիտակ ներկած շենք էր, որ վարագույրի պես կախվել էր եկեղեցու առաջ, բայց քանի որ շատ բարձր չէր, տանիքի վրայից երևում էր եկեղեցու գմբեթը: Երևում էր նաև խաչը, որ չէին հանել: Տաթևիկը, ավտորուտի աղջիկը, Ֆրանսերենի դասատու պիտի լինի մոտիկ գյուղերից մեկում, պիտի սովորեցնի, որ փոքրիկ գյուղացիները կարդան Բալզակի, գուցե Ապոլիներ, կարդան Ռոբեսպիերի նամակները: Հիմարություն, Տաթևիկը արդեն եկող տարի ետ կգնա տուն, իսկ երեսնները նրան կհիշեն երազի պես, որ քայլում էր իլիկի պոչ թվացող կրունկների վրա, որի ծնկները երևում էին, երբ նստում էր, իսկ հետո կմոռանան: Ծանապարհը չէր գալարվում օձի նման, հին էր ու ամալի՞ ինչպես երկինքը: Օրվա այն ժամն էր, երբ մեծերը դաշտում են, փոքրերը՝ դպրոցում: Մխել ուզեց, հանկարծ, երբ իրեն զգաց դպրոցի բակում, մոտքի դրան առաջ, նոր միայն անդրադարձավ, թե ինչու է եկել, ուզեց պատկերացնել Հասմիկի և Սե-

բորի դեմքերը, որ չէր տեսնելու երբեք ու անիծեց իրեն, թե ինչու եկավ: Ներս մտավ ավլած միջանցքը: Ի՞նչ պիտի խոսի, ի՞նչ պիտի գրի և ո՞ւմ է դա պետք: Վառեց սիգարետը, ծուխը ներս շնչեց, հազաց: Զանգը տվին, և կարծես երկրաշարժ եղավ: Լուսթյունը, սեղանին դրված ապակու նման, ընկավ քարե հատակին ու փշրվեց: Գուները բացվեցին, օդը լցվեց փոշով, աղմուկով, երեսաների կարմիր, առողջ դեմքերով: Լեոնը հարցրեց վազող մի տղայի.

— Տասներորդը որտե՞ղ է:

— Ես կավիճի եմ գնում:

Ժպտաց: Տղան էլ ժպտաց: Ասաց՝ ինչ որ պետք է:

Լեոնը հանկարծ հասկացավ, որ ինքը դիտմամբ է երկարացնում ճանապարհը, չի ուզում հասնել, նստել անծանոթ դեմքերի առաջ, անհեթեթ հարցեր տալ, կեղծ պատասխաններ լսել կամ՝ լուսթյուն: Գուցե դեռ ուշ չէ, դեռ կարելի է ետ դառնալ, գնալ հյուրանոց, մի քանի շիջ պինի վերցնել ու... ու բաց արեց դուռը: Դասարանում հինգ-վեց հոգի էին, ուսուցչի շուրջը խմբված:

— Բարև ձեզ, ես թերթից եմ:

Ուսուցիչը կուլ տվեց նախադասության կեսը և ձեռքը մեկնեց:

— Աղաբեկյան: Երևի...

— Այո,— հարցը կանխեց Լեոնը:

— Գիրեկտորին տեսա՞ք,— ասաց Աղաբեկյանը:

— Չէ, նրա հետ վերջում:

— Ես ձեռք թերթի քսան տարվա բաժանորդն եմ,— ժպտաց Աղաբեկյանը:

— Չէի՞ք քախի, որ ներս գան,— խնդրեց Լեոնը,— ես այսօր պիտի վերադառնամ:

Եկան:

Շախմատի ֆիգուրների համրությամբ շարվեցին իրենց տեղերում, դասարանի տախտակի վրա, ու սկսեցին Լեոնին նայել: Տասը տղա, չոթ աղջիկ հաշվեց Լեոնը, եթե մի-մի շարաթ առաջ գար, կլինեին տասնմեկ տղա, ութ աղջիկ:

— Բացակա ունե՞ք:

— Չէ,— ասաց ինչ-որ մեկը:

— Թաղմանը...— Լեոնը կոտրատում էր մատները,— թաղմանը ձեռոնցից քանի՞ ան էին գնացել:



Ոչ մի ձեռք չբարձրացավ:

— Ո՞չ որ...

— Ես բացատրեմ, — մեջ մտավ Աղաբեկյանը, — ի՞նչ գործ ունեին զնային, հետո դիրեկտորի կարգադրութիւնը կար, ես էլ համաձայն եմ...

Լեոնը կարծես շտեղ Աղաբեկյանին, նա անասելի տխրութեամբ նայում էր դասարանին, պատանիների դեմքերը նրան թվում էին տաշած նույն փայտից, սկսնակ արհեստավորի շարած ուրազով: Երբ խոսեց, նա ոչ մեկի չէր ուղղում իր ասածը, հենց այնպես, բարձրաձայն տխրում էր, ամստում, կասկածում.

— Ուրեմն սովորել եք իրար հետ, մեծացել և շեք գնացել վերջին անգամ տեսնելու... Ես ի՞նչ խոսեմ ձեզ հետ, ինչի՞ մասին, ինչի՞ համար...

Լեոնն իր առաջ աչքեր չէր տեսնում, միայն խոփվ, շահերած մազեր և ուսեր, որ ասես փլվում էին. ոչ որ նրան չէր նայում:

— Իսկ ինչո՞ւ չդնացիրք...

— Ես ասացի, — նորից Աղաբեկյանն էր:

— Իրենք թող ասեն:

Լեոնը: Ու հանկարծ Լեոնը վեր կացավ: Սա ի՞նչ հիմար հարցաքննութիւն է: Վերջրեց թղթապանակը: Կխոսի դիրեկտորի հետ ու հայդա, ինքը գեկուցագիր է գրելու, այդքանը բավական է:

— Ես գնացել եմ, — վերջին շարքից կանգնեց մի տղա: Լեոնը նայեց նրան՝ ինչպես փոքր եղբորը կնայեր, — ես գնացել եմ, հետո ինչ...

— Դո՞ւ, — Աղաբեկյանը սուր նայեց տղային:

— Ես էլ, — կանգնեց մեկ ուրիշը:

Ուրիշ ոչ որ:

Միայն երկուսը:

Լեոնը հետագայում էլ դժվարանում էր հիշել, թե ինչպե՞ս ո՞ր խոսքից հետո հանկարծ քանդվեցին քարկապ ընկած լեզուները, մամլակի տակից դուրս պրծան տափակած զգացումները բայց պատանիները խոսեցին, պատմեցին...

...Սերոբն ու Հասմիկը նստում էին նախափորջին շարքում յոթերորդ դասարանից միասին էին: Երկու շարաթ առանց բաժանեցին: Հասմիկը շարագրութիւններ էր գրում: Սերոբի համար, Սերոբը լուծում էր նրա երկրաչափութեամբ:

...Սերոբն ու Հասմիկը նստում էին նախափորջին շարքում յոթերորդ դասարանից միասին էին: Երկու շարաթ առանց բաժանեցին: Հասմիկը շարագրութիւններ էր գրում: Սերոբի համար, Սերոբը լուծում էր նրա երկրաչափութեամբ:

Ինչդիրները: Սերոբն, իհարկե, կարող էր շարագրութիւն գրել, իսկ Հասմիկը մենակ էլ կլուծեր խնդիրները, բայց այդ դեպքում ի՞նչ պատճառով նրանք երկար նստեին կողք-կողքի և հետո՞ հո չէի՞ն կարող նամակ գրել իրար կամ խոսել ամենագլխավորի մասին: Ուրի՞շ: Մի անգամ Սերոբը ծեծել էր Եղիշին, որ ֆիզկուլտի դասին մի տեսակ էր նայել Հասմիկի մերկ սրունքներին: Այլ հիմա, եղածից հետո են մտածում, որ Հասմիկի համար էր, այն ժամանակ...

Բայց... Բայց մի անգամ նրանց տեսան ծորում, բարձր խոտերի մեջ, կողք-կողքի ո՞վ տեսավ, ո՞վ լուրի կծիկը գլուղամեջ գցեց, հիմա էլ ոչ որ չգիտի և ամեն ինչ եղավ արագ, կատաղի, հանկարծ, ինչպես խալական կինոնկարներում, կծիկը բացվեց, թելը երկարեց, բարակեց... Մի քանի օր հետո Սերոբի մայրը ազդարարի մոտ տեսավ Հասմիկի մորը և սկսեց առանց նախաբանի. «Թե լիրք է աղջիկդ, ինչի՞ ես սպասում, մարդու տուր, իրապեսները քի՞չ են...»: Հասմիկի մայրը նախ գունատվեց, հետո էլ առչուծի պես վրա հասավ, բռնեց նրա սպիտակող մազերից ու... Հաջորդ առավոտը բացվեց անհավատալի լուրով. Հասմիկը կախվել է, մտել է գոմը, դուռը հետևից փակել, կախվել է: Թե նրանց տանն ի՞նչ է եղել գիշերը, ի՞նչ է ասել հայրը, ոչ որ չիմացավ: Միայն մի պահ գլուղն ընկրիցեց ահռելի վշտի առաջ, հետո բամբասանքը ձնագունդ դառած սկսեց գլորվել գլուղի նեղլիկ փողոցներով. «Ասում են Սերոբն ու Հասմիկը, վա՛յ, մեղա քեզ աստված, ասում են էրեխով է եղել, դրա համար...»: Հանկարծ ուշքի եկան. ո՞ր է Սերոբը: Որոնեցին բալոր աղգականների տներում, ձորի բուրբ քարանձավներում, նույնիսկ հաշտվել էին, որ դիակն են գտնելու, իսկ նա երրորդ օրը հանկարծ հայտնվեց շտապ օգնութեան մեքենայով, բժիշկները հետ: Մեքենան կանգնեց Հասմիկենց տան առաջ, բժիշկները ներս մտան: Սերոբը մնաց գրտում. մոտեցան, ոչ մեկին չնայեց, ասես քար էր, եկեղեցու պատից հանած, ոչ մի հարցի չպատասխանեց: Մեկ-երկու ժամ հետո բժիշկները դուրս եկան, Սերոբը շնորհակալ նրանց էլ, իսկ մեքենան գնաց: Մեքենայի գնալուց հետո ձնագունդը սկսեց գլորվել հակառակ ուղղութեամբ. «Ձուրանան դրանց լեզուները, ինչե՞ր էին ասում էրիսերի մասին, լուրի պես աղջիկ էր, ի՞նչ էրեխով, ի՞նչ բան: Պրոֆեսորն ասել է...»: Գիշերը Հասմիկի դիակը եկեղեցի տարան, կարգ



էր, մինչև բժիշկներին գալն ո՞վ սիրտ կաներ, աստված կա վերեր... Իսկ առավոտյան. «Տղա ջան, էդ ինչ արիր, տղա ջան»: Սերորի մոր ձայնն էր: Տղան թույն էր խմել: Չորս ժամ ապրեց: Թուլի էր գրել. «Հասմիկ ջան, ներող եղիր, որ երկու օր ավել ապրեցի: Նրա համար ապրեցի, որ իմանան, որ դու անմեղ էիր»:

Ու միասին թաղեցին նրանց:

Լևոնը դուրս եկավ պարոցից, արգեն երեկո էր:

Կգնա, չի մնա գիշերը, գինի կճարի, կխմի ճյուրանոցում: Ներսը ծանրացել էր լսածներով, շրթունքները դառն էին, ասես ծխախոտից սարքած: Հավատում էր ու չէր հավատում: Ուզում էր հիշել և ուզում էր ոչինչ չհիշել: Խոսեց նաև մի քանի ուսուցիչների հետ, դիրեկտորի: Ահա.

«... ես Սերորին տեսա, նոր էր իմացել, թե ինչ է արել Հասմիկը: Ինձ մոտեցավ, շատ տխուր էր: «Ի՞նչ անեմ»,— ասաց: Հանեցի, երեք ուրլի տվեցի, ասացի գնա արաղ առ խմի, գյուղխորհրդի մոտ մի արտաշատցի էր ծախում: Փողը չվերցրեց, գնաց... Դե ես մտածեցի, արաղը կխմի, կքնի... Հետո կխոսեինք, ես ի՞նչ իմանայի...»:

Սա պատմության ուսուցիչն էր ասում:

«Ինչու չթողեցի գնան թաղմանը: Երևի նվազախումբ էլ կանչել տայի: Սխալ բաներ եք ասում, ընկեր թղթակից: Ի՞նչ սեր, ի՞նչ բան, նրանց ի՞նչ ժամանակն էր: Եվ հետո էլ՝ ինքնասպանություն, բա որ արտասահմանի բերանն ընկնի, ո՞վ պիտի պատասխան տա, դո՞ւք... Կներեք, մենք պիտի պատասխան տանք: Հիշո՞ւմ եք երեսնական թվերին, ասենք, ինչ պիտի հիշեք, ո՞ր թվին եք ծնվել... Բա որ ասում եմ: Բոլոր դասարաններում ժողով ենք արել, դատապարտել: Ի՞նչը, զարմանում եմ՝ կոմերիտականները ինքնասպանություն են գործել, դուք ասում եք ինչն ենք դատապարտել: Ձեր խըմբադիրն ո՞վ է: Ի՞նչ, հասցեն ի՞նչ եմ անում: Հա, իհարկե, ճանաչում եմ, մի անգամ եկել է մեր գյուղ: Իհարկե, լավ բան չի, ցավալի է, մենք էլ պիտի եղբակացություններ հանենք, ուրեմն, դաստիարակչական աշխատանքները մեզ մոտ... Դուք իզուր եք քմծիծաղ տայիս, երեխաների հետ էլ ճիշտ չեք խոսել, ես կասեմ որտեղ պետք է: Չէ, չեմ սպասում, բայց ես էլ կոմունիստ եմ, տարիքիդ չափ էլ ստած ունեմ, ինչ վերաբերում է...»:

Դիրեկտորն էր:

«Ախր փոխանակ դասերով զբաղվելու, սիրում են: Ի՞նչ, ձեր հարցը չեմ հասկանում. ես ե՞րբ եմ սիրել: Ինչո՞ւ պիտի սիրելի, էնքան սիրահարվածներ եմ տեսել, պսակվում են, մի ամիս հետո երեխա են ունենում, երկու ամսից բաժանվում: Դուք մեր գյուղը չցիտեք, քսան տարվա պսակված ենք, կնոջս թևը մտած փողոց դուրս գամ, կփախան: Ինչո՞ւ Իսկ որ քաղաքում բոլորը բաժանվո՞ւմ են: Եկեղեցում ինչո՞ւ են դրիլ Հասմիկին, կարգ է, մեղ մոտ անում են: Ախր, ի՞նչ պիտի գրեք, հը՞...»:

Սա էլ գրականության դասատուն, որ հարյուր անգամ երևի պատմած պիտի լինի Սոսի ու Վարդիթերի, Ռոմեոյի և Ջուլիետի ողբերգական սիրո մասին...

Մղձավանջ:

Մարդ կարող է խանգարվել:

Հիշեց, որ քաղցած է, նայեց ժամացույցին: Երևանում լինեք, կմտնեք «Վոտնիկ», ոտեղու բան կվերցնեք, սուրճ ու կնայեք ապակե պատերից դուրս: Ճարտարապետ լինեք, աշխարհի բոլոր պատերը ապակուց կանեք, որ մարդիկ ապրեն բաց, մերկ, որ մարդիկ չձևանային, շորս պատը պատյան չդարձնեին: Հիմար միտք: Կնասեր «Վոտնիկում», Անասիտը առանց հարցնելու, իրար հետևից կփոխեք սուրճի բաժակները և միայն հինգերորդի ժամանակ կասեք. «Վերջինն է»: Վեր կկենար, դուրս կգար փողոց: «Վոտնիկում» նրան բոլորը ճանաչում են, երևի նաև սիրում. միշտ ճիշտ են հաշվում, հատուկ սրբում ափսոսանքը և բաժակները, բերում, ինչ ուզում է: Ամիսներով կարող է չվճարել, կսպասեն: Մի քիչ տուն է զզում այստեղ, թեպետ պատերն ապակուց են: (Հանկարծ հիշեց. մի անգամ շատ էր խմած, գնաց եղբոր, Վահրամենց տուն, որտեղ մայրն է: Խմեց էլի մի քանի բաժակ, թթու կերակր, իսկ երբ վեր պիտի կենար (հետո պատմեցին), մորը կանչեց, թե՛ հաշվիր, ի՞նչ պիտի տամ: Հետո, երբ ուրիշները պատմում էին ու ծիծաղում, սրտում ծանրանում էր քարի պես մի բան, որ անուն չունի):

Գյուղի փողոցը նման էր գյուղի փողոցի: Արդեն մթնում էր, և ամառություն չկար: Երևում էին մարդիկ, սալներ, բեռնատար մի մեքենա խրվել էր ցեխի մեջ, իսկ մի էջ կանգնել էր փողոցի կենտրոնում ու չէր գնում առաջ: Վրայի տղամարդու ոտքերը շատ էին երկար, ու Լևոնը հանկարծ հիշեց իրենց գյու-



ղացի Օհանեսին, որի ոտքերն էլ երկար էին և որի տակից, պատմում են, մի անգամ էլը գնացել է, ինքը չի իմացել...

Օտար գլուզը գիրք չէ օտար լեզվով, այլ ազգական, որին երբեք չէիր տեսել, տեսար, ու անմիջապես խաղաց արլունդ, հիշեցիք մյուս ազգականներին, որոնց երկուսդ էլ գիտեք, և ամեն ինչ իր տեղն ընկավ: Բայց Լեոնը չէր հասկանում իրեն պաշարած զգացումները, նա շարունակում էր նայում շուրջը, ամեն ինչին, մարդկանց, տներին, նույնիսկ երեխաներին: Մղձավանջ էր:

Գուցե գնա-դանի գլուզխորհրդի նախագահին, խնդրի, որ մեքենա ճարի, հասցնի շրջկենտրոն: Այլևս ի՞նչ կարիք կա մնալու, ի՞նչ պիտի ստուգի: Մուժը վրա էր տալիս, գլուզի փողոցը նմանվում էր իմպրեսիոնիստական նկարի: Լեոնը փորձում էր ինչ-որ բան հասկանալ այս անըմբռնելի պատմությունից, որին կնախանձեհին աշխարհի բոլոր սենտիմենտալ գրողները. պարզապես նպտիր դրամեքենայի առաջ ու տկտկացրու ինչպես եղել է՝ պանորաստ է անվազն հարյուր հազար ընթերցող, հիմնականում տասնվեցից-քսան տարեկան: Գրաքննադատներն, իհարկե, կգրեն, որ այդպիսի գեպք անհնար է մեր օրերում, հենց իրենց թերթում հողված լույս կտեսնի, որը համոզիչ օրինակներով կապացուցի, թե հեղինակը առաջնորդվել է ոչ թե մեր լուսավոր կյանքով, այլ զոռ է տվել իր հիվանդ երևակայությանը և այլն, և այլն: Չէ, դեռ շատ բան կա հասկանալու այս պատմության մեջ, ոչ թե գրելու, այլ սեփական հոգու համար: Կքնի գլուզխորհրդի նախագահի տանը, մինչև կեսգիշեր կիսոսեն, լավ մարդ է, կպատմի իրենց պահեստապետ Փառնակից, որ տեսել է էսնեստ Թելմանին կամ էսնեստ Հեմինգուեյին, մեկ է, կուտի տանաիրուհու եփած հավը, նախազահը ցույց կտա քսանական թվերին ստացած իր պատվոգրերը, երևի նարդի կխաղան: Հետո կքնի՝ գլխի տակ տանտիրուհու ասեղնագործ բարձը, երազում կտեսնի տատին, որ դժգոհ էր իր բոլոր աղջիկներից ու հարսներից, կամ կթվաբնկերներով հավաքվել են Սևանում, եկել է նաև Հակոբը, որ վեց տարի առաջ մեռավ: Չէ, չի մնա, հենց հիմա կգնա շրջկենտրոն, ոտքով կգնա, մի ճանապարհ է, չի կորցնի, կքնի հյուրանոցում, պարզ է, սոված կմնա, իսկ առավոտյան՝ հայդա Երևան: Տների առաջ նստած էին մարդիկ՝ ինչպես Պոռչյանի վեպերում, Լեոնը քայլում էր դանդաղ, ծխում էր: Չէ, այժու-

մենայնիվ, պիտի գանել Պապիկյանին, քանի մուժը լրիվ չի գրավել գլուզը: Ու նա հարցրեց հենց առաջին պատահածին.

— Կլուզխորհրդի նախագահի տունը ո՞րն է:

— Բենույի՞: Ինքը հրեն, աղբյուրի մոտ...

Աղբյուրը քիչ այն կողմ էր, իսկ Պապիկյանը դեռ հեռվից ընդառաջ եկավ:

— Ես էլ մտածեցի, թե գնացել ես:

— Ուղում եմ:

Նրանք քայլեցին ճանապարհով, որ կամաց-կամաց դուրս էր սողում գլուզից, և Լեոնը հարցրեց, թե ուր է տանում ճանապարհը:

— Հանդստարան, — ասաց նախագահը:

Հանդստարան, այսինքն՝ գերեզմանատուն: Գնացին: Գերեզմանատունը սկավեց միանգամից, առաջին տապանաքարի կեսը մտած էր առվի մեջ, որ արտը բաժանում էր հանգստարանից, տապանաքարի տառերի մի մասը ջնջել էր ժամանակը, իսկ մնացածը՝ մուժը, ոչինչ չէր կարգացվում: Լեոնը հանկարծ տեսավ, որ իրենք քայլում են գերեզմանաքարերի վրայով, ուրիշ ելք չկա: Քարերն ընկղմված էին հողի մեջ, մոտեցած, միացած իրար, մաշված՝ երկանքի պես: Կային նաև տապանաքարեր, որոնց սուր ծայրերը դեռ լինեցին ծածկվել հողով, և այդ սուր ծայրերն էին միայն հիշեցնում քարերի ինչ լինելը:

— Հի՞ն է ձեր գերեզմանատունը:

— Հին է, — ասաց Պապիկյանը, — նորը մի քիչ էն կողմն է:

— Ո՞ր թվի քար կա, չգիտե՞ս...

— Ասում են հազար չորս հարյուր քառասունի, Փառնակն է ասում...

Գարձյալ Փառնակը՝ գլուզի ակադեմիան, հանրագիտարանը, գրքացր, մարգարեն:

— Յույց կտա՞ս...

— Մուժ ա, հետո էլ ես չեմ տեսել:

Տեղ-տեղ՝ իրար միացած, հողի մեջ ընկղմված տապանաքարերը թվում էին պարզապես տուֆարեկորներ, և Լեոնը մտածեց, որ երևի այդպես են գոյացել շատ քարհանքեր, որ հետո կտրում են նորից, դարձնում շենքի կամ գերեզմանի քար, աստիճան կամ աղբյուր: Հիմար մտքեր, որ պարտադիր են գերեզմանատներում, որ հոհում են մարդկանց առօրյա հոգ-



սերի ու կրքերի վրա: Մանավանդ՝ հույսերի: Երևացին նաև նոր շիրմաքարեր՝ իրարից բաժանված մետաղյա ցանկապատերով:

— Էս են, — ասաց Պապիկյանը:

— Ի՞նչը:

— Էրեխների գերեզմանները:

Լեոնը նայեց կողք-կողքի բարձրացած հողաթմբերին, որոնց տակ Հասմիկն ու Սերոբն են: Շիրմաքարերին ծաղիկներ կան, դաշտային պարզ ծաղիկներ, ուրիշ ոչինչ: Եկող տարի երևի տապանաքարեր կլինեն, գյուղի քարտաշը տառասխալով կփորագրի «Աստ հանքչի...», և կշարունակվեն Սերոբի և Հասմիկի շապրած տարիները, կշարունակվեն երկար, կտեեն դարեր, մինչև որ այս գերեզմանատունն էլ կանցնի գետնի տակ, ու հողը կբարանա: Լեոնը քայլեց առաջ: Նոր գերեզմաններն ավելի շուտ վերջացան, իսկ այն կողմ բաց դաշտն էր: Լեոնը հեռվում տեսավ բուլղոզերների մի երկար շարք, հետո ուրիշ մեքենաներ, հետո ֆիննական մի քանի տնակներ, որոնց լուսամուտները ողողված էին էլեկտրականութամբ:

— Ի՞նչ է:

— Փորում են, ատոմային կայան պիտի սարքեն, — ասաց Պապիկյանը, — մի անգամ ես ու նախագահը գնացել ենք, Երևանից էլ մարդիկ էին եկել...

— Էլեկտրակայան, հա՞...

— Ձե՞ռ ես առնում, — նեղացավ Պապիկյանը, — ատոմային ասացի:

— Ի՞նչ տարբերություն կա, որ...

— Ես իմ, մեր ֆիզիկայի դասատուն մի անգամ բացատրեց: Իբր թե դու չգիտե՞ս:

— Փառնակն ի՞նչ է ասում:

— Ասում է Գերմանիայում շատ կար... Պառավները վախենում են, ասում են ոակը դրանից է: Ես ի՞նչ իմանամ, իսկ շրջկումի քարտուղարն ասում էր, թե մեծ պատիվ է շրջանի համար, որ վստահել են: Դու ի՞նչ կասես...

— Ե՛ս, — Լեոնը նայեց մութի մեջ փաթաթված Պապիկյանին, հետևում մնացած գերեզմաններին, հեռվում շարված բուլղոզերներին և ոչինչ չասաց:

Ետ դարձան: Նորից անցան գերեզմանների միջով, հետո գերեզմանների վրայով և լուսավոր պատուհաններով գյուղը

վզաց մի ամբողջ մոլորակ, ուր կորցրել էին ու գտան: Լեոնը հորանջեց այդ մտքից, իսկ Պապիկյանն ասաց.

— Հաց ուտենք, քնենք: Նարդին մնաց:

Ե.

Առավոտյան, երբ գյուղի բեռնատար ավտոմեքենայի մեջ վարորդի կողքին նստած Լեոնը վերադառնում էր շրջկենտրոն, խնդրեց, որ գնան ատոմային կայանի ճանապարհով: Առանձնապես բան չկար. Լեոնը պարզապես մոտիկից տեսավ հողի մեջ խրված բուլղոզերները, տասնյակ ինքնաթափ մեքենաներ և մարդկանց:

— Գյուղ էր, քոչեցրին, — ասաց վարորդը, — մենք էլ երեկ... մարդ եմ ման գալիս տունս ծախեմ:

— Ո՞վ պիտի տունդ առնի, եթե քոչելու եք:

— Ես իմ, Փառնակն ասում է՝ ինչ քոչել, ինչ բան: Ասում է՝ Գերմանիայում՝ մեծ-մեծ քաղաքներում ատոմային կայաններ կան, ես իմ:

Ճանապարհը մնաց լեռան ետևում, վարորդը դարձյալ ինչ-որ բան էր պատմում: Լեոնը ուզում էր հիշել, թե ինչ գուցեի էին Պապիկյանի աչքերը:

Մի մի բան էլ չէր ուզում հիշել Որբան էլ ուրիշ նյութից խոսեր, մտածեր, մեկ է՝ Սերոբն ու Հասմիկը լուռ գալիս էին, խլացնելով մնացած աշխարհը, մնացած ձայները, խլացնելով նույնիսկ լուռությամբ: Ի՞նչ պիտի գրի, ինչպե՞ս, ատոմային կայանի կողքին ինչպե՞ս դնի այս ողբերգական, ծիծաղելի, սենտիմենտալ պատմությունը, որ կարծես Պոռչյանի վեպերից է փախել, ո՞վ կհավատա:

— Գառնիկ, — Գառնիկը բեռնատարի վարորդն էր, — էդ էրեխներ ինչի՞ իրենց սպանեցին, հը՞...

— Ես իմ, — Գառնիկը անթարթ նայում էր ճանապարհին, — խելքները շատ էր:

— Դու սիրած կա՞ս...

— Ազգուշի՞ն...

— Ազգուշն ո՞վ է:

— Կնիկս, ո՞վ:

— Դե... թեկուզ Ազգուշին կամ ուրիշի:



— Չեո ես առնում:

— Ինչի՞:

— Մի անգամ բեռ էի տարել Կրասնոդար: Ի՞նչ աղջիկներ էին: Եղած կա՞ս... Կրասնոդար: Ճաշարանում մեկը կայել էր, պոկ չէր գալիս, հետո ուսերեն էր բլբլացնում, ես էլ... Օլյա էր անունը: Կավ աղջիկ էր: Ինձ ասում է նամակ կգրես, վայ թո տունը շքանդվի:— Հետո շուտ եկավ հանկարծ,— օրինակ, ինչո՞ւ ես հարցնում՝ սիրած կամ թե չէ...

— Չրույց ենք անում, էլի, նեղացա՞ր...

— Չէ, բայց Սերոբը լավ տղա էր: Ասենք, ախր բերանս մի՞ բացի՞ մեր գյուղը պիտի վառես, ավիտբենգին լցնես, վառես:

— Ավիտբենգի՞ն...

Գառնիկը ծիծաղում է.

— Որ շուտ կալի, Կրասնոդարում...

Ճանապարհին կանգնած մեկը ձեռքը բարձրացրեց, Գառնիկն արգելակեց մեքենան.

— Հը...

— Կենտրո՞ն ես գնում:

— Տո տնաշեն, շորս մետր մնաց, ուսերի՞դ ես ափսոսում, թե՞ կոտիս Մելիքովի թոռն ես,— ու քչեց ավտոմեքենան:

— Վերցնեիր,— ասաց Լևոնը,— ինչո՞ւ չվերցրեցիր:

— Հասանք, էլի: Կրասնոդարում... հինգ օր մնացի, հինգ աշխարհ արժեր, մենակ ուսերեն շփտեի, լավ չէր: Դու դատախա՞զ ես, ախպեր:

Լևոնը ծիծաղեց:

— Նմա՞ն եմ:

— Գե որ էդ գործով էիր եկել, էրեխեքի... հը...

— Գատախազ եմ, համարյա թե: Ինձ որ թողնեն, ամբողջ գյուղին դատի կտամ էդ գործով,— Լևոնը հանկարծ նյարդալին լարում զգաց մատներին մեջ, հանկարծ իրոք պատկերացրեց դատարան և մեղադրյալի աթոռին՝ ամբողջ գյուղը, դասատուները, ծնողները, Պապիկյանը, այդ Փառնակ կոչվածը, որ աշխարհի բոլոր հարցերին պատասխան ունի, նույն այս Գառնիկը, որը երևի չի սիրում կնոջը, բայց որը նույնպես երևի մեղադրել է, մատ թափ տվել պատանիների սիրո, այդ ձնծաղիկի վրա, որ ձնծաղիկի կյանք էլ շունեցավ, բուրբին, բուրբին:— Մարսափեյի պատմություն է, ամոթ է:

— Օրինակ, ինչո՞ւ,— Գառնիկը կոպիտ նայեց Լևոնին,— ինչո՞ւ է ամոթ, Երևանի պես ընի, հա՞, աղջիկները, տո մեծ-մեծ կնանիք էնպես են ներկում երեսները: Ոչ նամուս է մնացել, ոչ մեծ, ոչ պուճուր: Երևանի՞ պես ընի...

— Չէ... Կրասնոդարի պես,— թունտ ասաց Լևոնը:

Գառնիկը կուռ տվեց իր պատասխանը, շփոթված նայեց, հետո քթի տակ ասաց.

— Հասնում ենք: Միլիցիայում պիտի իջնե՞ս:

— Չէ, հենց այստեղ, ավտո գտնեմ, Երևան հասնեմ:

Իջավ:

Գառնիկն էլ իջավ, մի քանի վայրկյան կանգնեց անվճար-կան, շիմանալով ինչ անել. գոնե շամադան-բան ունենար էս դատախազը, կիջեցներ, կգներ մայթին, կասեր ծանր է կամ թեթև, կասեր ինչ կա մեջը, թե չէ էսպես...

— Գե լավ, դու մի սպասիր,— ձեռքը մեկնեց Լևոնը,— շնորհակալ եմ: Պապիկյանին կբարևես, Աղգուշին...

— Ավել-պակաս կներես,— ասաց Գառնիկը,— թե մեկ էլ գաս ու ինձ շտեմես, կենդանամ,— ու քչեց մեքենան:

Լևոնը նայեց մեքենայի հետևից, մինչև որ նա թեքվեց ետ ու նորից բռնեց գյուղ տանող ճանապարհը:

## 9.

— Երեկվա՞ աղջիկը,— ասաց հյուրանոցի հերթապահը,— ներկած մազերով, պոռշները քսած... Քո անունը Լևոն հո չի՞...

— Ներկած մազերով, պոռշները քսած... Լևոն է:

— Ինչի՞ ես նեղանում, ախպեր ջան, ինքն ասաց, թե Լևոն անունով մի տղա հարցնի, կասես ժամը շորսին կգամ: Ի՞նչդ ա...

— Նշանածս,— Լևոնը լուրջ-լուրջ նայեց կնոջը,— հավան չե՞ս:

— Իմ հավանելը քեզ ինչ,— կինը երևի վիրավորվեց,— տղես իմ խոսքին շատ ականջ արեց, որ դու... Մի համար տամ, չէ՞, երեկ տեղ չկար, ընդհանուրում քնեց:

— Գրանցված չենք: Թե՞ կարելի է...

— Չէ, ախպեր ջան, գյուղը՝ գյուղ, բայց օրենքն օրենք:

— Գե լավ,— ծիծաղեց Լևոնը,— ժամը շորսին կգամ:



Քալեց դեպի շրջկոմ, կտեսնի Ռուբենին, կխոսեն, մինչև Տաթևիկը դա:

Երեկ առավոտ դեռ չէր տեսել այդ գյուղը, երկու միամիտ գերեզմանները, Պապիկյանին, ուսուցիչներին, վախվորած աշակերտներին, երեկ առավոտ նա դեռ կարող էր վիճել, եթե մեկնում եկը պատմեր նրան այս դեպքը, չէր հավատա: Մի օր է անցել: «Մեզ մեր դարդով թողեք, բալամ,— հառաչեց Սերոբի հայրը,— ինչ եք քրքրում, հիմի էլ աշխարհով մեկ խայտառակվե՞նք»: Գերեզմանատնից գնացին Սերոբենց տուն, Պապիկյանը չէր ուզում, բայց գնացին: Պատին Սերոբի մեծացրած նկարն էր, սև շրջանակի մեջ, սեղանի տակ պայտուսակը՝ դարչնագույն մոմլաթից, կեռնը ձեռք չտվեց, չհանեց գրքերը, չթեթեց տետրերը, ի՞նչ կարիք կաք: Հայրը լուռ ու խոժոռ նստած էր թախտին, մայրը մինչև վերջ էլ չերեաց: Օղի խմեցին մի բաժակ, հայրը նայեց որդու լուսանկարին, ինչոր բան մրմնջաց, Պապիկյանն ասաց՝ ի՞նչ պիտի անես, եղածը եղած է: Կեռնը բառ չգտավ, մի բառ անգամ չգտավ, որ հիմար ու գործածված շինե՞ր՝ որպես ռեստորանի սրբիչ, պարզապես կուլ տվեց անգուլն հեղուկը, և դրա հետ ամեն ինչ, որ մտածում էր ասել: Ինչո՞ւ եկան, ի՞նչ պիտի պարզի, ի՞նչ պիտի խոսի այս փշրված մարդու հետ: «Ձէ, հայրիկ, ի՞նչ խայտառակվել, աստված տար շատերը Սերոբի պես տղա ունենային»: «Սերոբը ոսկի էր, էդ կինոնները, գրքերը որ շինեին, ոսկի էր: Մի կինո բաց չէր թողնում, երկու անգամ էլ ինձ տարավ: Աշխարհը շուտ եկավ, բալամ, շուտ եկավ ու հենց մեր գլխին...»: «Սերոբը վատ բան չի արել, հայրիկ, ախր, ի՞նչ է արել...»: «Բա կինոյում էլ էդքան իրար պաշե՞ն, բա մենք ջահել չե՞նք եղել: Մի՞ խոսեցինք»: Օղի խմեցին: Պապիկյանն ասաց, թե առավոտը գյուղախորհրդի նիստ ունի, Սերոբի հայրը հոնքերի տակից խոժոռ նայեց նախագահին, կեռնին մի բաժակ էլ օղի լցրեց: Ահավոր տխրություն կար այդ անիմաստ խոսակցության մեջ, կեռնը հանկարծ զզվանքով մտածեց իր գործի, իր կյանքի, թեթի մասին, որտեղ ուրիշ-ուրիշ ծախսում է կյանքը, որ, վերջին հաշվով, վիճակախաղով շահած մի դուժար է: Վեր կացավ: Ուզեց միայն հիշել այս տունը, պատերը, առաստաղը, մահճակալները՝ ասեղնագործ բարձերով, ուրիշ ոչինչ:

Հասմիկենց տուն շգնացին:

Մինչև կեսգիշեր թափառեց գյուղի փողոցներով և եթե շնորք կարողանային լռել, կկարծեր գերեզմանոցում է: Ահավոր տխրություն կար գյուղի լուսության մեջ, որ կեռնն այնպես սիրում էր ընդամենը մեկ օր առաջ:

— Ընկեր նահապետայ՞նը, զբաղված է,— ասաց քարտուղարուհին:

— Կսպասեմ:

Ընդունարանի լուսամուտից երևում էր բնակելի տան մի պատշգամբ, որտեղ երկու տղամարդ նստած նարդի էին խաղում: Քարտուղարուհին շատ ջահել աղջիկ էր և ուզում էր ջահել չերեար: Նա աչքի տակով նայում էր կեռնին, և կեռնը դա տեսնում էր: Կեռնին, չգիտես ինչու, թվաց, որ նա շատ նման պիտի լինի Հասմիկին:

— Շուտ չի՞ ազատվի ընկեր նահապետայանը,— նահապետայանի վրա մտքում ծիծաղեց, որովհետև դա Ռուբենի ազգանունն էր,— ես շատ եմ շտապում:

Աղջիկը թոթվեց ուսերը:

Այսինքն, ես ի՞նչ անեմ:

— Քանի տարեկան կլինեք, օրիորդ:

Աղջիկը, թվում է՝ զարմացավ, բայց շատ հանդիստ ժպտաց.

— Իսկ քանի՞ կլինեմ:

— Տասնյոթ-տասնութ:

— Տասնյոթ:

— Կավ տարիք է:

— Բոլորն էլ տասնյոթ տարեկան լինում են:

Կեռնը հիշեց. «Տասնյոթ տարեկան լինեի, ու այդ տարին չվերջանար»: Որտե՞ղ է լսել, թե՞ կարդացել է: Ի՞նչ մադնիս կա այդ տարիքի մեջ: Հետո զգաց, որ ձանձրանում է արդեն, բայց պիտի սպասեր, Ռուբենը կնեղանա, եթե իմանա, որ եկել է ու չի հանդիսել: Ինչ-որ տխրություն սողոսկեց սիրտը: Ոչ, չհիշեց, թե երբ էր ինքը տասնյոթ տարեկան ու չէր ուզի, ի՞հարկեք, որ այդ տարին չվերջանար, լավ էր, որ վերջացավ: Ոչ, դա չհիշեց, ոչինչ չհիշեց, պարզապես տասնյոթ տարեկան ազգիկաներկայությունը անսխալ հուշարար էր, որ ինքն արդեն երեսունչորս տարեկան է: Երևի այս տարիքում էլ դեռ կարելի է ասել. «... Եվ այդ տարին չվերջանար»: Հետո դարձյալ հիշեց Սերոբին, Հասմիկին: Հանեց սիգարետը:

— Կարելի՞ է:



— Իճարկե, — կարմրեց աղջիկը. երևի նրա թույլավութունը առաջին անգամ էին հարցնում, — Իճարկե:

— Անունդ կարելի՞ է իմանալ, թե չէ անհարմար է՝ խոսում ենք ու... իմ անունը կոն է:

— Հեղինե:

— Հեղինե, դու լսե՞լ ես ինքնասպանության մասին: Ի՞նչ կասես:

Աղջիկը նայեց կոնին. բաց կապույտ աչքեր ուներ Հեղինեն, իսկ այն երկուսը եղան տասնյոթ և այդ տարին երբեք չի վերջանա: Ի՞նչ տարբերություն ապրած և չապրած տարիների մեջ, ի՞նչ տարբերություն այս օգի, ծաղիկների, ջրերի, փողոցների ու աշխարհի համար՝ դո՞ւ ես, թե՞ մեկ ուրիշը: Հեղինեի բաց կապույտ աչքերում հարցականներ չկային, նա երևի դեռ չէր սովորել նայել ստոր բաների, ինչպես և նրանք, այն երկուսը չսովորեցին: Հեղինեն կսովորի նայել, կսովորի կկոցել աչքերը, խոսելիս ուրիշ կողմ նայել, հետո կսովորի նայել ու ստել: Կսովորի, իսկ այն երկուսը, որոնց տասնյոթ տարին չի վերջանա, այլևս ոչինչ չեն սովորի: Կոնը կարծես մոռացել էր հարցը:

— Կե՛լ եմ, — ասաց Հեղինեն, — իսկ Սերոբին ճանաչում էի, միասին Երևան ենք գնացել, պարում էինք նույն խմբում: Չէի հավատում, ամբողջ գիշեր չքնեցի...

— Ինչի՞ն չէիր հավատում:

— Չգիտեմ, չգիտեմ:

Ջանդ:

Հեղինեն վեր թռավ տեղից, ուղղեց մազերը:

— Ի՞նչ ասեմ ձեր մասին:

— Ասա պարզապես, որ եկել է կոնը, դպրոցում միասին ենք սովորել:

«...Տասնյոթ տարեկան լինելի և այդ տարին չվերջանալու: Համալսարանի առաջին կուրսում, դեռ տասնյոթ տարեկան էր, կոմերիտությունից հեռացրեցին մեկին, որ Ստալինին ծափահարելիս ոտքի չէր կանգնել: Ինքը՝ կոնը ևս կոմիտեի անդամ էր, ինքն էլ բվեարկեց: Տղան, որ ծափահարելիս չէր կանգնել, մի ոտք շունեք, բայց մյուսը հո կա՞ր... Եկավ ինչ-որ մեկը, հավաքեց կոմիտեն, ներսից փակեց դուռը, ղեկուցեց: Կենդրոջ էր անունը. նրա, այն տղայի, որին հեռացրին: Կենդրոջ, այսինքն լենինյան դրոշ: Կոմիտեի անդամները, իր նման ջահել տղա-

ներ, միայն մեկն էր աղջիկ, նստել էին գլխահակ, ասես մեղադրյալներ էին, և խոսում էր նա՝ քաղաքացիական շորերով զինվորականը: Այն ժամանակ, թվում է, սիրում էր Ստալինին, ոտանավորներ էր գրում նրա մասին, կարդում բեմից, բայց ախր կենդրոջը մի ոտք շունեք, իսկ այդ օրը շատ անգամ ծափահարեցին, ամեն անգամ ոտքի վրա, երևի տղան պարզապես հոգնել էր: Ոչ որ չբվեարկեց՝ ոչ կողմ, ոչ դեմ, ամփոփեց նա՝ անծանոթը. «Հասկանալի է, որ դուք ամենքդ համակարծիք եք, որ նման մարդիկ տեղ չպիտի ունենան մեր փառապանծ կոմերիտությունից մեջ, մանավանդ, որ նրա հայրն էլ 1937 թվականին...»: Ոչ որ չբվեարկեց, բայց և ոչ որ ծպտուն շահանեց, իսկ մի քանի ամիս անց կենդրոջին տարան: Վերադարձավ նա հիսուներորս թվականին, և կոնը երբեք չկարողացավ նայել նրա աչքերին, հանդիպել, խոսել:

Ինչո՞ւ է ուշանում Հեղինեն:

Պատշգամբում այն զույգը դեռ նարդի է շրխկացնում, և սարսափելի տխրություն կար այդ շրխկոցի մեջ, ինչպես՝ առաջին անգամ թափվող ձյան: Կոնը հանկարծ հիշեց երևանյան իր սենյակը, ինչո՞ւ հիշեց: Չէ, սենտիմենտալ է դառնում, պիտի շուտ փախչել այստեղից, այս պատմությունից, պիտի կրճատել մտածելու ժամանակը: Կհավաքվեն տղաներով, կծիծաղեն, կվերհիշեն, կսմեն, կմոռանան դիրք, պաշտոն, հաջողություն, անհաջողություն, բոլորն էլ կարոտում են բնական վիճակների, ամենքին էլ հրեի ճնշում են պայմանականությունները, ձևանալը: Կավ կիրակի կլինի: Հետո կքնի մի երկու օր: Հիշեց Հակոբի խոսքերը. «Եմել և քնել — երկուսն էլ փախուստ են կյանքից: Երկրորդն ավելի է ծան է նստում. դա է տարբերությունը»: Փիլիսոփայում են նրանք, որ շեն կարողանում ապրել, Հակոբն այդպիսին էր: Սենյակի գույները այս տարի պիտի փոխել, զզվել է: Երեկոյան տանը կլինի, կքնի: Ինչո՞ւ է ուշանում Հեղինեն:

Դուռը աղմուկով բացվեց:

— Վա՛յ, ես քո մարդ ասողին, — շեմին Ռուբենն էր, — եկել է ու նստել, տո, դու շե՞ս ամաչում, — մոտեցավ, զրկեց կոնին, ամուր համբուրեց, — էս աղջիկն էլ նոր է ասում...

Հեղինեն մեղավոր կանգնել էր պատի տակ:

— Ինչ կա որ, — ասաց կոնը, — Հեղինեի հետ զրուցում էինք, ո՞նց ես...



Ներս մտան: Սենյակում շորս-հինգ մարդ կար: Ռուբենը ներկայացրեց.

— Դպրոցական ընկերս է, նշանավոր ժուռնալիստ, ատամի տակ շնկնեք, հա,— հետո նստեց իր տեղը,— հիմա կտոն ջան, մի երկու րոպեից:— Հետո դարձավ մյուսներին,— պա՞րզ է ինչ պիտի անեք...

Կտոնը Ռուբենի սենյակում մի քանի փոփոխություն տեսավ. մի հեռախոս էր ավելացել, գրասեղանը նոր էր, ավելի ժամանակակից ձևերով, լուսամտի տակ ֆիկուսի մի վիթխարի ծառ կար: Ռուբենը քիչ գիրացել էր, հոգնած էր երևում, երևի խմել էր նախորդ գիշերը: Քնքշությամբ նայեց ընկերոջը, ծխել ուզեց, վեր կացավ՝ մոտեցավ լուսամտին. այն զույգը դեռ նարդի էր խաղում: Պատշգամբն այստեղից ավելի մոտիկ էր, և կտոնը տեսավ նրանց լարված, ոգևորված դեմքերը: Նախանձեց. հիմա նրանք ոչնչի մասին չեն մտածում, այդպես լավ է:

Ռուբենը ճանապարհեց այն շորսին:

— Ես այստեղ չեմ,— ասաց Հեղինենին,— երկու բաժակ սուրճ ու հանքային ջուր բեր:— Մոտեցավ, նստեց կտոնի մոտ,— նամակդ ստացել եմ:

— Հո գործ-բան չունես, կգա՞ս...

— Կարծում եմ, որ կգամ, եթե, ո՞վ գիտե...

— Ոչ մի «ով գիտե»: Ո՞նց ես:

— Է՛,— Ռուբենը հոգնած թափ տվեց ձեռքը,— գժվար է Դո՞ւ ինչ ես անում, խեղ լինի...

— Դե ես ինչ, փոքր մարդ եմ, հողված-բան եմ գրում, քեզ-նից ասա:

— Ինչո՞ւ ես եկել...

Ասաց:

— Հա,— Ռուբենը հանկարծ լքջացավ, թե՛ կտոնին թվաց,— գրելո՞ւ ես:

— Չգիտեմ, անհավատալի պատմություն է, դու ի՞նչ կասես:

— Ինձ գեկուցեցին: Պիտի գրես, հա՞:

— Երևի չեն տալի: Երևի չկարողանամ էլ գրել:

— Կսիր, չե՞ս պսակվել,— հանկարծ հարցրեց Ռուբենը, նա երևի ինչ-որ բանի մասին էր մտածում, որ ոչ մի կապ չունեք այդ հարցի հետ, նա ուզում էր շարունակել մտածել այդ ինչ-որ բանի մասին և ուզում էր, որ կտոնը խոսի, պատմի: Կտոնը դա

հասկացավ, քսան տարվա ընկերներ էին, հասկացավ:

— Չեմ պսակվել, պսակվեի, գոնե կիմանայիր, երբորս գործերը լավ չեն, մի խոսքով: Ասում եմ, որ հավաքվեք, քաղաքից դուրս գանք, զզվել ենք «Արմենիա» սեստորանից. բոլոր մատուցողների անունները գիտեմ, գուցե էս կողմերը գանք, Սեան կամ մի ուրիշ խուլ տեղ, ավելի լավ կլինի...

Ռուբենը վերջապես աղատվեց իր գաղտնի մտքերից, ժպիտով նայեց կտոնին, սիրով նայեց, նայեց՝ ինչպես փոքր եղբորը, հետո ասաց.

— Չորս տարով մեծ եմ քեզանից:

— Երեք տարի հինգ ամսով,— ճշտեց կտոնը,— պարծենալու բան չի:

— Մեծանում ենք,— ասաց Ռուբենը,— ձեր թերթում էիք տպել, չե՞. «Ծերանում ենք, Պարույր Սևակ, ծերանում ենք, սիրելիս, հասակակից կանանց արդեն մենք նայում ենք եղբոր պես...»: Դո՞ւք էիք տպել:

— Չե՛,— ասաց կտոնը,— հույս չունեմ, թե կանանց դու երբեք եղբոր պես նայես, ութսուն տարեկանում, հասակակից-ներիդ, գուցե...

Ծիծաղեցին:

Հեղինեն սուրճ և հանքային ջուր բերեց: Ռուբենը սառնարանից հանեց կոնյակի կիսատ շիշը, լցրեց երկու բաժակ: Խմեցին լուռ, կտոնը նայեց ժամացույցին:

— Ես սլիտի գնամ,— ասաց,— կհանդիպենք մի քանի օր հետո, կխոսենք: Գնամ:— Մի բաժակ էլ լցրեց, խմեցին:

— Ինչո՞ւ ես շտապում:

— Սպասող կա, մի աղջիկ, ավտոբուսում ծանոթացանք:

— Օհո՞:

— Իզուր է օհո-դ, պարզապես միասին եկանք Երևանից:

— Վատ սկիզբ չէ: Դե, չեմ պնդում, եթե այդպես է,— նայեցին իրար, Ռուբենը հանկարծ հիշեց,— ասում ես եղբորդ գործերը լավ չեն, ի՞նչ է եղել:

— Ոչինչ,— ասաց կտոնը,— դե նրան գիտես էլի, վահրամին:

— Դաա՞,— ասաց Ռուբենը,— եթե կարող եմ որևէ բանով օգնել, ասա՛:

— Շնորհակալ եմ: Գնամ: Աշխատիք անպայման գալ կիրակի օրը:



— Կգամ,— հետո հանկարծ,— պիտի գրես, հա՞, այդ  
ինքնասպանութեան մասին...

— Չգիտեմ:

Դռների մեջ, կիսախավարում, Սերոբի հայրն ասաց. «Կրո-  
չեմ ես էս գլուղից, կգնամ: Հերս Բիթլիսից էր, կքոչեմ: Մի  
քիչ անցնի, տարին անեմ, քար դնեմ: Մնամ՝ որ ի՞նչ...»: Լեռնը  
սեղմեց նրա ձեռքը, ասես մի կտոր շիշոտ քար առավ մատ-  
ների մեջ, իսկ սեղանի տակ Սերոբի պայուսակն էր: «Հավը  
տապակած ես սիրում, թե՞ խաշած»,— արդեն փողոցում էին,  
երբ հարցրեց Պապիկյանը:

Ի.

Տաթևիկը ոչ մի բաժակ չիմեց: Տխուր էր: Իսկ Լեռնը խմել  
էր շշի ամբողջ կոնյակը, բայց դրանից առավոտվա տխուր-  
թյունը ավելի էր խտացել: Տաթևիկի լավ սանրված մազերը,  
բրդյա գործված զգեստի մեջ սեղմված մարմինը մի տեսակ  
օտար էր շրջակենտրոնի ճաշարանի ֆոնին՝ անճաշակ սփռոցների,  
չսափրված մատուցողի և թուրքական մեղրածոր երգերի հարե-  
վանութեամբ, որ անընդհատ արտադրվում էր ինչ-որ տեղ  
Քաբըրած ուղիուլայից:

Լեռնն արդեն երրորդ անգամ էր հարցնում:

— Ուրիշ երգեր չունե՞ք:

Ու արդեն երրորդ անգամ լսում էր բուֆետայանի պատաս-  
խանը.

— Չէ, խնայե՛ր ջան, թե ցուրդ չի գալիս, ձեներ կտրեմ...

— Չէ, ոչինչ,— երրորդ անգամ էլ ասաց Լեռնը,— անունդ  
ի՞նչ է:

— Արմեն, բայց տղերքը Բարմեն են ասում:

— Բարմեն՞ն...

— Տո հա, անցած աշնանն էր՝ տուրիստներ էին եկել, հաց  
կերան, մեկը մոտեցավ ինձ, թե՛ բարմեն, ու ձեռով-նտով ինչ-  
որ բան էր հասկացնում: Գլխի ընկա, որ դանակ է ուզում, բայց  
անո՞ւնս որտեղից իմացավ: Գանակը տվի, ասում եմ իմ  
անունը Բարմեն չէ, Արմեն է: Սա ձեռքերը թափ տվեց, կան-  
չեց թարգմանչին: Մի հայ տղա էր, ասացի՝ էսպես ու էսպես: Սա,  
փոխանակ մի բան ասի, սկսեց ծիծաղել, հետո իրենց լեզվով ինչ-

որ բան ասաց էդ տուրիստին, սա էլ սկսեց ծիծաղել: Կարմրել  
եմ, մնացել տեղս: Մտածում եմ՝ ախր, ես ի՞նչ ասացի: Հետո  
էդ տուրիստը իրենց սեղանին մոտեցավ, երևի պատմեց, ինձ  
ցույց տալով: Սրանք էլ սկսեցին ծիծաղել: Չհամբերեցի, էդ  
հայ տղին ասում եմ՝ արա, բա զու թասիք չունե՞ս, էդ շուն-  
շանորդիներին մոտ ինձ խայտառակ ես անում, բա զու հայ չե՞ս:  
Սա, թե՛ մի նեղանա, բան չկա: Ու բացատրեց, որ էդ տուրիստ-  
ների երկրում, կարծեմ Բելգիայից էին եկել, հա, էդ տուրիստ-  
ների երկրում՝ բուֆետչիկին բարմեն են ասում, իսկ ես կար-  
ծել էի, թե էդ դարիք տղան անունս իմացել էր: Ինչ երկարաց-  
նեմ, մեր տղերքի բերանն ընկավ, հիմի սաղ շրջանն ինձ Բարմեն  
է ասում: Մի բաժակ չիմե՞նք...

— Խմենք, Բարմեն ջան, քո մասին գրելու եմ:

— Ի՞նչ ես գրելու:

— Թերթում, հը՞: Թող հիմա էլ ամբողջ Հայաստանը իմա-  
նա: Հը՞...

— Ախպոր պես, կնեղանամ, թե գրես:

— Կատակ եմ անում,— հանգստացրեց Լեռնը,— խմենք:

— Բա ինչի՞ չի խմում,— զլխով Տաթևիկին ցույց տվեց,  
հետո վեր կացավ տեղից, գնաց բուֆետ և ինչ-որ շիշ առած  
եկավ,— իտալական գինի է: Երկու օր առաջ էլի տուրիստներ  
էին եկել, մի լավ աղջիկ կար,— հետո շուտ եկավ Տաթևիկին,—  
քոջիցս լավը չիինի, հա, էդ աղջկան մի շիշ կոնյակ նվիրեցի,  
նա էլ էս գինին: Կնեղանամ, եթե չսամի...

Լեռնը ձեռքն առավ ուռուցիկ շիշը, որ հազցրած էր ծղո-  
տե պատյանի մեջ, մի ակնթարթ հիշեց Իտալիան, հետո ասաց  
Տաթևիկին.

— Շատ թույլ գինի է, կիմե՞ս:

— Կնեղանամ,— համառեց Բարմենը:

— Դե լավ:

Լեռնը լցրեց Տաթևիկի բաժակը:

— Մենք կոնյակ կիմենք,— իրենց բաժակներն էլ լցրեց:  
Խմեցին:

— Դե տար պահիր,— իտալական գինու շիշը մեկնելով  
ասաց Լեռնը,— շնորհակալ ենք:

— Շնորհակալ եմ,— ասաց Տաթևիկը:

Բարմենը վերցրեց շիշը, գնաց: Թուրքական երգը վերջա-



ցել էր, ուղիղուն անտեղի դզում էր, և դա ավելի լավ երա-  
ժըշտութունն թվաց Լեոնին:

— Չեմ մնա,— ասաց Տաթևիկը,— դու պատկերացնո՞ւմ  
ես, կինո անգամ չկա, բազմիք չկա, պիտի ապրեմ ինչ-որ մեկի  
տանը, ձմեռը ամառ են վառում, էլեկտրականություն տալիս  
են երեկոյան ութից, դիրեկտորի անունը Ազարեկ է:

— Սարսափելի է,— ասաց Լեոնը:

— Ի՞նչը:

— Որ գլխակտորի անունը Ազարեկ է:

Տաթևիկը ծիծաղեց:

— Գիտես,— ասաց Լեոնը,— եթե քո զգեստից մի թիւ քան-  
դեմ ու քաշեմ, մի քանի ընդհանուր կամերիկացիներ, հը՞...

— Յիներկ:

— Գե ես հետո կլինեմ, քանի՞ կիրմեար թիւ կա վրադ:  
Թե՛ղ որ քաշեմ, ես պիտի հեռանամ, չէ՞: Վտանգ չկա: Մնաց  
Բարմենը...

Միծաղեցին: Տաթևիկը հրաշալի ատամներ ուներ և հաճույ-  
քով էր ծիծաղում: Երբ տխրում էր, փոքրիկ, խոռովկան աղ-  
ջկա էր նման, և Լեոնը անբացատրելի շոգ էր զգում այդ պա-  
հերին: Աղջիկն արդեն մի քանի անգամ պատմել էր, թե ինչ-  
պես են իրեն ընդունել դպրոցում, պատմել էր իր առաջին դասի  
մասին, ինչ-որ ուրախություն էլ կար այդ պատմածների մեջ,  
Լեոնը դա կուսում էր. առաջին դաս, առաջին աշակերտներ...

— Ես շուտ-շուտ կգամ:

— Չես դա և հետո՞ ի՞նչ պիտի փոխվի դրանից:

— Նշանում եմ,— կոնյակն արդեն վառվում էր Լեոնի  
Ներսում, իսկ Տաթևիկը գեղեցկանում էր ընդհանուր ընդհանուր,  
ուրեմն իմ գալը ոչ մի նշանակություն չունի, հը՞...

Գրսում երեկո էր, հարկավոր էր վեր կենալ: Կգնա՞ թողած  
այն միամիտ գերեզմանները, Պապիկյանին, Բարմենին, որ  
իրոք լավ աղա է, Տաթևիկին, որին կյանքը վերջացած է թվում,  
բայց քիչ-քիչ կսովորի և ուշ լողանալուն, և ամառի ջերմու-  
թյանը, ամեն ինչին: Կտուրի: Չի՞ սովորի: Ես կգա քա-  
ղաք: Ոչինչ չի փոխվի դրանից աշխարհում: Չի փոխվի, միայն  
ավելի կթանձրանա տխրությունը, ուրիշ ոչինչ: Խմեց մի բա-  
ժակ էլ: Գուցե այդպես կարելի էր խեղդել մենակությունը,  
որ տանը հավատարիմ սպասում է իրեն՝ դեղին պատերի մեջ,  
հեռախոսի, չհավաքած մահճակալի, մազնիտաֆոնի, ամբողջի

վրա գցած շորերի տեսքով: Այսքան բարի ու ջերմ չնայել  
Տաթևիկը, հեշտ կլինեի, կգնալին հյուրանոց, մի քիչ էլ կխմեին,  
կյանքը հնարավոր ու պարզ կդառնար, կհամբուրվեին, կթվար,  
թե սիրեցին հենց առաջին ընդհանրություն, ավտոբուսում, երբ Շատը  
կանչում էր իր Բզարեկին...

— Ինձ կճանապարհե՞ս, Տաթևիկ:

— Արդե՞ս,— աղջկա ձայնը չկարողացավ քողարկել տաղ-  
նապը,— իհարկե կճանապարհեմ:

Լեոնը մտեցավ Բարմենին, վճարեց:

— Ես գնում եմ,— ասաց,— Տաթևիկը մեկ-մեկ կգա, լավ  
կհայես:

— Աչքիս վրա,— Բարմենի շատերով գեմքին հայտնու-  
թյուն թրթռաց,— աչքիս վրա,— բորոջս պես կհայեմ, ապահով  
գնա, բայց չգրես...

Գրսում Տաթևիկը թեանցուկ արեց Լեոնին: Քայլեցին դան-  
դաղ, միևնույն խաշմերուկ, որը նրանց պիտի բաժաներ:

— Շաբաթ օրը որ գամ, կզանդահարեմ,— ասաց Տաթևիկը:

— Կիրակի տանը չեմ լինի,— ասաց Լեոնը:

— Գա-ա,— ծոր տվեց խմբագիրը,— անհավատալի բաներ  
ես պատմում: Մեր օրերում՝ զարմանալի է, չգիտեմ ինչ ստեմ:  
Գրելո՞ւ ես...

— Իհարկե,— ասաց Լեոնը,— այնտեղ կասկածում էի,  
բայց հիմա... Շատ եմ մտածել: Երիտասարդական թերթ  
մենք էլ չգրենք, ո՞վ պիտի գրի:

Խմբագիրը ծխում էր, առհասարակ նա չէր ծխում՝ միայն  
բարկացած ընդհանրին կամ տպարանում: Նրա գեմքին նույն  
հոգնությունն էր, և Լեոնը խղճաց նրան:

— Չգրե՞մ...

Խմբագիրը վեր թռավ տեղից վախեցած, սաես մեկը հան-  
կարծ կարողաց նրա թաքուն մտքերը:

— Ինչո՞ւ, ո՞վ ասաց. էլի մտքովդ անցավ չէ՞, որ վախե-  
նում եմ, չեմ տպի: Միայն դուք եք քաջը: Ոչ ընտանիք ունեք,  
ոչ հոգս, ոչ արյան ճնշում...

— Ի՞նչ կապ ունի արյան ճնշումը...

— Հենց էնպես,— խմբագիրը հաշտված ու անտարբեր նա-  
յեց Լեոնին,— ոչ մի կապ չունի: Ես ուղղակի մտածում եմ.  
ախր, ինչպե՞ս կհամատեղվի այդ ինքնասպանությունը մեր



այսօրվա հետ, մեր երիտասարդութեան, որ հրաշքներ է անում: Գու էլ պիտի մտածես: Ինչպե՞ս կհամատեղես, հր...  
— Կյանքը, ինչպես տեսնում ես, համատեղում է,— շոր ասաց Լեոնը:

— Կյանքը, կյանքը, ի՞նչ ես հասկանում դու կյանքից...

— ... Ոչ պատերազմ ես տեսել,— քմծիծաղով շարունակեց Լեոնը,— այս ես ուզում ասել, չէ՞: Ոչ պատերազմ, ոչ սով, ոչ երեսունյոթ թիվ. ոչինչ չեմ տեսել քո կարծիքով: Տեսել եմ: Երեսունյոթին եղբորս տարան, տասնութ տարեկան էր, պատերազմի ժամանակ և սով եմ տեսել, և ամեն ինչ, հետո կիրմետրերով ոտանավոր եմ գրել Ստալինի մասին, հետո շորս օր լաց եմ եղել, երբ նա մեռավ: Շատ բան եմ տեսել...

Սենյակում մակարդված լուսթյուն էր՝ ինչպես ճակատամարտից առաջ, ինչպես ճակատամարտից հետո: Լեոնն ամսասաց, որ տաքացավ, հանկարծ թուլություն իջավ վրան, քնեց, մի քանի օր անընդհատ քնեց: Խմբագիրը ինչ-որ բան էր խզվզում ապակու վրա դրված թղթին, փշրված էր երևում:

— Ախր հասկացիր ինձ,— ի վերջո ասաց նա,— և մի բորբոքվիր. եկել, ամբողջ գլուղին ես մեղադրում, բոլոր ուսուցիչներին, այդ դեռ ոչինչ. հերոսներ ես ուզում սարքել այդ թուլամորթներին: Երեսունյոթ թիվ, Ստալին: Փոշմանն՝ էլ ես, որ հավատացել ես, հր...

— Հավատը պարտք տված փող չի, որ փոշմանեմ:

— Տեսնո՞ւմ ես: Հիմա ինչի՞ն ես հավատում, հիմա:

— Հիմա՞. երկրին, ժողովրդին, արդարությունը,— Լեոնը զզվեց իր վերամբարձ տոնից, զզվեց իրար սիրտ թափանցելու այս ծիծաղելի ճիգերից, բայց մեջն արդեն արթնացել էր դեր,— դու, ահա, պարծենում ես, որ պատերազմ ես տեսել, քո սերնդով ես պարծենում: Շատերը տուն չեկան, գիտեմ, շատերը եկան՝ կորցրած ոտք, ձեռք, առողջություն, իսկ մենք, մեր սերունդն ահա՛ բոլորս առողջ ենք, կուշտ: Բայց նայեցի՞ք մեր ներքը, փորձեցի՞ք հասկանալ, թե մենք ի՞նչ կորցրինք: Չի երևում, դա կտրված ստք չի, դրա համար թողակ չեն տալիս, տրամվայում տեղ չեն զիջում: Է՛... — Լեոնը ձեռքը թափ տվեց, հանկարծ հիշեց Տաթևիկին, որին ինքն էր փորձում դատարարակել մի օր առաջ, գավառական սրճարանում,— շեղվեցինք: Հիմա ի՞նչ ես ասում:

— Ինչ պիտի ասեմ, զրի՛ր, տեսնենք: Համենայն դեպս, գոնե

մեկ-երկու բառով, որ դա թուլություն էր, որ նրանք չպիտի անեին, որ...

— Մայակովսկին, օրինակ, թո՛ւյլ մարդ էր:

— Մայակովսկի՞ն, ցնդել ես, ի՞նչ է...

— Նա էլ ինքնասպան եղավ, կարող ես կարգալ ուս գրականության ուղած դասագրքում:

— Հետո ինչ:

— Թուլություն բռնի համար ասացի: Ուրիշ օրինակներ էլ կարող եմ բերել:

Խմբագիրը ոչինչ չասաց: Մի քանի վայրկյան նրանք լուռ նայում էին իրար: Խմբագրին ամեն ինչ հոգնեցրել էր արդեն: Լեոնն էլ ուղած տեղում կարող էր վերջակետ դնել: Նա այս խոսակցությունը դիտեր զեռնա այնտեղ, գյուղում, մտքի մեջ կրկնում էր ճանապարհին, ոչինչ նոր չէր: Ասես շախմատի հայտնի պարտիա, որի բոլոր քայլերը դիտեր նախօրոք: Ի՞նչ է ուզում այս մարդուց, որ սմբել է բազկաթոռին: Նա չէ՞ որ իր դերն է խաղում կատակերգության մեջ, որ պարզապես շատ է երկար, ուրիշ ոչինչ: Չյուն ինքն՝ արծակ ու փափուկ լուսթյուն, շինե՛ր ապրած տարիների բեռը, չզգար... Չզգար: Լեոնին հաճախ թվում էր, որ մարդը կենդանիներից տարբերվում է ոչ թե մտածելու, այլ զգալու ընդունակությամբ: Չզգալ՝ այսինքն, շտիբել, շապասել, շատել, շտիբել, շնուսահատվել, շափստալ: Սարսափելի կլինե՛ր: Ով գիտե, շատ կենդանիների գուցե մտածում են, օրինակ, դեկֆինները, բայց իսկապես զգալ միայն մարդն է ընդունակ: Լեոնը հոգնեց այս տարօրինակ փրիստիպությունից, հիշեց, որ երեկոյան խոսատացել է զանգահարել Տաթևիկը, հիշեց, որ այդ օրը հինգշաբթի է, իսկ կիրակի առավոտյան պիտի հանդիպեն տղաներով: Նայեց խմբագրին՝ ինչպես կնայեր ինքն իրեն, խզճաց, ինչպես կխոճար ինքն իրեն: Մենք նույն կատակերգության գործող անձեր ենք,— մտածեց,— ես էլ, դու էլ: Այդ միտքը տհաճ էր, ավելի լավ էր կռվել, հայհոյել: Երկու տարի առաջ, Սիբիրում, ծանոթացավ մի ուս տղայի, ոտանավորներ էր գրում, զարմանալի տղեր կային. «Մարդիկ ուներով պահում են երկինքը, որ չփլչի, ես ինչպե՞ս հեռացնեմ ուտեքս»: Մոտավորապես է հիշում, բայց ինչ-որ բան կար՝ միամիտ ու զարմացած, երեկ դա հենց հավատն է: Չկռվել, հաշտվել նույնպես նշանակում է հանել



ուսերգ այդ երկնքի տակից, որի պարզ անունը, հավանորեն, կյանք է:

— Գրիր, — ի վերջո ասաց խմբագիրը, — տեսնենք ոնց կատարվի, էն կոնյակից ունե՞ս:

— Ֆրանսիական:

— Հա: Լավն էր, նապոլեոնի նկարով, հիշում եմ:

— Չկա: Վիսկի ունեմ, շոտլանդական:

— Մենակ չես:

— Դե լավ, գնացի:

Նախասենյակում քարտուղարուհին ասաց.

— Տուն զանգահարեք:

— Տո՞ւն:

— Ձեր եղբոր կինն էր, ասաց, որ անմիջապես զանգահարեք:

Հավաքեց համարը:

— Հասմի՞կ:

— Լեոն, վահրամին հիվանդանոց տարանք: Կարո՞ղ ես գալ:

Ք.

Երեկոյան զանգահարեց Տաթևիկը: Ասաց, որ շաբաթ օրը կգա, որ երկու անգամ ճաշել է Բարմինի մոտ, կարոտել է «Կուռնի» սրճարանին: Խոսակցությունը ընդհատեցին, կիսատ մնաց, հետո եկավ Աշոտը: Այնպես արգեն հանձնել է փրկիստիությունյան քննությունը և Աշոտին առժամանակ ազատել երեկոյան հոգսերից: Խոսեցին վահրամի հիվանդանոցյան մասին, Աշոտը բժիշկ է, նույն հիվանդանոցում, որտեղ վահրամն է: Դեռ ոչինչ պարզ չէ, վազը, մյուս օրը: Խմեցին մի-մի բաժակ վիսկի, Լեոնը հիշեց խմբագիրին:

— Նախանձում եմ քեզ, — ասաց Աշոտը:

Բոլոր ամուսնացածներին թվում է, թե շամուսնացածները երջանիկ են:

— Բաժանվիր, — հանդիստ ասաց Լեոնը:

— Գժվե՞լ ես...

— Ուրիշ ի՞նչ:

— Կամուսնանաս, հետո կտեսնես:

— Չեմ ամուսնանա:

Խմեցին:

Հանկարծ վախեցավ վահրամի համար: Մի օր առաջ, հենց երեկ, այդ զրացումն անձանոթ էր, ապրում էր՝ ամիսներով շահանկով եղբորը, մորը, մյուս ազգականներին: Թվում էր՝ կարող է այդպես ապրել ամբողջ կյանքը:

— Լսիր, վախենում եմ վահրամի համար, հր...  
Աշոտը ոչինչ չասաց, նա դանդաղ խմում էր վիսկին և ուրախ էր ինչ-որ բանից: Վիսկին դառն էր ու անսովոր:

— Չէ, բան չկա: Իսկ շաբաթ օրը ավելի որոշակի կիմանանք վիճակը: Միրտը ինչպե՞ս է, չէ՞ր բողբոսում:

— Բողբոսում էր մեկ-մեկ: — Հիշեց, որ մեկ-մեկ է տեսել եղբորը, ուրիշ ի՞նչ կարող է իմանալ, — դժվար կյանք է ունեցել:

— Գիտեմ, պատմել ես: Լսիր, բան էիր գրում չէ՞ բժիշկ Արմենյանի մասին: Երեկ հարցնում էր:

— Գրեցի, չտպեցին: Առհասարակ իմ գրածները չեն տրպվում:

— Սերունդները կտպեն, — ծիծաղեց Աշոտը, — իսկ ինչո՞ւ չտպեցին:

— Երկար պատմություն է:

Նորից զանգահարեց Տաթևիկը:

— Հանկարծ անջատվեց, — Տաթևիկի ձայնը ծղրտուն էր, մանկական, նա երևի գոռում էր խոսափողի ականջին, որ Լեոնը կարողանա լսել: Լեոնը հանկարծ մտածեց, որ նա այլևս բան չունի ասելու, տխրեց ազգյա համար, որ բան չունի ասելու, բայց երևի ահագին կովի է հեռախոսավարուհու հետ մինչև միացրել են նորից:

— Կարոտել եմ, — ասաց Լեոնը:

— Ո՞վ է, — շարունակում էր զզվեցնել Աշոտը:

— Իսկապե՞ս, — այնտեղից, իր հեռվից ծղրտաց Տաթևիկը: — Իսկապե՞ս կարոտել ես...

Լեոնը տխրեց Տաթևիկի համար: Չի կարելի կատակի տալ կարոտ բառը, ազգիկը հեռվում է, մենակ, նա դուցեև արգեն պատրաստ է ինչ-որ ջերմության, նույնիսկ՝ սիրո: Նա կարող է հեքիաթներ հորինել հենց այս դիշեր և անմիջապես խզմզել ապագայի կապույտ մի նախագիծ, սպասել: Չի կարելի:

— Ո՞վ է, — շարունակում էր զզվեցնել Աշոտը:

— Դե կդաս, կխոսենք, Տաթևիկ, — ասաց Լեոնը:

Աշոտի աչքերն այդ պահին կարելի էր լավ ունկլամ սարքել



հետաքրքրասերների ակումբի համար, որ կենը պատասխանեց միանգամից:

— Զահել աղջիկ է, ծանոթացանք ավտորուսում, գյուղում ֆրանսերենի դաս պիտի տա: Ծաբաթ օրը գալու է: Ուրիշ հարցեր չունեն՝ս:

— Ունեմ: Հարց չունեմ. խորհուրդ, կարելի՞ է...

— Հը:

— Պսակվիր, լավ աղջիկ է:

— Քիչ առաջ նախանձում էիր շղակվածներին:

— Դու մեղանից ինչո՞վ ես լավը, հը՞...

Միծաղեցին, խմեցին մի բաժակ էլ: Բոլորն էլ ուզում են այն, ինչ կորցրել են կամ չեն ունեցել: Ինչ որ ունեն կամ չեն կորցրել՝ ձանձրալի է: Սարսափելի նման են բոլոր ազամարդիկ, և կենը մտածեց, թե երբ պիտի գնա Աշոտը, որ այդքան անսրող երջանիկ է իր մի երեկոյի ազատությունը: Հետո մտածեց, որ նրա զնալուց հետո մենակ կմնա, երևի կխմի մնացած վիսկին, կփորձի գրել: Հիմա չի ուզում, չի կարող, բոլոր բաները, որով ուզում է սկսել, տասը տարի գործածած խաղաթղթերի են նման: Պիտի գտնել զուսպ բառեր, քիչ ու խելո: Քիչ: Կենի համար գրելը նման էր հետո ճանապարհ գնալուն, երբ փոքր ճամպրուկ ես վերցնում՝ միայն ամենահարկավոր բաները տանելու համար: Գտնել ամենահարկավոր բաները, սեղմել դրանք նախադասություն— ճամպրուկների մեջ, բայց շտափակացնել շարժա ձկան սյահածոյի նման, կկարողանա՞: Երբեք չի կարողացել, բայց այս անգամ ուզում է, ուրիշ կերպ չի կարող գրել, ուրիշ կերպ կզառնա սրտաճմլիկ մի պատմություն հայկական Ռոմեոյի և Զուլիեայի մասին, որ զոհ գնացին գյուղի խավարին: Դա, իհարկե, կա, բայց միայն դա չէ, և, երևի, ամենազլխավորը չէ: Այդ ողբերգությունը՝ 20-րդ դարի երկրորդ կեսի ֆոնին, մի ժողովրդի մեջ, որ 2000 տարի առաջ թատրոն է ունեցել, որ նույն այդ գյուղի մոտ հիմա ատոմային էլեկտրակայան է կառուցում— սա է մեխը, միայն թե այն ոչ թե պետք է խփել պատի մեջ, այլ գուրս բաշել պատից, գոնե կեսը, գոնե մի մասը: Գժվար է:

— Քնեցի՞ր,— Աշոտն է, ուրեմն, դեռ չի գնացել, լավ է,

— Զէ, սուրճ կուղե՞ս:

— Ընեմ քնի:

— Դու այսօր չես քնի երջանկությունից:

— Քաղցր չանես:

Գոնե Ալինան զանգեր: Կարծում էր, որ կհրաժարվի սուրճից: Կակսի հավանորեն հին գերեզմաններից: Որ ի՞նչ: Զեղավ: Գուցե Գառնիկի հետ ունեցած զրույցից: Ալարկոտ վեր կացավ, գնաց խոհանոց: Պապիկյանը պատմեց, որ հարևան գյուղից մի աղջիկ էին փախցրել, իսկ նա՝ աղջիկը, միլիցիայում ոչ ավել, ոչ պակաս ցուցմունք է տվել. «Ի՞նչ փախցնել, ի՞նչ բան, «վոլգայով» եկավ, գնացինք»: Գե արի բան հասկացիր, տրամաբանական կապեր հայտնաբերիր: Հիշեց ամենագետ ու ամենատես Փառնակին, որ Գերմանիայից երկու ճամպրուկ լուսանկարներ է բերել, երևի Նիմախանում՝ կանանց, ու ապրում է նույն գյուղում: Կամաց-կամաց ստացվում է հավասարում՝ հազար անհայտով. կարո՞ղ ես, լուծիր: Սուրճը թափվեց, զաղը կարմրավուն դարձավ ու թշշաց: Գուցե Հեղինից սկսի. հիշեց Զարեհին՝ «Լուսամփոփի պես աղջիկ, աստվածամոր աչքերով»: Աստվածամոր, հաղիվ թե. պարզապես տասնյոթ տարեկան է: «Բոլորն էլ լինում են տասնյոթ տարեկան»: Հեղինեն ասաց: Ինչ վահարամին տասնյոթ տարեկանում ուղարկեցին արտը. ապրեց, բայց չեղավ ոչ տասնյոթ, ոչ տասնինը, որովհետև մարդու հասակը տարիների գումար չէ միայն, այլ հայացք՝ աշխարհին, մարդկանց, պատրաստակամություն՝ ամեն ինչ մերժելու կամ ամեն ինչ ընդունելու: Վահարամը դրանցից ոչինչ չունեցավ:

Սուրճ խմելիս Աշոտը լուռ էր:

Միեցին:

— Գե գնա,— ասաց կենը,— մի քիչ քնեմ:

— Գնամ,— ասաց Աշոտը,— արձակուրդս վերջացավ, ասել էր տասնմեկին կգաս, հետո էլ, տեսնում եմ զգվել ես ինձինց:

Միծաղեցին:

Հիմա կմնա մենակ:

Մենակ: Ծաբաթ օրը կգա Տաթևիկը: Գուցե կիլիթին զանգահարի: Կիլիթը տասնյոթ տարեկան ո՞վ գիտե երբ է եղել ու սարսափում է անգամ մի օրով ծերանալուց, թեպետ ծախսում է կյանքը՝ իբրև դատած փող: Աշոտն արդեն գնացել է, քիչ հետո նա տանը կլինի, թեյ կխմի վարդի մուրաբայով, կհագնի զոլավոր պիժաման, կքնի մեջքը կնոջն արած: Ինքն ինչո՞ւ ընտրեց մենակությունը, մի՞թե մարդն ընտրում է ինչ-որ բան: Հավաքեց կիլիթի հեռախոսի համարը:



- Լիլիթ:
- Հա, Լեոն, Ի՞նչ կա, կորել ես:
- Ի՞նչ ես ասում, քաղաքում չէի: Գյուղում մի տղա ու աղջիկ ինքնասպանություն էին գործել, ծանր պատմություն է:
- Ի՞նչ էր պատահել որ...

— Սիրելի էին...

Լիլիթը երկար լռեց: Երևի նստած է մահճակալին, հեռախոսը բարձրին դրած, անսխալ հագած տնային խալաթը, մոխրամանի մեջ՝ կիսատ սիգարետներ: Տանը Լիլիթը շատ հոգնած է երևում, դրսում շարժուն է, շատախոս, տանը սմբում է, սկզբում, ասես վերագառնում է ներկայացումից, որի բոլոր գործողություններում դեր ունի: Լեոնը սպասեց, որ նա լռի, վերջացնի: Մենք շատ-շատ սպասում ենք, որ մարդ խոսի-վերջացնի, չգիտենք, որ կա նաև լռել-վերջացնել, որ հաճախ ավելի է հարկավոր մարդուն:

— Ասում ես սիրե՞լ են, — Լիլիթը խոսեց, — ուրեմն, մարդկությունը դեռ իրավունք ունի ապրելու, եթե թեկուզ երկուսը կարող են մեռնել սիրո համար: Քանի՞ տարեկան էին:

— Տասնյոթ-տասնութ:

— Էի... Ուրիշ Ի՞նչ կա, ժամը քանի՞սն է:

— Տասնմեկն է:

— Շատ է ուշ, հանված եմ արդեն:

— Ավելի լավ, — փորձեց կատակել Լեոնը:

— Ուշ է, — Լիլիթը դարձյալ լռեց, հետո, — ասում ես տասնյոթ-տասնութ տարեկան էին, — նորից լռություն: — Ուզո՞ւմ ես, վաղը:

— Այսօր: Հիմա:

— Հոգնած եմ, — ասաց Լիլիթը, — և դեռ հավելյալ արժեք ունեմ կուտակելու, — Լիլիթը մեքենագրուհի է, երբեմն գործ է վերցնում նաև տանն անելու ու դրան է ասում հավելյալ արժեք, — մի նեղանա, լա՞վ...

— Ի՞նչ ես մեքենագրումս:

— Ոտանավորներ են, էջը քսան կոպեկ, եթե իմանայի այսքան անհամ են, երեսուն կուզեի:

Միծաղեցին:

— Բարի գիշեր, — ասաց Լիլիթը, — կհանդիպենք, կպատմես նրանց մասին:

— Բարի գիշեր:

Պատկերացրեց Լիլիթի սենյակը՝ փոքրիկ ու տաք: Մի սենյակ՝ և՛ ննջարան է, և՛ ընդունարան, և՛ բուդուար՝ ինչպես տխուր քմծիծաղով կոչում էր Լիլիթն այն անկյունը, որտեղ հայելին է՝ սարուկի պես բեռնավորված զանազան օժանդիքներով, ներկերով, դանակներով, մկրատներով: Պատկերացրեց հին բազմոցը, տխրեց: Քանի-քանի մենակ անկյուններ կան աշխարհում. Լիլիթի պես, իր պես: Խմեց մի բաժակ էլ, սենտիմենտալ եմ դառնում, մտածեց, լավ նշան չի: Միացրեց մագնիտաֆոնը. 20-րդ դարը ամեն ինչ ստեղծում է, որ մարդ չհասկանա իր մենակությունը: Ժպտաց. երգում էր մի կույր աշուղ, որին երկու տարի առաջ դնացքում ձայնագրեց: Գնացքի ազմուկը միանգամից լցվեց սենյակ: Իսկ Լիլիթը հիմա երևի մեքենագրում է այդ անհամ ոտանավորները: Կույր աշուղից հետո գալիս էր էդիտ Պիաֆը: Էդիտի խանձված, տղամարդկային ձայնը կրկնվեց մի քանի անգամ: Ետ ավելի ժպտավենք, նորից լսեց: Թերթեց գյուղում արած նշումները, սուրճ խմեց: Նստեց գրամեքենայի առաջ, սկսեց տկտկացնել: Տարօրինակ էր տկտկոցը՝ դիշերվա հանդիստ շնչառություն մեջ: Լիլիթն էլ հիմա տկտկացնում է: Տղաները չզանգահարեցին: Չէ, ոչինչ չի ստացվում: Դուրս եկավ պատշգամբ, որ մարդիկ հնարել են լուսամուտները շրացելու համար: Կարելի է շնչել, հետո ներս գալ: Լիլիթը լինեք, կավելացնեք, որ ի՞նքը շատ տղամարդկանց համար պատշգամբ է, ազատ օդ շնչելու հնարավորություն: Գծվար կյանքով է ապրում Լիլիթը: Ամեն ինչ սկսվեց տասնութ տարեկանում, երբ մեկը նրան մի քանի անգամ համբուրելու համար երդվեց, թե սիրում է: Մինչ այդ սիրում եմ բայը նա խոնարհել էր քերականական վարժությունների մեջ և կարդացել էր վեպերում: Հավատաց: Այսինքն, չհասցրեց մտածել՝ հավատա՞լ, թե՞ ոչ, իսկ երկու շաբաթ անց հասկացավ, որ շուտով մայր է լինելու: Չուզեց: Չուզեց, մանավանդ որ նա, ով երդվում էր, արդեն չէր երևում: Այսպես սկսվեց:

Ինչո՞ւ հիշեց Լիլիթին: Ի՞նչ նոր բան կա այս պատմության մեջ, ինչ կապ ունի Սերոբի և Հասմիկի հետ: Բայց մի՞թե կարիք կա մի քանի անգամ համբուրելու համար ասել, թե սիրում ես, երդվել: Չէ, ոչինչ չի ստացվում: Հարկավոր է քնել:

Հանգրեց լույսը:



— Սեանփանյանը կանչում է,— ասաց խմբագիրը, գնա պատմիր, ավել-պակաս բաներ շասես:

Վարդան Ստեփանյանը: Լեոնը տհաճությամբ մտածեց, որ պիտի հանդիպի նրան: Ավելի լավ էր օտար մեկը լիներ: Համալսարանում նրան Վարդանիկ էին ասում, հիմա՛ Վարդան Մամբրեի:

— Դեռ չեմ գրել. գնամ ինչ անեմ:

— Ինքը զանգահարեց, պիտի քննեն, ուզում է կարծիքը իմանալ:— Հետո ավելացրեց,— տպարան գալո՞ւ ես:— Սանշանակում է՝ վիսկին խմելո՞ւ ենք:

— Կգամ, իհարկե:

Խմբագիրը փայլեց:

— էսօր ի՞նչ օր է: Ուրբա՞թ: Զորեքշաբթի օրը գնում եմ:

— Ո՞ւր:

— Հետո,— հետո մոտեցավ սեյֆին, ինչ-որ բան հանեց,— որ իմանաս ինչ է,— ցույց տվեց. փոքրիկ ծոցատետր էր, կապույտ կազմով:

Լեոնը դարձանքով թոթվեց ուսերը:

Խմբագիրը սկսեց թերթել ծոցատետրը: Լեոնը նրան հազվադեպ էր այդպես ուրախ տեսնում: Ի՞նչ է պատահել:

— Զիմացա՞ր, թե ինչ կա,— հարցրեց խմբագիրը,— այ, քեղ ինչ ասեմ, ընկեր Ռեմարկ: Հեռախոսների համարներ են, հասցեներ, հասկացա՞ր:

Հասկացավ. ծանոթ կանանց, աղջիկների հեռախոսների համարներ են:

— Սեյֆո՞ւմ ես պահում:

— Բա ո՞նց: Չէ, ախպեր ջան, ես հետախույզ եմ եղել:

Հանկարծ հիշեց, թե ինչքան է տանջվում խմբագիրը գիշերով մածուն ճարելու համար: Հիշեց ուրիշ բաներ, ուզեց վեր կենալ:

— Իսկ սեյֆի բանալին գրպանո՞ւմդ ես պահում: Վտանգավոր է...

Խմբագիրը լրջացավ:

— Ճի՞շտ:

— Ինչ իմանամ, մի ընկեր ունեի...

Խմբագիրը մոռլվեց: Հետո փոքրիկ ծոցատետրը նորից

սեյֆը գրեց, փակեց. ինչ-որ բան էր մտածում երևի, մի քանի րոպե լուռ էր:

— Գնամ,— ասաց Լեոնը:— Կատակ եմ անում: Ե՞րբ է կանչել Ստեփանյանը:

— Հիմա գնա:— Հետո ձեռքը թափ տվեց,— է, դու ինչ ես հասկանում, աղատ մարդ ես, քո գլխի տերը: Տպարանից շուշանաս:

Աշոտը զանգահարեց ու ասաց, որ մի ժամից կոնսիլիում կլինի, հավանորեն Վահրամիս պետք է վիրահատեն, բայց հիմա վտանգավոր է, շատ է արյուն կորցրել: Նախ հիվանդանոց կգնա: Հիշեց խմբագրի ծոցատետրը: Խեղճ մարդ: Իսկ նրա կնոջը երևի երջանիկ են համարում. ամուսինը խրմբագիր, մածուն է անում, գնում է շուկա, հո ուրիշների պես չի՞: Տխրեց: Իր կնոջը երբեք երջանիկ չեն համարի. ոչ շուկա կգնա, ոչ երևիսային մանկապարտեղից տուն կտանի, մածուն չի ճարի նույնիսկ ցերեկվա ժամերին, երբ բոլոր խանութներում լիքն է, իսկ ծանոթ աղջիկների հեռախոսների համարները կգրի ընդհանուր հեռախոսագրքում: Խե՞ղջ ապագա կին...

Վարդան Ստեփանյանը վեր կացավ տեղից, բարեկեց, հարցրեց ինչպես են գործերը, տնեցիները ինչպես են, չի՞ պսակվել: Լեոնն ասաց, որ ամեն ինչ լավ է: Ստեփանյանը բարի ժպտաց, այսինքն, լավ է, որ լավ է: Խոսակցությունն ախարակեց: Ստեփանյանը հազաց, ուղղեց փողկապը:

— Դե պատմիր,— ասաց,— ինքնասպանություն գծով մասնագետ ես, ասում են:

— Չես փոխվել,— սառը ասաց Լեոնը:

— Ինչո՞ւ:

— Սրամտության գծով:

Ստեփանյանը հայրաբար ժպտաց:

— Վերջին հոգվածը ուժեղ էր:

— Ի՞նչ է ձեզ հետաքրքրում:

— Դա՛,— Ստեփանյանը փոքր-ինչ լռեց, բայց հավանորեն հաճույքով անցավ պաշտոնական տոնի. այստեղ նա, իհարկե, ուժեղ է Լեոնից,— մենք երևի կքնենք այդ դեպքը, դրա համար ուղեցի կարծիքը իմանալ:

— Ես դեռ չեմ գրել:

— Գրե՞լ: Իսկ հարմա՞ր է, արդյոք, գրել:



— Հարցնում եք, թե՞ ցուցում համարեմ:

— Հարցնում եմ:

— Անհրաժեշտ է:

— Դա ա, — Ստեփանյանը մոայլվեց, — ինքնասպանութուն, հասկանում ես, թե դա ինչ է նշանակում մեր օրերում: Կարիք կա՞ այդ փաստը մասսայականացնել: Ի՞նչ ենք խրախուսում, հոգու թուլությունը:

Լեոնը հանկարծ հիշեց, որ երրորդ կուրսում Վարդանին մի անգամ բռնում են Ղուկասյանի գրոսայգում, աղջկա հետ: Այսինքն, ինչ բռնել: Երկու դիմակավոր տղա մտտենում են, թե այս աղջկան մենք էլ պիտի համբուրենք: Եվ Վարդանը աղջկան թողած փախչում է: Երկրորդ օրը համալսարանում ամենքը գիտեին այս պատմությունը, որովհետև «ավագակենքը» նույն Վարդանին կուրսից էին:

— Հոգու թուլություն, ասում եք:

— Ուրիշ ի՞նչ:

— Ինձ այս ողբերգությունը ուրիշ առումով է հուզում:

— Մենք կրնենք, կպարզենք՝ ինչպես է տեղի ունեցել դեպքը, ով է մեղավոր: Հետո կմտածենք: Ի դեպ, ես գրավոր բողոք եմ ստացել գպրոցի դիրեկտորից: Խմբագրիչ շասացի, բայց...

— Ես չեմ հասկանում, թե ինչո՞ւ եք ինձ կանչել: Ասացիք՝ իմ կարծիքն էր հետաքրքրում:

— Իհարկե:

Խնձ, միամիտ գերեզմաններ, կարծում եք դուք ինչ-որ բան ապացուցեցիք աշխարհին, ծիծաղելի գերեզմաններ: Սովորական կամ մի քիչ անսովոր դեպք էր պարզապես, կատարված ս/թ մայիսի 4-ին, հետո դա կդառնա օրակարգի հարց, կրնեն, ի ցույց կդնեն դիրեկտորին, ավագ ջոկատավարին, կդատապարտեն (եռմահու) ՀամլկնՄ անդամներ Սերբը Վարդանյանի և Հասմիկ Մարտիրոսյանի հոգեկան թուլությունը, միջոցառումներ կմշակեն...

— Երևի ավելի լավ է, որ ես գրեմ:

— Բայց հաշվի առ՝ ինչ ասում ենք: Ձեր թերթից քանի՞ օրինակ է արտասահման գնում:

— Չեմ հետաքրքրվել:

— Տեսնո՞ւմ ես, լավ չէ, միևնույն հարկավոր է իմանալ:

Մի խոսքով, շմտանես, որ մենք քեզ կաշկանդում ենք: Բայց մենք էլ մեր կարծիքը կարող ենք ունենալ, չե՞ս գտնում...

Խեղճ, միամիտ գերեզմաններ, դուք ծիծաղելի եք առումային կայանի հարևանությունը, բայց դա ոչինչ, կոմունիզմի ժամանակ էլ երևի մարդիկ ինքնասպանություն կգործեն հանուն սիրո, և դրա համար մի օր արձան կդնեն՝ ինչպես դնում են Անհայտ զինվորին: Կդնեն հուշարձան՝ Անհայտ սիրահարին: Դա կիշխի աշխարհի ամենալավ հուշարձաններից մեկը, և եթե Վարդան Ստեփանյանն ապրի մինչև այդ օրը, սրտառու ճառ կասի անհայտ սիրահարների հիշատակին, գուցե ձեր օրինակն էլ մտաբերի: Իսկ հիմա... Հիմա դուք պարզապես կատարված փաստ եք, որ ուսումնասիրվում եք, կրնե՞վեք: Համբերություն ունեցե՞ք, գերեզմաններ:

Ներս մտավ քարտուղարուհին:

— Դուք նախաճաշելո՞ւ եք, — հարցրեց:

— Իհարկե, — ասաց Ստեփանյանը, — Լեոն, թե՛յ կխմե՞ս, թե սուրճ:

— Սուրճ, — ասաց Լեոնը:

Ստեփանյանը վեր կացավ տեղից, նստեց անկյունի ցածրիկ սեղանի մոտ: Լեոնն էլ գնաց: Սուրճը լուռ խմեցին: Վարդանն առաջվա պես ֆսֆսացնում էր խմելիս: Լեոնն ուրախացավ: Ցածրիկ սեղանի մոտ նա ավելի էր նման այն Վարդանիկին, չափելացել էր միայն երկար մուշտուկը, որի մեջ նա խոթում էր սիգարետը, և ասացվում էր կրկնակի մուշտուկ:

— Պատմիր, ի՞նչ կա, — ասաց Ստեփանյանը:

— Գե ես ասացի, մնացածը կդրեմ:

— Դրա մասին չէ, — նեղսրտեց Ստեփանյանը, — ո՞ւմ ես տեսնում տղաներից, ի՞նչ եք անում: Ժամանակ չի լինում, թե հավաքվենք: — Տխուր նայեց պատուհանից դուրս, նայեց գրասենյակում շարված գրքերին, — կարդալու ժամանակ էլ չկա, վերջին գիրքդ էլ չեմ կարդացել, ներիր:

— Բան չես կորցրել, — ասաց Լեոնը: — Բաբելն ասում էր, թե մարդ կյանքում հինգ-վեց գիրք պիտի կարդա: Կավ գրող է Բաբելը:

— Հինգ-վեցը քիչ է, — ասաց Ստեփանյանը:

— Չվերջացրի, — ասաց Լեոնը, — ...բայց այդ հինգ-վեցը բնատրեւ համար պիտի առնվազն քսան-քսանհինգ հազար կտոր կարդա: Բաբելն էր ասում...



— Շատ է,— ասաց Ստեփանյանը:— Ինչո՞ւ չես պատկզում:

— Չգիտեմ: Ասում են դիրեկտորը նամակ է գրել:

— Բանի տեղ մի դիր, գցել եմ մի կողմ: Տի ուր պատմություն է:

— Քիչ է ասել՝ տխուր:

— Պատմիր,— Ստեփանյանը ընկղմվել էր ցածրիկ բազկաթոռի մեջ, ասես փոքրիկ տղա էր, ճշորթի էր խաղում, արևից փակել էր աչքերը: Նրա պապը էրզրումցի է եղել, յոթ եղբայրներից ազատվել է միայն ինքը, հասել Հայաստան:— Պատմիր:

Լեոնը հանկարծ դտավ հարկավոր բռեհըր, հիշեց զարմանալի մանրամասներ, պատմեց երկար, կրթով, ասես զրում էր բարձրաձայն: Հանկարծ նա իրեն դատապաշտպան զգաց Համիկի ու Սեբորի համար, թեպետ նրանց ինչի՞ն էր հարկավոր դատապաշտպան: Ստեփանյանը լսում էր ուշադիր, երևի տխրեց, նույնիսկ մոռացավ հաց ու կարագ ուտել, իսկ թեյը սառեց: Միայն մի անգամ ընդմիջեց.

— Ասում են աղջկա դիակը եկեղեցում են գրել:

— Սկզբում թույլ չեն տվել, երբ որ բամբասում էին շետո, երբ բիշկները եկել, քննել են, այն ժամանակ: Մի գիշեր մնացել է եկեղեցում:

— Դա՛...:

— Թաղմանը երկու աշակերտ է գնացել, ոչ մի ուսուցիչ:

— Դա՛...:

Պատուհանը բաց էր, և զարնան քամին առանց անցաթուղթ մտնում էր ներս, մի քիչ ցուրտ էր: Ստեփանյանը բացել էր աչքերը և առաջվա փոքրիկ տղան չէր, ինչ-որ բան էր մտածում: Լեոնը վերջացրել ու լուռ նայում էր դուրս: Կարծես զղջացել էր պատմածների համար, մի տեսակ քամված էր թվում, լիմոնի պես, որի հյութը մզել են բաժակի մեջ: Կարիք կա՞ր այս ամենն ասելու:

— Մի խոսքով,— Ստեփանյանը վեր կացավ բազկաթոռից, բալեց դեպի գրասեղանը. դանդաղ ու հիմնավոր, հետո նստեց աթոռին, արորեց ճակատը,— որ քննենք, դու էլ կգաս, կխոսես:

— Ե՞րբ եք քննելու:

— Տեսնենք, ուսումնասիրում են,— մեկնեց ձեռքը,— մեկ-մեկ անցիր, խոսենք, տղաներին բարևիր:

Իսկ դրսում աներես արև էր:

Վահրամի մոտ բարձրանալ թույլ չտվեցին: Աշոտն ինքը ներքև իջավ:

— Հավանորեն կվիրահատեն,— ասաց,— երեքշաբթի-չորեքշաբթի, սիրտը կանոնավորվում է կարծես: Քիչ առաջ քեզ էր հարցնում:

— Ի՞նչ ասաց:

— Հարցրեց պարզապես: Մայրդ մոտն է:

Լեոնը նայեց Աշոտին դատավորի նման, դահճի նման:

— Լսիր, մարդավարի բան ասա, մի թաքցնիր:

— Ելբը վիրահատելն է, հավատա:

## ԺԱ.

Տաթևիկի հետ գնացին սրճարան:

— Ինչպե՞ս է Աղարեկը:

— Լավ է,— ծիծաղեց Տաթևիկը,— Բարմենը բարեւում էր:

Վաղը կհավաքվեն, տեսնես ո՞վ չի գա: Լեոնը մտազբաղ նայում էր ապակե պատերից այն կողմ, որովհետև «Կոտնեկ» սրճարանում էին: Վահրամին, ուրեմն, պիտի վիրահատեն: Անահիտը առանց հարցնելու սեղանին շարում էր ինչ պետք է, աչքի տակով նայում Տաթևիկին: Լեոնին այստեղ սիրում էին, ահա հեռվից տեսավ սրճարանի վարիչը կամ, ինչպես Լեոնը էր ասում՝ սրճարանի տիրուհին: Կայն ժպիտով մոտեցավ, տնավարի մոտ քաշեց աթոռը, նստեց: Լեոնը ներկայացրեց Տաթևիկին:

— Ի՞նչ պիտի խմեք,— հարցրեց Անահիտը:

— Ի՞նչ կխմես,— հարցրեց Լեոնը Տաթևիկին:

— Շամպայն բեր,— ասաց սրճարանի տիրուհին,— տխուր ես, Լեոն, ի՞նչ է եղել:

— Եղբայրս հիվանդ է:

Խմեցին մի բաժակ, սրճարանի տիրուհին գնաց:

— Ծա՞նր է վիճակը,— հարցրեց Տաթևիկը:

— Պիտի վիրահատեն: Չգիտեմ:

— Քեռիս պրոֆեսոր է, ուզո՞ւմ ես...

— Շնորհակալ եմ:

Ոչ, տխրությունը միայն Վահրամի համար չէր: Լեոնը զգում էր, որ սարսափելի հոգնել է վերջին օրերին, ուղեղը լարվել է, մենակոթյան զգացումը գարձել է սրտի մեջ կախված կշռաքար, զլխում կարծես գրամբենա էր տկտկում, որի վրա մեքենագրվում են անհամ բանաստեղծություններ: Տաթևիկը



զգուշութիւնսմբ, դանդաղ ուտում էր սալաթը ու սպասում ինչ-որ բանի, ինչի՞: Մի՞թե ծերանում է: Երեսունչորս տարին քիչ չէ:

— Ներիր ինձ, Տաթևիկ:

Տաթևիկը ոչինչ չի ասում, ժպտում է՝ հազար տարվա բարեկամի պես:

Կողքի շորս-հինգ սեղանը միացրել էին իրար և ասես թրուշունների շուկա լիներ. կշկշում էին աղջիկները, տղաները ձիգ էին ու կարմրած:

— Ողո՞ւմ ես, գնանք,— ասաց Տաթևիկը:

Լեոնը անձայն բռնեց նրա ձեռքը: Նայեցին իրար: Ո՞վ է այս աղջիկը, որտեղի՞ց մտավ իր կյանքի մեջ, ինչո՞ւ է տեղ ուզում ներքին կոշիկով աշխարհում, որ պարզապես ամեն մարդու տնամերձն է, մենակութիւն թաղափորութիւնը: Իսկ Տաթևիկը ոչինչ չէր ուզում, նա նայում էր պարզ ու բարի՝ ինչպես նայում են ջրին, հացին, ինչպես նայում են լուս-թլանը:

— Մնանք մի քիչ,— ասաց Լեոնը,— պարենք:

Պարեցին:

Պարեցին լուռ: Թվիստ էին պարում բոլորը, իսկ նրանք՝ տանգու: Լեոնը տեսավ, որ ուշադիր, ժպիտով իրենց են հետևում սրճարանի տիրուհին, Անահիտը, նայում են, երևի մտածում, որ այդ աղջիկը շուտով կխլի իրենց մշտական հաճախորդին: Լեոնը ժպտաց նրանց, հետո վերևից նայեց Տաթևիկին, տեսավ շագանակագույն մազերը, ձեռքերն զգացին աղջկա ձիգ մարմինը: Ի՞նչ է ուզում ինքը կյանքից կամ, ինչպես կիլիթը կասեր՝ մեռնելուց առաջ մարդկանց տրված այս կարճատև արձակուրդից, որ կյանք է կոշվում: Նայում էր պարողներին, նախանձում էր, թեպետ միամիտ չէր այնքան, որ պարով որոշեր ամեն ինչ: Բայց նրանք երևի ավելի քիչ են մենակ, քան ինքը, քան իր սերունդը: Շատերը երևի ծիծաղում են իրենց հնաճ պարին նայելով, թող ծիծաղեն: Ե՛րբ սովորեին պարել իրենք, պատերազմի տարիները՝, պատերազմից՝ հետո՞, երբ շուրջը դառնութիւն էր, երբ ոչ թե բուժվում, այլ նոր-նոր յոդ էր քսվում բաց վերքերին, ո՞վ սովորեցնեի: Համալսարանական կյանքի ամենաերջանիկ հիշողութիւնները ժողովների հետ են կապված, քանի ժամ իր սերունդն անցկացրեց ժողովներում, քանի ժամ՝ կանգնած ծափահարելով: Երևի, եթե իրար գումարես, ամիսներ կդառնան, տարի, իսկ

դա կյանք է կոշվում, ապրած կյանք, այդ օրերն արդեն դուրս են գրվել նրանց կենսագրութիւնից: Կհասկանա՞ն սրանք: Թվիստը համակել էր բոլորին, և նրանք գույնզգույն, լարած խաղալիքների էին նման: Երևի սրանք էլ վշտեր ունեն, անբուն գիշերներ, ցերեկներ, երբ ուզում ես քնել՝ չմտածելու, չհասկանալու համար: Ունեն: Հասկանո՞ւմ է ինքը սրանց: Մանր է լինել միջանկյալ սերունդ, լինել կամուրջ՝ շատ նեղ առվի, որի վրայով անցնում են միայն թռչակառունները. քահանները թռչում են, շնկատելով կամ արհամարհելով կամուրջը: Ձյուն գար, աշխարհում ծածկեր ամեն ինչ ու չհավեր, ու դրա վրա կառուցվի կյանքը, ձյուն գար, ծածկեր բոլոր շապրած տարիները, սխալները, անկումները, ետ վերադառնալին շապրած տարիները: Թվիստը մոլեգնում էր, գույնզգույն խաղալիքները խառնվել էին իրար, Տաթևիկը ոչինչ չէր ասում:

— Չես խոսում, Տաթևիկ:

— Խոսում եմ, բայց քո նման, մտքում:

Աղմուկը միանգամից կտրվեց, խաղալիքները միանգամից կանգ առան, հետո շարվեցին սեղանների շուրջ, դարձան աղաներ, աղջիկներ:

— Գնանք, Տաթևիկ:

— Գնանք:

«Կոտնկը» դրսից վիթխարի ակվարիումի էր նման. ջրի տեղ՝ օդ, ձկների տեղ՝ մարդիկ: Լեոնը թեանցուկ արեց Տաթևիկին:

— Միայն հինգ բուլետով,— ասաց հերթապահ բժիշկը:

Վազեց վեր:

Առաջինը մայրն զգաց ներս մտնելը: Վահրամը երևի քնած էր, աղմուկից բացեց աչքերը: Նայեց եղբորը:

— Լուրջ բան չկա,— ասաց Լեոնը,— նոր Աշոտի հետ խոսեցի, երևի հարկավոր կլինի վերահատել, ի՞նչ ես ասում:

— Ինչ ասեմ, եթե պետք է...

Տխուր էին Վահրամի աչքերը, դատարկ ու հաշտված:

— Մի մտածիր, ամեն բան լավ կլինի:

— Է՛...— Վահրամը փակեց աչքերը, մայրը տղաչական նայեց Լեոնին, ո՞ւմ նայեր Լեոնը:— Վահրամը նորից բացեց աչքերը,— պրոֆեսորի հետ խոսե՛լ ես, ի՞նչ ասաց...

— Նույնը, Վահրամ, նույնը:



Սուտ է, արյունը գլխավորն է մարդու մեջ, բախտորոշ բու-  
պեններին արյունն է քվեարկում. մի շաբաթ առաջ կարող էր  
մտածել, թե կյանքը հնարավոր է առանց արյունակիցների՝  
կան ռեստորաններ, ընկերներ, աղջիկներ, զրքեր, մագնիտա-  
ֆոն, կա լուսթյուն: Մի շաբաթ առաջ կարող էր մտածել, թե  
պայմանական բաներ են բոլոր այս հարաբերությունները  
քսաներորդ խելագար դարում, որ հեռացնում է մարդկանց  
իրարից, նրանց մեջ քաշելով պատեր, վարազույրներ, միջնորմ-  
ներ, նրանց արանքում սառնարաններ դնելով: Վերջին տարի-  
ներին այնքան քիչ են հանդիպել վահրամի հետ, նոր տարուց  
նոր տարի և ի՞նչ՝ կանգնած է հիմա ողորմելի ու անուժ, բնա-  
կան բնազդներով, հոգին մերկ՝ ինչպես Ադամի մարմինը, կանգ-  
նած է ու շգիտի ինչ անել: Գե օգնիր, քսաներորդ դար, բթաց-  
բու տխրության նյարդը, ուրախության հարեր հնարիր, և թող  
կույ տան մարդիկ, երբ ցավը դառնում է հազի պես անդիմադրե-  
լի: Լեոնը նայեց վահրամի գունատ, համարյա կանացի ձեռ-  
քին, որ թղթի կտորի պես ընկած էր հնամաշ վերմակի վրա  
ու մտածեց, որ մարդիկ ծերանում են այսպես: Իսկ մայրը  
լուռ նայում էր հիվանդ որդուն, որը նրա համար աշխարհի  
կենտրոնն էր այդ պահին, մայրը ուրիշ ո՞ր կարող էր նայել...

— Ինչպե՞ս էր, — հարցրեց Տաթևիկը:

— Մնա ինձ հետ, — ասաց Լեոնը:

Փողոցում կյանքն էր, մարդիկ: Նրանք խառնվեցին փողո-  
ցին, և փողոցը կերավ նրանց՝ որպես հաց, որպես պաղպաղակ,  
կույ տվեց որպես ծխախոտի ծուխ:

ԺԲ.

Անցած կյանքը նման է հին ջրաղացի. կա հոսող ջուր, կան  
ջրաղացքարեր, իսկ տարիները ցորեն են կուտակել՝ ինչպես  
ուզես: Բավական է հասարակ մի հանդիպում, որ իրար առնեն  
ժանոթ հայացքները, և ջրաղացքարերը կսկսեն պտտվել. ցո-  
րենն այլուր կդառնա, կյանքը կլցվի անցած օրերի աղմուկնե-  
րով:

Տղաների հետևում դպրոցն էր՝ հին ջրաղացը, նրանք նստո-  
տել էին բակում թափված քարերին, մի քիչ տխուր էին, մի

քիչ ուրախ, մի քիչ ուզում էին տխուր երևալ, մի քիչ ուրախ  
— Ես այդպես էլ գիտեի, — ասաց Լեոնը, — գոնե զանգա-  
հարնին:

— Տասը բույս էլ սպասենք, — ասաց Ռուբենը:

Եկել էին հինգը: Տասնյոթից՝ հինգը: Երկուսը չէին կարող  
գալ՝ Հակոբն ու Վահիկը, ուրեմն տասնհինգից հինգը: Ռուբե-  
նի սպիտակ «Վուլգան» կանգնած էր մայթի մոտ, վարորդը թաց  
շորով սրբում էր դիմացի ապակին: Տղաներից մեկը՝ Կարոն  
պսակվել էր մի ամիս առաջ, և բնականաբար, խոսակցության  
առաջին զոհն էր:

— Կարո, ո՞նց են գործերդ, հը՞:

— Է... — հառաչում է Կարոն, — ստիպում է, որ ամեն օր  
ատամներս մաքրեմ:

— Շալվարդ էլ արդուկած է երևում:

— Կոշիկիդ թելերն էլ կապած են:

— ~~Կարո,~~ հանկարծ լրջանում է Լեոնը, — քսան տարի է  
ուզում եմ հարցնել. դպրոցում քո կոշիկները, շալվարը միշտ  
ցեխոտ էին, նույնիսկ շոգ օրերին, ո՞նց էիր հաջողացնում...

— Մի անգամ... — սկսում է Արտակը, ու պտտվում են հին  
ջրաղացի քարերը, օղբ լցվում է հիշողությունների բարակ ալ-  
յուրով, — մի անգամ Կարոն...

Հրանտը սկսում է գոռոզալ. գործարանի դիրեկտոր է, սո-  
վոր է:

— Որ ասում եմ մարդ չեք, — նայում է ժամացույցին, — մի  
գործի գլուխ որ Լեոն Շահինյանը լինի:

— Դու լինեիր, ընկեր դիրեկտոր:

— Բա աղբին ո՞վ ղեկավարի. այ կմեռնեմ, անտեր կմնաք,  
լավ պահեք ինձ:

Միծաղում են:

— Էլ շենք սպասում, — ասում է Ռուբենը, — որոշենք ուր  
ենք գնում:

— Հակոբի մոտ, հը՞...

Լցվում են ավտոմեքենան:

— Կարո, քանի՞ ժամվա թույլտվություն ունես նորահար-  
սից.

— Ռուբ, երգիր, հա...

Ռուբենը նայում է տղաներին, հետո իր վարորդին, ծիծա-  
ղում է.



— Ժամանակը չի,— հետո հանկարծ լրջանում է,— գիտե՞ք,  
տղերք, ոչ մեկս չի փոխվել, նույնն ենք:

Մյուսներն էլ են լրջանում, նայում են իրար, ամեն մեկն  
ինչ-որ խոհ է ծամում, մի քիչ տխրում են, արդեն՝ իսկականից:  
Ահա և գերեզմանատունը:

Իջնում են: Լեռնն ու Արտակը ծաղիկ են առնում: Խոսակ-  
ցության թելը բարակում է, աննշար դառնում: Միայն մի քանի  
րոպե:

— Հակոբը մեր գասարանի առաջին ղեսպանն է էն աշխար-  
հում,— ասում է Կարոն:

— Երկրորդը դու կլինես,— ասում է Արտակը,— Ռուբենը,  
դե ղեկավար ընկեր է, վերևից կմիջնորդեն, ուշ կմեռնի, հետո  
էլ՝ նրան պանթեոնում կթաղեն:

— Ինձ վրա էլ հույս չդնեք,— ասում է Հրանտը,— ինձ առաջ  
են քաշելու, Լեռնն էլ մեծ գրող կդառնա: Վատ չի, չէ՞, մի դա-  
սարանից պանթեոնի երեք թեկնածու:

— Հասարակ ժողովուրդ մնացինք ես ու դու, Արտակ,—  
ասում է Կարոն:

— Գերեզմանափոր էլ պիտի լինի, չէ՞...

— «Համլետ» կինոյից կկանչենք,— ասում է Լեռնը:

Միծաղում են: Շուրջը գերեզմանաքարեր են, մահարձան-  
ների, ցանկապատեր, շուրջը մեռած մի ամբողջ քաղաք է, նաև  
ծանոթ անուններ. առաջ այդ անունները աչքեր ունեին, հեռա-  
խոսի համար, հասցե, երևի նաև պարտքեր, բնավորութուն...  
Հիմա պարզապես քարեր են, որովհետև ով պիտի ստուգի՝  
նրա՞նք են այդ քարերի տակ, թե՞...

— Ավելի լավ արձաններ կան, քան քաղաքում,— ասում է  
Ռուբենը:

— Եվ ավելի ամուր պատեր:

— Պատկերացնում եք, ասենք, հարչուր տարի հետո,—  
Կարոն մտքում ինչ-որ հաշվումներ է անում,— քաղաքի  
այսօրվա ընկալությունից, յոթ հարչուր հազարից, ոչ ոք կեն-  
դանի չի լինի: Ուրեմն, յոթ հարչուր հազար գերեզման: Մի  
րոպե կողք-կողքի դրեք այդ ցեմենտաքաղաղալային զանգվա-  
ծը. սոսկալի կլինի: Ինչքան հող է կորչում:

— Վերջ տվեք,— ասաց Լեռնը,— նյութ գտավ:

— ... Եվ չհանդուրժեց հողին բանաստեղծի,— պաթեալիկ  
արտասանեց Կարոն,— ես լուրջ բան եմ ասում:

Հակոբը ութ տարի առաջ մեռավ: Սրտի կաթված և վերջ:  
Ո՞վ կմտածեր: Հանդարտ ու բարի տղա էր, մականունը Մեղր  
էին դրել, կարմրում էր հայհոյանք լսելիս, դասատուները միշտ  
նրա օրինակն էին բերում, երբ պետք էր սանձել մյուսներին:  
Ոչ ոք չիմացավ, թե ինչ կատարվեց դպրոցից հետո, բայց նա  
ուրիշ մարդ դարձավ. սկսեց խմել, հայհոյել, դժավեց տնեցի-  
ների հետ, զնաց Հայաստանից, հետո նորից ետ եկավ, փո-  
խադրվեց ինչ-որ գյուղ: Փակվեց ինքն իր մեջ և մի օր էլ...  
Գաղտնիք մնաց բոլորի համար: Մեռնելուց մի ամիս առաջ  
Կարոյին էր հանդիպել, միասին խմել էին, Հակոբը հարբել  
էր, լաց եղել: Թաղումն անշուք էր, մի կերպ:

— Ճաշակով գերեզման է,— ասաց Ռուբենը, ցույց տալով  
մի հուշարձան:

— Վաղը ֆուտբոլ գալո՞ւ եք,— հարցրեց Արտակը:

Ահա և Հակոբի գերեզմանը:

Բացի մետաղե տախտակից՝ ուրիշ ոչինչ:

Մետաղը ժանգոտվել էր, քայքայվել:

Տառերը մի կերպ էին կարդացվում. Մեհրաբյան Հակոբ

Սարգսի, 1930—59:

Լեռնը ծաղիկները դրեց հողին: Մի տեսակ անտեղի երևացին

ծաղիկները՝ մոռացված, անշուք հողաթմբի վրա:

— Փող հավաքենք տղաներով, քար դնենք,— ասաց Ռու-  
բենը:

— Մի անգամ էլ ենք որոշել,— ասաց Լեռնը,— հինգ տարի  
առաջ:

Նայեցին իրար:

Ավելի ճիշտ՝ ամեն մեկը նայեց ինքն իր մեջ, ինչպես կոա-  
նում են ջրհորի վրա, նայում ներքև, մթությանը: Հետո նա-  
յեցին Հակոբի գերեզմանին: Մեծացան...

— Չէ, մի բան պիտի անել,— խոսեց Հրանտը,— ամոթ է:

Լեռնը մտածեց, որ ոչինչ էլ չեն անի, բոլորն էլ ուզում են,  
պատրաստ են, բայց չեն անի, հիմա կզնան գերեզմանատնից,  
կիրակին կանցնի, կմոռանան: Նստոտեցին՝ ով որտեղ պա-  
տահի: Ամեն մեկը մտքում երևի հիշում էր Հակոբին՝ ինչ-որ  
ղեպք, ինչ-որ խոսք:

— Ինչո՞ւ թթվեցիր,— ասաց Կարոն,— որ իմ գերեզմանին  
գաք, անեկդոտ կպատմեք, թույլ եմ տալիս:

— Աղաբեկի անեկդոտը,— ասաց Հրանտը, դա Կարոյի սի-



բաժ անհկզոտն էր, որ նա տղաներին պատմել էր երևի մի հարյուր անգամ:

Առոնը հիշեց Տաթևիկի դիրեկտոր Աղաբեկին, ժպտաց:

— Տղերք, իսկապես մի բան պիտի անել,— ասաց Ռուբենը,— ամոթ է, զոնն մի հասարակ քար զնել տանք: Առոն, կղբաղվե՞ս...

— Առոնը փողերը կհավաքի, կկամի,— ծիծաղեց Հրանտը:

— Հետո էլ գիտմամբ կմեռնի, որ փողերը ետ շտա,— Կարոն էր:

Միծաղեցին:

Կրջացան:

Հետո վեր կացան, գնացին: Հակոբը մնաց: Նա այստեղ կսպասի, գնալու տեղ չունի: Հերթով տղաները կգան. փոխված կլինեն, ծերացած, դժվար կլինի ճանաչել, բայց ոչինչ, կճանաչի: Կհավաքվեն դասարանով ու առաջին անգամ լուսթյուն կլինի: Առոնը կնճոտավեց իրեն պաշարած անհեթեթ պատկերից, որ, իհարկե, լինելու էր: Կարոն ինչ-որ անհկզոտ էր պատմում, և տղաները ծիծաղում էին: Մեծանում են, ե՞րբ մեծացան: Ռուբենն արդեն գիրանալու տվյալներ ունի, Արտակը լրիվ սպիտակել է, Կարոն էլ, Հրանտը դեռ ձիգ է, բայց դեմքին, աչքերի մեջ հոգնածություն կա, հոգս: Այդ ե՞րբ էր՝ դասամիջոցներին, դասերից հետո կոճակ էին խաղում, մանր դրամով պիտի խաղային, որտեղի՞ց դրամ, կոճակներով էին խաղում: Տանը կոճակ չթողեց, շարվարը գնդասեղով էր ամբացնում, ծակում էր: Այդ ե՞րբ էր. գնում էին շուկա, մի մարդ կար, կախարդական արկղ ուներ՝ երկու կողմից նայելու անցքեր, հեռագիտակների պես: Հինգ կոպեկ տալիս էին, երկու րոպե աչքերը հպում այդ ապակուն և տեսնում գույնզգույն պատկերներ, լսում տղամարդու խզված ձայնը. «Առաջինը կոնդոն, Անգլիայի մայրաքաղաք, երկրորդը Բաղդադ՝ խուրմայի հայրենիք...»: Չորրորդը, հինգերորդը և, ի վերջո՝ «...Հունաստանի մարալ աղջիկները տանցի կպարեն, ձեզ փեշքաշ»: նրանք ըզիտեին ինչ են Հունաստանի աղջիկները և ինչ է «փեշքաշը», նրանք ավելի շատ խորմա կուզեին, բան «մարալ աղջիկներին», բայց նույնիսկ դրա համար չէ, որ զոհում էին իրենց հինգ կոպեկները: Առոնը հետո շատ երկրներում եղավ, նույն այդ Անգլիայում, Հունաստանում, բայց ամենալավը երևի այն հինգկոպեկանոց ճանապարհորդութունն էր: Երևի Հու-

շերը կանչեցին, ձգեցին նորից: Նայեց: Ռուբենն ու Հրանտը քայլում էին միասին, ինչ-որ բանի շուրջ վիճելով, Կարոն ու Արտակը ծիծաղում էին. երևի Կարոն անհկզոտ էր պատմել: Ե՞րբ մեծացան, ո՞վ կվերադարձնի նրանց շապրած մանկությունը, ո՞վ...

Գերեզմանատան մուտքի մոտ, ցայտաղբյուրից ջուր խմեցին:

— Յը՛, Հակոբ:

— Սովից մեռնում եմ,— ասաց Կարոն,— կինս ասաց, որ քսան ուրվի տանում ես, ինչ հաց, ինչ բան:

— Մի տեղ մի կտոր բան ուտենք,— ասաց Արտակը:

— Գնում ենք Սևան,— ասաց Ռուբենը,— «Ախթամարում»: Լցվեցին մեքենան:

— Ռո՛ւբ, երգի, էն երգը,— ու Կարոն տալիս է այն երգի անունը, որ Ռուբենը երգում էր,— շատ եմ խնդրում, հա՞...

— Անհկզոտ պատմեք,— ասում է Ռուբենը,— երգը՝ Սևանում:

Հետո սկսեցին խոսել հինգով միաժամանակ. երևի ուզում էին ազատվել գերեզմանատան տխրությունից, որ դեռ գալիս էր նրանց հետ երևի:

— Սևանում գնանք Վահիկին էլ տեսնենք,— ասաց Կարոն,— հը՞...

Վահիկը Սևանի հոգեբուժական հիվանդանոցում էր:

— Ասում են բուժվել է, բայց տնտեսվար է աշխատում:

Վահիկը: Ի՞նչ պատահեց այդ տղային: Միակն էր, որ կուշտ անցկացրեց պատերազմի տարիները. հայրը զինվորական ճաշարանի հաշվապահ էր, մայրը՝ խոհարար: Միակն էր, որ վերարկու ուներ, կովերկոտից կոստյում: Միակն էր, որ թշերը կարմիր էին: Ի՞նչ պատահեց, ի՞նչ: Ինչպե՞ս իրենք, որ կիսաքաղց, կիսամերկ ապրեցին այդ տարիները, դիմացան, իսկ նա... Ինչեր ասես չէին բերում Վահիկի գլխին, թանաք էին թափում շորերին, թոցնում էին տնից բերած նախաճաշը, տետրերը:

— Տղերք,— ասաց Կարոն,— հիշո՞ւմ եք, որ գնացինք Վահիկենց տուն, կերանք, հը՞...

Հիշո՞ւմ են...

Ուրեմն, կարելի է նաև մոռանա՞լ...



Տասր-տասներկու հոգով էին: Վահիկն ասաց, որ ծնողները տանը չեն, մի կերպ համոզեցին, դնացին: Ներս մտան, թե չէ, Վահիկին մտքրեցին զուգարան, դուռը փակեցին: Ու ընկան անկյունները: Բացեցին բոլոր դարակները, պահարանները, կերան ինչ պատահեց: Կերան կատաղությամբ, մոլուցքի մեջ, դառնությամբ, որ այդ պահին երևի չէին էլ հասկանում: Կերան... Կարոն մի վիթխարի աման մուրաբա էր խժռել, Արտակը մի կիլոգրամ յուղ էր կերել մի կտոր հացով, սարսափելի էր: Կերան, քրտնեցին, ոչինչ չթողին, ոչինչ չտարան, միայն կերան՝ ինչ որ կար: Հետո, մի շաբաթ շարունակ՝ բոլորի փորը ցավում էր, Արտակին նույնիսկ սուր վարակիչ հիվանդանոց տարան: Երբ բաց արին զուգարանի դուռը, Վահիկը անկյունում նստած լաց էր լինում, Կարոն նրան մի կտոր հաց ու մուրաբա տվեց, լաց լինելով կերավ: Վահիկի ծնողները դպրոց եկան, բողոքեցին, Լեոնին, Հրանտին, Կարոյին երկու շաբաթով հեռացրին դպրոցից:

...Իսկ Վահիկը հիմա հոգեբուժարանում է. ո՞վ կկարգա այս սեպագիր հանելուկը, ո՞վ...

Ճանապարհը թաց էր, որովհետև անձրև էր եկել:

Տղաները խմբով ինչ-որ երգ էին դնում:

— Լեոն, — ասաց Ռուբենը, — զրեցի՞ր:

— Ի՞նչը:

— Մեր ինքնասպանների մասին:

— Օհո, ինքնասպաններ էլ ունեք, — փորձեց կատակել Կարոն, — շրջանը լավ ես դեկավարում:

— Սպասիր, — կոպիտ ընդմիջեց Ռուբենը, — քո խելքի բանը չէ:

— Թե չէ դանդ կտանք, կինդ կդա, — ավելացրեց Արտակը, հետո դարձավ Լեոնին, — Ի՞նչ ինքնասպանություն:

— Վերջ տվեք, — ամփոփեց Հրանտը, — հո սղո նիստի չե՞նք հավաքվել, գերեզմանատուն, հետո էլ ինքնասպանություն: Չգնա՞նք անատոմիկում ճաշելու...

— Դեռ չեմ գրել, — ասաց Լեոնը Ռուբիկին, — բայց կգրեմ:

— Դա՛, — ասաց Ռուբենը, — ես էլ հետաքրքրվեցի, տխուր պատմություն է, դու պատկերացնո՞ւմ ես, այդ գյուղում ոչ մի անգամ չէի եղել:

— Քանի՞ տարի է այստեղ ես:

— Մի տարին կլրանա նոյեմբերին:

— Ջարմանայի է:

— Ուրեմն գրելո՞ւ ես:

— Դու երևի չես ուզում, հա...

— Չէ, ինչ ես ասում, հարցը դրանում չի:

Տղաներն աղմկեցին:

— Վերջ տվեք:

— Այսօր ոչ մի լուրջ բանի մասին չենք խոսելու:

— Ճիշտ է, զզվելի ենք. ամեն տեղ նույնը՝ ժողովում, հարսանիքում, թաղման ժամանակ, հերիք է:

— Ուրեմն, որոշում ենք, — ամփոփեց Հրանտը, — չենք խոսում ոչ քաղաքականությունից, ոչ աշխատանքից...

—... Ոչ հայոց պատմությունից, — լրացրեց Լեոնը:

— Ոչ կանանցից, — ասաց Կարոն, — այսինքն, մեր սեփական կանանցից...

— Իսկպես հոգնել ենք, — ասաց Ռուբենը, — ուրախանանք: Ախր հազվագեպ ենք լինում բնական վիճակում, հը՞...

Լեոնը նայեց ընկերներին, նայեց աչքի տակով: Ամենատարիքովը Ռուբենն է, երեսունյոթ տարեկան, հոգնել են, ե՞րբ հոգնեցին, ինչո՞ւ: Կարոն սկսեց ինչ-որ բան երգել, ինչպես միշտ՝ սխալ: Հրանտը ծխում էր, Ռուբենը... Ռուբենը հանկարծ սկսեց երգել:

Քաղկինակը թափահարեց

Դարպասի մոտ իմ սիրելին...

Այն օրերի երգ էր, պատերազմի օրերի, Ռուբենը սիրում էր երգել, տղաները լսում էին: Ռուբենը նրանցից մեծ էր երեք տարով, իններորդում արդեն սիրած ազգիկ ուներ հարևան դպրոցից, իսկ երգը սիրո մասին էր: Ռուբենը նրանց «լուսավորչն» էր նաև, սովորեցնում էր ինչպես մոտենալ աղջիկներին, ինչի մասին զրուցել, ինչ հարցնել: Այն տարիներին առանձին էին դպրոցները, և տղաները մեծանում էին վայրենիներ՝ պես, դպրոցում պակասում էր աղջիկների քնքշությունը, իսկ Ռուբենը այդ մասին էր պատմում, նաև երգում: Լեոնը փակել էր աչքերը, երգը նրան էլ հտ տարավ, տասնհինգ քսան տարով, թեպետ արդեն խապտոել էր Ռուբենի ձայնը, կարծես նա մոռացել էր նույնիսկ բառերը, հնարում էր, քանի տարի է չի երգել: Աղջիկներ չկային դպրոցում: Շենքը կիսեցին փայտե միջնորմով, դարձրին երկու դպրոց և բաժա-



նեցին նրանց: Վեցերորդ դասարանում էին. աղջիկները լաց էին լինում, տղաները մռայլ շարվել էին պատերի տակ: Ու այդպես շարունակվեց: Ամեն շաբաթ նորոգում էին միջնորմները, որովհետև տղաները տախտակների արանքով անցքեր էին բացում, դասամիջոցներին նայում այն կողմ, որտեղ աղջիկներ էին: Բարձր դասարանում արդեն այդ արանքներից նամակներ էին գնում-գալիս, այդ նեղլիկ լուսամուտների օգնությամբ ժամադրվում էին, տխրում, ուրախանում:

Ռուբենը երգում էր, երևի միայն իր համար, մեկը-մեկի հետևից ինչ շուտ անցան տարիները: Իսկ մեքենան տանում էր նրանց, ճանապարհի փոշուն խառնելով շատ բան՝ ապրած օրերից, հույսերից, հուսախաբույթուններից:

Առաջին բաժակը խմեցին լուռ, Հակոբի հիշատակին:

— Ուրեմն պայմանը պայման է՝ ոչ մի լուրջ բանի մասին չենք խոսում,— հիշեցրեց Հրանտը,— պա՞րզ է:

«Ախթամարի» մեծ սրահում հաղիվ գտան ազատ սեղան, լիքն էին՝ հիմնականում երիտասարդներ, իսկ լուսամուտից այն կողմ, ներքևում Սեանն էր:

Մի քիչ հետո, երբ շորս-հինգ բաժակ խմած լինեին, Լևոնը կնայե՞ր դուրս, ձեռքը թափ կտար:

— Կեղծ է,— կասեր:

— Ի՞նչը:

— Սեանը, ի՞նչը: Բաշինջաղչանն է նկարել:

Այդ հետո, հիմա լուռ էին, կենտրոնացած: Ուտում էին, ուտելիքի հետ ծամում շասված խոսքերը: Հանդիպեցին, կիսմեկ, ձեռ կառնեն իրար, կվերհիշեն հազար ու մի բան, երեկոն կծախսվի-կգնա: Մեկ էլ, ով գիտե, երբ կհանդիպեն, երևի դարձյալ մի բանի ծամով, և մի անգամ կբացեն իրենց հոգիների օղանցքը, շուտ կփակեն, երկար չի կարելի, վտանգավոր է:

— Մի բան ասեք,— Կարոն է:

— Ձեռք,— ասաց Ռուբենը:

Իսկ դահլիճում պարում էին:

Նվագախումբը ճշում էր սկսնակ հոկտորի նման, զույգերը կարծես անզեն մենամարտ էին խաղում, մոտենում էին, հեռանում, գտնում էին իրար, կորցնում: Գեմքերը՝ դիմակներ, ուրիշներից վերցրած մի երեկոյով կամ մի կյանքի համար, մեկ

է, ձեռքերը, ոտքերը ասես հաղիվ կցված իրար: Լեոնն էր հորինում, սովորական տղաներ ու աղջիկներ էին, իսկ թվիսթի ու ռիթմը պարզապես բռնում էր նրանց արյան շրջանառությունը: Գեմքերը... դեմքը կ՞ր է եղել բաց այբբենարան, որ նայես ու կարդաս հոգին՝ ա-ր-դ-դ-ե... Գեմքը միշտ էլ պատահար ստացած նվեր է: Լեոնը զզվեց այդ մտքերից, իսկ Ռուբենը վեր կացավ տեղից, մոտեցավ հարևան սեղանին, երևի պարի հրավերելու մենակ նստած աղջկան: Աղջիկը սկզբում կարծես թե զարմացավ, բայց Ռուբենը կոացավ, ինչ-որ բան ասաց, նա ծիծաղեց ու վեր կացավ: Երբ անցան տղաների սեղանի մոտով, Ռուբենն աննկատ աչքով արեց:

— Տեսա՞ք,— ասաց Կարոն:

— Աղջիկը պեպենոտ էր,— նկատեց Արտակը:

— Մարդ դառեք,— ասաց Հրանտը,— ի՞նչ կասես, ազգի հույս:

— Մերանում ենք,— պատասխանեց Լեոնը:

Արտակը հառաչեց, որովհետև երկար-երկար ոտքերը նրան երբեք պետք չեկան պարելու համար ու պետք չեն գա: Նայեց լուսամուտից դուրս:

— Ի՞նչ են գտնում պարելու մեջ,— ասաց:

— Եսիմ,— ասաց Կարոն:

Երիտասարդ զույգերի մեջ համառորեն խորխափում էին երկուքը. տղամարդը կլիներ վաթսուն, կինը՝ հիսուն-հիսուն-հինգ տարեկան: Տանգո էին պարում, երանությամբ նայելով իրար, բայց մեկ էլ խելքներին փշում էր ու ռիթմը փոխել: Ոչինչ չէր ստացվում, խանդարում էին մյուսներին: Միծաղելի էր. տղամարդը լայն շարվար էր հագել, ինչպես քառասնական թվերին, կինը շարունակ նայում էր ոտքերի տակ, երևի սխալվելուց էր վախենում: Տխուր պատկեր էր: Լեոնը իրար հետևից երեք բաժակ օղի խմեց, հետո հանկարծ վեր կացավ, աչքերով որոնեց ազատ աղջիկ՝ ինչպես ազատ աթոռ են որոնում: Գտավ: Կանգնած էր պատի տակ, երևի ընկերուհուն էր սպասում: Ոչ, չհիշեց Տաթևիկին: Մոտեցավ: Խառնվեցին շրջապատույթին: Լեոնն ազատվեց իր խոհերից, հարցականներից. թվիսթը ինչ-որ մոլեգլին բան ունի իր մեջ, խենթացնում է անմիջապես, մոռացնել տալիս կյանքի հազար անհայտով հավասարումները, քեզ դարձնում բնական արարած, որ շարժումներ է անում, ապրում միայն մարմնով: Ոչ, թվիսթը



ամեննին էլ շի մոռացնում աշխարհը: Լեոնը տեսավ հասակավոր զույգին: Պարելով մոտեցան, ուզում էր որսալ նրանց խոսքերը՝ ինչպես թևնիսի գնդակն են որսում: Սրահում ազմուկ էր, հրմշտոց: Կինը զարմանալի թափանցիկ դեմք ուներ, երեսնական թվականների փոստային բացիկներից փոխ առած, ու ժպտում էր, ոտքերին նայելով: Տղամարդը իրեն ձիգ էր պահում, կարծես բանակում էր, շարքի մեջ, զսպված՝ համադգեստով, ուսադիրների աստղերի թվով, հրամաններով: Բայց մեկ է՝ նայում էր մի տեսակ վախվորած, անօգնական, հատկապես այն պահերին, երբ երիտասարդ զույգը դիպչում էր նրանց:

— Իմ անունը Լեոն է,— ասաց Լեոնը. հայացքը պարող զույգի կողմն էր,— երեսունչորս տարեկան եմ, շամուսնացած...

Աղջիկը ժպտաց:

— Իմը՝ Մարինե: Ասե՞մ քանի տարեկան եմ:

— Կարելի է: Առաջժմ կարելի է:

Հասակավոր զույգը նման էր փոթորկի բերանն ընկած տաշեղի կտորների: Մի քիչ խղճալի էր. ի՞նչ են մեջտեղ ընկել, տանը հեռուստացույց կնայելին, մուրաբայով թեյ կխմելին հարևանների հետ, կքնեցնելին թոռնիկներին, սուտ-սուտ հեքիաթներ պատմելով: Երևի թոշակ են ստանում: Երևի սկսել են ուշադիր նայել քաղաքային թերթի շորրորդ էջը, որտեղ մահազոհներ են տպվում, տարիք է: Երիտասարդ զույգը նորից դիպավ նրանց, տղամարդը նայեց խեղճ-խեղճ, ինչ-որ բան ասաց:

— Մարինե, իսկապես քանի՞ տարեկան եք:

— Քսանմեկ,— ասաց աղջիկը,— քսանմեկ:

— Տեսնո՞ւմ եք նրանց,— ու ցույց տվեց տարեց զույգին:

— Մեղք են,— ասաց Մարինեն,— ինչո՞ւ են պարում:

Ջահել տղան ինչ-որ բան ասաց տղամարդուն, կինը հանկարծ թողեց տղամարդու թևը և արագ գնաց դեպի սեղանը, իսկ նվազախումբն արդեն լռել էր: Լեոնը հանկարծ իրեն տեսավ տղամարդու և երիտասարդի արանքում, իսկ Մարինեն քաշում էր թևից:

— Ի՞նչ ասացիր մարդուն:

— Գու ո՞վ ես,— երիտասարդը նայում էր Լեոնին, ինչպես ակվարիումի միջի ձկներին,— տղա՞ն ես, թե՞ թոռ:

— Պետք չի,— ասաց տղամարդը,— պետք չի, տղերք:

— Թոռն եմ,— թունտ ասաց Լեոնը:

— Օհո,— երիտասարդը քմծիծաղ տվեց:

Հեռվից ձեռքով էին անում տղաները, որ հավաքվել-նստել էին սեղանի շուրջը. հատկապես՝ Ռուբենը: Լեոնը տեսավ, որ պարահրապարակը դատարկ էր, միայն իրենք էին կենտրոնում, ասես ամայության մեջ: Տղամարդը փշրված-սսկված մնացել էր իր տեղում՝ նա նման էր խաչքարի, խուլհամրի, սառնարանի: — Կրկնիր:

— Մի գոռա,— երիտասարդը նայեց շատ հանգիստ, ինչպես նայում են կինոյի տոմսին՝ իմանալու համար, թե որ կարգի որ աթոռն է, ինչպես նայում են անցած տարվա աֆիշին,— հետաքրքրասերն ես երևում, քնոի: Անեկոտ պատմեցի պատիք: Երևի լսած կլինես. էն, որ մեկն ասում է, թե որ դուք բառասունմեկ թվին կովում էիք, ձեզ խանդարո՞ւմ էինք, հիմա էլ դուք մի խանդարեք: Գիտես, չէ՞...

Տղամարդը նույն խուլհամրն էր: Լեոնը հանկարծ պատկերացրեց, որ նա կովել է Կերչում, տեսել հարյուր-հազարավոր դիակներ, որ դարսվել են իրար վրա ավազի պարկերի նման և որից նեղուցի ջրերը բարձրացել են, հեղեղել հողը, և մարդը նայել է այդ ամենին խելագար աչքերով: Ինչո՞ւ, ինչու հենց դա պատկերացրեց, իսկ երիտասարդը նայում էր նույն անտարբեր հայացքով:

— Ուրիշ բան ունե՞ս ասելու:

— Ունեմ,— հանգիստ ասաց Լեոնն ու ապտակեց:

Մինչ երիտասարդը վեր կբարձրանար ընկած տեղից, կփորձեր պատասխանել, տղաները վրա հասան: Բոլորը:

— Խելքդ գլխի՞դ է,— Ռուբենն էր,— բոլորը մեզ են նայում:

— Չկայցնեիր,— Լեոնը նայեց Ռուբենի դեպուստատական նշանին,— չկայցնեիր, հո սեսիա չէի՞ր գալիս:

— . . .

— Ներիր, ես զո՞հ եմ ինձանից, կյանքումս երևի ավելի լավ բան չէի արել,— Ռուբենի հետ գնացին դեպի իրենց սեղանը,— ներիր:

Ռուբենը նայում էր ցրված ու շղարմացած:

— Ի՞նչ ասաց քեզ:

— Ինձ չէ, նրանց,— ու պատմեց մի քանի բառով:

Ռուբենը նայեց Լեոնին: Ջարմացած, մտասևեռ: Հետո լցրեց բաժակները, խմեցին:



— Կենացը, — ասաց Ռուբենը:

Գառնություն՝ ինչպես եթե խիսին խմես, դեղին զզվանքը ծամես ատամներիդ տակ, ջուր լիմես հետեից, գառնություն: Որոշել էին ուրախանալ, շրջանալ, շրտուել քաղաքականությունից, կյանքից: Անասուններ են, ի՞նչ է: Ուտեն, խմեն, ծամեն, նույնը չե՞ն անում անասունները: Տարբերություն կա՞, որ նրանք խոտ են ուտում, իսկ իրենք իշխան ձուկ կամ ուղի՞նք պանիր: Երևի անասուններն էլ իրենց լեզվով գրույց են անում այդ նույն խոտի, խոտացրած կերի մասին, ուրեմն, ի՞նչ տարբերություն:

Տղաները մոտեցան. Արտակը, Կարոն, Հրանտը:

Սերուկը:

Երիտասարդը, որ նայում էր շփոթված ու կասկածով:

Ինչո՞ւ տաքացավ, գուցե պետք չէր, հը՞... Ո՛չ, արյունը սրբություն է, ավելի՛ քան կիսաքանդ վանքերը, քան մագաղաթները: Ծիծաղել արյան վրա, ո՛չ: Պատմում են, որ Կերչի նեղուցում ծովի ջուրը ամիսներով կորցրեց իր գույնը, կարմիր էր՝ սկզբում, հետո կամաց-կամաց պարզվեց: Քանի՞ երիտասարդ կյանք խառնվեց ծովին, լուծվեց, անհետացավ: Նրանք թվիսթ պարել չգիտեին, չհասցրեցին սովորել ու չեն սովորի արդեն, Լրևի շատերը տանգո էլ չէին պարում: Եվ ահա այս մեկը, որ նրանց հետ էր, սխալմամբ կենդանի է մնացել ու իր տեղը չի դառնում, շփոթված պտտում է աչքերը՝ ինչպես երկանքը առանց ձավարի: Ծիծաղելի է, երևի, բայց ամիսներ շարունակ Կերչի նեղուցում ջուրն արնագույն էր. գուցե դա՞ է արդեն ծիծաղելի նստեցին սեղանի շուրջը:

— Շնորհակալ եմ, — վերջապես խոսեց տղամարդը. ուրեմն խուլհամր չէր, — բայց ի՞նչ կարիք կար...

— Մի բաժակ բան խմենք, հայրիկ, — ասաց Ռուբենը:

— Դու գնա, — ասաց Լևոնը երիտասարդին, — մենք գործ ունենք, իսկ եթե ինձ հետ ուզում ես շարունակել, գրիբ հեռախոսիս համարը:

— Գիտեմ, — ասաց երիտասարդը, — նոր խմացա, թե ով եք, ձեր գրածները կարդացել եմ:

— Նույնի՞սկ, — Լևոնը հիշեց Հասմիկին ու Սերոբին, նրանց գերեզմանները, — սրանից հետո չկարգաս: Գնալուդ ժամանակն է:

Երիտասարդը վեր կացավ:

— Լևոնի կենացը, — ասաց Հրանտը, — ես միշտ կարծում էի... — երիտասարդը դեռ կանգնած էր սեղանի մոտ, — քո աղջիկը սպասում է, գնա, — երիտասարդը անխոս հեռացավ, — ես միշտ կարծում էի... Կենացդ, Լևոն:

Խմեցին:

— Որտե՞ղ եք վերավորվել, — հարցրեց Լևոնը:

— Գոմեկի մոտ, Բելոռուսիայում, — ասաց տղամարդը, — ի՞նչ իմացաք, որ վերավորվել եմ:

— Չգիտեմ:

Չգիտեմ, չգիտեմ, իսկապես, ո՞ւմ հետ են իրենք՝ հների՞, նորերի՞: Կամուրջ են երևի, երբ մեջտեղում այլևս գետ չկա, շաղկապ են, երբ հաջորդ բառը կամ նախադասությունը սկզբի է նոր տողից, պարարտանյութ են երևի՝ ապագա բերքի համար: Բայց մի՞թե նորը այս լակոտն է, որ կարդացել է իր գրածները: Չի գրի, այլևս ոչինչ չի գրի, եթե դրանց նմանների համար է: Հիմարություն: Իսկ Սերոբն ու Հասմի՞կը: Հիմարություն:

— Խմենք, — ասաց Ռուբենը ու հանկարծ համբուրեց Ասենին, — մեր տխրության կենացը...

Տխրության, որից ուզում են ազատվել: Ինչպե՞ս: Տխրությունը մատուցող չէ, որ դա կամ գնա մատի շարժումով: Ինչպե՞ս կարող են իրենք իրենցից ազատվել:

Իսկ զույգերը շարունակում էին պտտվել: Սևանը կեղծ էր, երևի նկարել է ինքնուս մի նկարիչ, նկարել է, մոռացել և անցել-գնացել: Լևոնը զվարթացավ այդ մտքից, Արտակը կուրախանա, եթե ասի, իսկ Ռուբենը դնդնում էր քթի տակ: Գոմեկի մոտ վերավորված մարդը գնացել էր: Սրբություններ կան. արյունը սրբություն է, միասին ապրած տարիները, միասին լուծ ընդհանրեցր սրբություն են, մի հատ մտով կարկանդակը, որ դժվար օրերին կիսում էին հինգ հոգով, սրբություն է: Կան: Երևի, իզուր տաքացավ: Գուցե այդ լակոտն էլ վատ տղա չէր, գուցե հենց նրա հայրն էլ մնացել է Կերչի ջրերում, պապը՝ Ղարսի պարիսպների տակ, իսկ պապի պապը թաղված է Հին Ջուղայի գերեզմանատանը, որ շուտով ջրամբարի հատակ կղառնա: Կամ գուցե նրա հայրը ողջաողջ հիմա նարդի է խաղում հարևանի հետ, իսկ պապը հանրապետական կարգի թողակ է ստանում՝ Չամբակուի կամուրջը դաշնակներից պաշտպանելու համար: Երևի իսկապես վատ տղա չէր, պարզապես արբորա-



ցամբ, փորձեց կատակ անել: Երևի Ի՞նչ է փոխվում դրանից, աշխարհը, Սերոբի և Հասմիկի գերեզմանները, Կերչի նեղուցի գո՞ւյնը:

— Կա՞մ սուրբ, — ասաց Կարոն, — կարծում էի, թե աջով միայն ինքնահոս բանել գիտես:

— Մեկ էլ շահել աղջկա թե, — լրացրեց Արտակը:

— Գուցե կրկնես, — առաջարկեց Հրանտը, — ինչ պակաս մոռոթ է, — ու ցույց տվեց Կարոյին, — նոր պսակված, ատամները մաքրած, կուշտ:

Միծաղեցին:

Ոչ: Սևանը կեղծ չէր: Հիմա, գիշերով ջրերը մուգ էին ու անշարժ, իսկ թերակղզու վրա, հեռվում, մոմերի նման հանդուժ էին վանքերը:

— Կա՞մ են լուսավորել, — ասաց Հրանտը:

Խմեցին լուռ:

Լուռ:

Լուռ:

Աշխարհի ամենալավ դրամաները շեն գրվի: Չեն գրվի, որովհետև բեմի վրա դերասանները շեն կարող նստել ու լռել:

Կյանքում՝ մարդիկ կարող են:

ԺԳ.

— Կարգացի, — ասաց խմբագիրը, — ուզում ես թերթը փակե՞ն:

— Ուզում եմ, — Լևոնը լուրջ, հանդիստ նայեց իր դիմաց նստած մարդուն:

Խմբագիրը ծիծաղեց:

— Կատակ եմ անում:

— Ես էլ, — ասաց Լևոնը:

— Երեկոյան, բյուրոյում քննում են: Տեսնենք: Ստեփանյանն ասաց, որ դու էլ լինես, ժամը յոթին: Շատ բան պիտի փոխես, եթե ուզում ես տպենք:

— Ե՞րբ ես գնալու:

— Է... — խմբագիրը խոր հոգոց քաշեց: — Ստեփանյանն ասաց բյուրոյից հետո: Հիմի որտե՞ղ պիտի լինեի, — լռեց, նայեց լուսամուտից դուրս, հայացքը երևի շատ ավելի հեռուն

գնաց, բացեց ինչ-որ դուռ, իջեցրեց ինչ-որ վարագույր, — հույս չունեմ, թե թողնի: Չգիտեմ:

— Ասում ես շատ բան պիտի փոխեմ:

— Ախր, հասկացիր, այ Լևոն, այ հոգիս, — խմբագիրը հանկարծ կծկվեց, — հողմածդ Արմայի համար էլ կարգացի, — Արման խմբագրի կինն էր, — լաց եղավ, սիրտը վատացավ, հարևաններին էր պատմել, տնային կառավարչին:

Լևոնի մեջ նորից զարթնեց դեռ, հանկարծ անտանելի դարձավ այս սենյակը, այս քաղցր-մեղցր գրույցը՝ թեև խայթոցներով: Բայց զսպեց իրեն, փորձեց զսպել, միայն ասաց.

— Իսկ մանիկյուրի վարպետին չի՞ պատմել, նա՞ ինչ կարծիքի է:

— Ձեռ ես առնում, — խմբագիրը նայեց փոքր-ինչ դառնացած, ասես հանքային ջրի փոխարեն օդի խմեց, հետո արագ ուշքի եկավ, սրբեց բերանը, սրբեց նաև դառնութունը, հանգստեց ինչ-որ թրթիռ, գտավ ինչ-որ դիմակ, — դու պիտի ոչ թե մեզ մոտ, այլ «Ողնիում» աշխատեիր, ընկեր Հակոբ Պարոնյան:

— Չէին ընդունի:

— Ինչի՞, — խմբագիրը զարմացավ երեխավարի, նորից կորցրեց դիմակը, զարթնեց նույն այն թրթիռը, — ինչի՞ չէին ընդունի...

— «Ողնին» ամենալուրջ ժուռնալն է, կարդում ես և ուզում ես լաց լինել, իսկ Պարոնյանն ուրախ բաներ էր գրում:

Խմբագիրը ծիծաղեց:

— Դե, ես գնացի, — ասաց Լևոնը, — երեկոյան կհանդիպենք:

— Գու գիտես, — խմբագիրը նայեց ինչ-որ բանի կարոտած աչքերով, — երեկոյան ավել-պակաս շխոսես, գործ չունես, առանց այն էլ Ստեփանյանը...

Լևոնը հանկարծ ետ դարձավ:

— Գիտե՞ս դու որտեղ հարմար կլինեիր:

— Որտե՞ղ:

— Պայթուցիկ նյութերի պահեստապետի պաշտոնում: Այ թե կզնահատեին զգուշութունդ: Ես գնացի:

Առանձնասենյակի կաշեպատ դուռը նույն գույնի էր, ինչ չհրկիզվող պահարանը, որ ծանր հաստատված էր անկյունում: Հսկա պահարանում խմբագիրը պահում էր կլոր կնիքը և մեկ



էլ... ծոցատետրը՝ հեռավոր ծանոթութիւնների հեռախոսների համարներով:

— Քաջ ես խաղում,— թույլ ասաց խմբագիրը:

— Դեռ չեմ սովորել խաղալ:

— Կսովորես:

— Երևի: Քեզ նման սեփական ունեւ, գրիւմ էլ՝ ինչքան ուզես: Զհրկիզվող պահարանը մետաղից էր՝ սառը, սենյակի դուռը փափուկ էր, մտմլաթի տակ բամբակի շերտ կար: Հիմա արդեն սպունգի շերտ են դնում, սինթետիկ սպունգի. բամբակից էժան է, հետո էլ փայտղիւնները բուն շեն դնում, լավ է:

— Գնացի,— արդեն չգիտես որերորդ անգամ կրկնեց Լեոնը, հանկարծ գլխի ընկավ, որ շի ուզում գնալ, որ դեռ տրամադիր է խոսելու փափուկ աթոռին նստած այդ մարդու հետ: Հանկարծ հասկացավ, որ բոլորովին էլ չի ատում նրան, չի ուզում կովել, ապացուցել ինչ-որ ճշմարտութուն: Զի ուզում: Հոգնել է: Հետո հիշեց, որ մեկ-երկու ժամից Վահրամիին պիտի վիրահատեն, ներսում ձգվեց ինչ-որ լար, մյուս բոլոր հարցերը դարձան շորորդական, դարձան գույնզգույն փուշիկներ, որ միանգամից օդ թռան ու, հետզհետե փոքրանալով-փոքրանալով, լուծվեցին երկնքի գույնի մեջ:

— Կհանդիպենք:

Հիվանդանոցի բակում մայրն էր, եղբոր կիներ և ակնոցավոր մի տղա՝ Արամը (եղբոր տեղակալն է, մի անգամ տեսել է նրանց տանը):

Մայրը անխոս նայեց:

Կուրացուցիչ արևի մեջ մայրը նման էր էրոնիտե արձանի. մուգ էր, կարծես էլեկտրական լարին նստած սև, ծերացած արծիվ էր, որ հոսանքը կուլ է տալիս ոտքերով, մարսում է ու սպասում, ինչի՞ է սպասում: Լեոնը նստեց մօր կողքին:

— Ի՞նչ են ասում, խոսեցի՞ր:

— Ուրիշ ճար չկա, մայրիկ:

— Տեսա՞ր:

— Պրոֆեսորի՞ն: Երեկ եմ տեսել:

— Նոր եկավ, մեկ էլ գնա խոսիր, տես ինչ ենք անում, տուններս քանդվում է:

— Գնամ, իսկ դու հանգստացիր, կվիրահատեն, լավ կլինի: Գնաց, բարձրացավ երկար, մաշված աստիճաններով:

Հիվանդանոցի պահակը դիտեր նրան. Լեոնը միշտ ձեռքով էր բարևում, իսկ ձեռքի մեջ թղթադրամ էր լինում, լավ գիտեր: Պահակը Լեոնին հասցրել էր պատմել, որ շորս երեխա ունի («երեք աղջիկ, մի հատ էլ փոքր աղջիկ»... ամառից ասի շորս աղջիկ), թեպետ կարող է և շունի, ո՞ւմ է դա հետաքրքիր: Աստիճանները երկար էին ու մաշված՝ ինչպես վանքի սալահատակը, ինչպես դատարանի աստիճանները: Լեոնը հիշեց, որ Սևանից վերադառնալիս արդեն գիշերված մեկն էր, գրոսայգի մտան: Երկար ժամանակ ազատ նստարան որոնեցին: Այգում մօտ էր, ուղիորարձրախոսը շէր ճշում, ծառուղիներում մոռացել էին ծառերի նկարներ դնել. ասենք, գարունը նոր էր գալիս, կղնն, բարձրախոս էլ կլինի, լույսեր էլ՝ չուրաքանչյուր նստարանի վերևում: Գտան: Նստեցին, լռեցին: «Մերանում ենք»,— հարչուրերորդ անգամ ասաց Ռուբենը: Կողքի նստարանի գույգը կարծես «Համբույր» քանդակն էր խաղում և հանկարծ անձայն ծիծաղեց: «Մեզ վրա են ծիծաղում,— ասաց Հրանտը,— ախր, ի՞նչ գործ ունեք էս նստարաններին»: Հետո երևի բոլորն էլ հիշեցին, որ իրենց ջահելության օրերին քաղաքում մի կարգին գրոսայգի էլ չկար և միակ փրկութունը կիսակառույց շենքերի պատերն էին: Լռեցին: Հետո Արտակն ասաց. «Բան չեմ ուզում, գոնե մի անգամ սրանց նման այգի գալի՞նք», «Սրանց նման չէինք դա,— փրկաստիճանից Ռուբենը,— մենք որնէ ազատ բնակարան կգտնեինք, բազմոցով-բանով: Մերացել ենք...»: Ու քթի տակ սկսեց դնդնալ: «Քաղաքի կենտրոնում ինչքան հող է կորչում այգիների համար,— ասաց Հրանտը,— ո՞ւմ է պետք, իսկ գործարանները տանում, սար ու շոլում են սարքում»: «Հիմար բաներ ես ասում,— երգն ընդհատեց Ռուբենը,— պարզապես ծերանում ենք»:

— ... Ի՞նչ հույս կա, պրոֆեսոր:

— Շատ եք ուշացրել: Կփորձենք:

Պրոֆեսորն արմունկները հենել էր գրասեղանի հաստ ապակուն, մատներն ուղիղ էին, երկար ու չէին դողում, բացարձակ անշարժ էին: Լեոնը հանկարծ նկատեց այդ չղողալը, և դա ինչ-որ հավատ ներարկեց նրա մեջ, վստահութուն:

— ...Երեք օր շարունակ ներքին արյունահոսութուն: Բարդ է:

Հիշեց Վահրամի դեմքը, երբ ինքը հայանեց վիրահատության մասին: «Գու ի՞նչ ես կարծում, վիրահատեն...»: «Երե-



խաներին, Հասմիկին քեզ եմ թողնում»: Լևոնը փորձեց կատա-  
կի առաջ. «Իսկ բանկոմ փող-բան շունն՝ ս...»: «Պարտքեր  
ունեմ», — ու տխուր նայեց առաստաղին:

— Պրոֆեսոր, գուցե չվերահատեք, արյուն շատ է կորցրել,  
կղիմանա՞...

— Վերահատելը միակ ելքն է:

— Միա՞կ:

— Միակ:

— Միա՞կ, ասում եք:

— Պիտի փորձել:

...Զբոսաչգում երկար մնացին: Միայն նորասպակ Կարոն  
շտապեց, ծաղրեցին, բաց թողին: «Տարվա ո՞ր ամիսն ես  
սիրում, Կարո»: «Մեղրամիսը», — կարողացավ տակից դուրս  
գալ Կարոն: Միծաղեցին, լռեցին: «Քսան տարեկան լինեիր», —  
ասաց Լևոնը: «Զիե՞րը քսան տարեկանում ծեր են արդեն», —  
ասաց Հրանտը, — նրանց համար քսան տարին ամեն ինչի  
վերջն է»: «Քսան տարեկան լինեիր և այդ տարին չվերջանար», —  
հիշեց Լևոնը, հետո հիշեց ոչ թե քսան, այլ տասնյոթ, բայց ինչ  
տարբերություն, տարբերությունը հետո է սկսվում, — չվերջա-  
նար...»: Վախեցավ բարձրաձայն ասել: Հրանտը ձեռ կաններ:  
Զույգերը կամաց-կամաց ցրվում էին՝ իրար ձուլված կամ  
ձեռք-ձեռքի, իսկ Հասմիկն ու Սերոբը միայն մի անգամ համ-  
բուրվեցին և զրա համար վճարեցին՝ երկու կյանք:

— ...Պրոֆեսոր, եղբայրս ծանր կյանք է ունեցել, տասնութ  
տարեկանում:

— Մեկ համար մարդը մարդ է, հավատացեք, ամեն ինչ  
կարվի: Տա աստված...

Աստված:

«Առավոտ լուսո, արեգակն արդար...»: Ներսես Ծնորհալու  
շարականը զնգաց ներսում, հետո խմբազրի հաշտված, ամեն  
ինչի հետ հաշտված բասը, հետո հիշեց, որ զբոսաչգուց Ռու-  
բենի հետ միասին զնացին Լիլիթի մոտ սուրճ խմելու, իսկ  
այսօր երեկոյան, քիչ հետո՝ «քննելու» են Սերոբի ու Հասմի-  
կի «հարցը»: Վաղուց հնարել են զրբեր կարդացող մեքենա  
Իսկ կլինի՞ մտքեր կարդացող մեքենա: Կամ զգացմունքներ,  
ուրիշի ներքին ապրումները կարդացող մեքենա Երևի

դա էլ կհնարեն մի օր ու... ու կկործանվի մարդկությունը:  
Մայրը կարծես առավոտից չի փոխել դիրքը, աչքերը կիսաբաց  
են, շրթունքները շարժվում են: Երևի աղոթում է: Ի՞նչ: «Առա-  
վոտ լուսո, արեգակն արդար...»: «Արեգակն արդար»: «Արդար»:  
«...դար»:

— Ի՞նչ ասաց, հը՞...

Ուրեմն, փակ շէին աչքերը:

— Երևանի ամենահայտնի պրոֆեսորն է, մայրիկ, ավելի  
լավը չկա՝ ինչ միևնույն օր հիվանդանա, ինքն է վերահատում,  
հրաշք-ձեռք ունի, — հիշեց պրոֆեսորի մատները, որ շէին դո-  
ղում, հավատաց, — լավ կլինի, մայրիկ:

— Աստված տա:

Երրորդ հարկի լուսամուտում երեաց Աշոտը, ուրեմն, սկսվեց:  
Երեք ժամ տևող լուսություն:

Երեք ժամ, երբ շգիտես ինչ անել: Երբ բոլոր բառերը թվում  
են ավելորդ: Երբ ժամանակը շարժվում է զանդաղ կամ չի  
շարժվում: Երեք ժամ:

Դռների մեջ հայտնվեց Աշոտը:

— Վերջացրին, լավ անցավ:

Լևոնը հանկարծ հիշեց, որ առավոտվանից ոչինչ չի կերել,  
նույնիսկ սուրճ չի խմել, հետո մտածեց, որ մինչև բուրջի  
սկսվելը ճանապարհին կհասցնի ուսել բուսերբրոդից-բանից:

— Ասում ես՝ լավ անցավ, — Աշոտին նայեց կասկածա-  
բով:

— Սիգարետ ունե՞ս, — հարցրեց Աշոտը:

— Ունեմ, ֆիլտրով չի:

Քայլեցին:

— Վերահատումը փայլուն էր, չեմ խարում, երեխա չես:  
Հիմա մնաց սրտին, կղիմանա՞: Արյուն շատ է կորցրել:

— Կարդիոգրամմա արի՞ք, — հիմար, անհեթեթ միտք: Լևոնը  
չփոթված նայեց Աշոտին, բայց ախր մի բան պիտի հարցնեիր:

— Կանեն, — հանգիստ պատասխանեց Աշոտը, — հիմա չէ,  
մի քանի ժամից:

Անձրև շէր գալիս:

Գարնանային կարտած արև էր՝ մերկ ու կոկետ, ինչպես  
բնորդուհին երիտասարդ նկարչի առաջ: «Արեգակն արդար...»:



— Դե ես վերև բարձրանամ,— ասաց Աշոտը,— դուք էլ տուն գնացեք, հանգստացեք, իննին-տասին նոր կարող եք գալ, նարկոլոգի դուրս եկած կլինի, կտեսնեք...

Մայրն ասաց, որ ոչ մի տեղ էլ չի գնա:

...Ուշ գիշերով, ավելի շուտ լուսաբացին մոտ, երբ բաժանվում էին, Ռուբենն ասաց. «Տխրեցի, ավելի լավ էք չհանդիպելինք»: Գնաց, օրորվելով փողոցի դեղին դատարկության մեջ, իսկ Լևոնը վերադարձավ կիլիթի մոտ:

ԺԿ.

Գլխի փոխարեն Լևոնը ուսերին զրամբեհնա էր զգում, զրամբեհնան տկալում էր անձրևի նման՝ նյարդային ու անընդմեջ, ապակե կաուրնեերին թափվող անձրևի նման: Փողոցում երեկո էր, գույնզգույն լույսեր, մարդիկ, գարուն էր: Նա էլ՝ բոլորի նման գարնանային թեթև անձրևանոց էր հագել, պատահական հայացքը նրա դեմքին էլ մի քիչ հոգս կրոններ, մի քիչ հույս, մի քիչ ժպիտ, մի քիչ անտարբերություն:

Գրամբեհնան տկալում էր:

Գրվում էին էջեր, որ չէին գրվելու, որ ոչ ոք չէր կարգալու, գրվում էին Լևոնի գլխի, սրտի, լուռության մեջ:

«...Ես տեսել էի նրանց գերեզմանները, խոսել էի նրանց ընկերների, ուսուցիչների, ծնողների հետ: Իսկ հիմա «քննում» են նրանց «հարցը»: Երկար, խնամքով փայլեցրած սեղանի շուրջ նստած են ջահել մարդիկ, շատ են ուղում լուրջ երևալ: Ստեփանյանն ինձ գլխով է անում: Պատի տակ դասավորված աթոռների դասավորված նստել են գյուղի դպրոցի դիրեկտորը, Բենո Պապիկյանը (նա ինձ իսկույն նկատում է, ժպտում), հետո՝ շատ ջահել մի աղջիկ՝ աշակերտական շորերով, երկար մազերով: Հիշում եմ դեմքը. Սերոբենց դասարանում եմ տեսել: Հետո ուրիշներ են նստած, բոլորին էլ ճանաչում եմ: Ստեփանյանը հայտնում է օրակարգը, ապա ձայնը տալիս նվարդ Անտոնյանին: «Պատմեք, ընկեր Անտոնյան,— ասում է Ստեփանյանը,— պատմեք ինչպես է եղել»: Ես զարմանում եմ՝ ի՞նչ պիտի պատմի նվարդը, գիտեմ, որ նա գյուղում չի եղել, բայց հիշում եմ, երբ ես մի քանի խոսքով պատմեցի, աչքերը լցրեց: Նվարդին ես վաղուց եմ ճանաչում. սենտիմենտալ

աղջիկ է, մի քանի ամիս առաջ ընտրեցին քարտուղար:

Լավ է, որ նրան են հանձնարարել զեկուցումը:

Փողոցն, այնուամենայնիվ, փողոց է՝ իր աղմուկով, օրենքներով, տրամաբանությամբ: Փողոցը գործ շունի քո այդ րուպեի տրամադրության, մտքերի, հուսահատության հետ: Փողոցը բռնակալ է ու պիտի ենթարկվես:

— Ծիւիւու բան կա՞ մոտդ:

— Կա,— ասաց Լևոնը:

— Կրակ էլ տուր:

Լևոնը վառեց լուցկին, քամի էր, պաշտպանեց ձեռքերի ափերով, մոտեցրեց անձանոթի դեմքին: Մի պահ թվաց, որ անձանոթի դեմքը խորովվում է լուցկու դեղին օջախի վրա: Զահել դեմք էր, աչքերը՝ քնովի տիկնիկների աչքերի նման փակվում-բացվում էին. խմած է երևի: Լևոնը նախանձեց նրան:

— Ծնորհակալ եմ,— ասաց ու գնաց:

Գնաց՝ օրորվելով:

Ահա և տաքսաֆոն:

— Աշո՞տ:

— Ամեն ինչ լավ է կարծես...

— Գա՞մ:

— Հիմա չէ: Մեկ-երկու ժամից:

— Հոգնած եմ:

— Տանը եղիր, զանգ կտամ, ես եմ հերթապահում:

— Լավ:

«...Նվարդը երկար խոսեց: Ես նստած էի այնպես՝ ինչպես երեխան կրկեսում: Պարզվեց, որ Սերոբն ու Հասմիկը հոգեկան թուլության օրինակ են, որ Կրասնոդոնի երիտասարդ զվարդիականները կկարմրեին նրանց համար, որ դա հավանորեն արտասահմանյան վատ կինոնկարների աղղեցություններ է (խեղճ երեխաներ): Ես անընդհատ փորձում էի որսալ նվարդի հայացքը, չէի կարողանում. նա խոսում էր՝ կարծես ինչ-որ դատարկության նայելով: Նույն այդ աչքերով էր, որ նա լաց եղավ մի քանի օր առաջ, միջանցքում: Հիշում եմ նրա խոսքերը. «Ինչ պատկերացնո՞ւմ ես, Լևոն, ի՞նչ ուժ է եղել այդ երեխաների մեջ, ի՞նչ մաքրություն: Նախանձում եմ, Մի անգամ գնանք նրանց գյուղը, լա՞վ: Մեխակներ կտանենք»: Խոնջ անեմ ես, ընդհատե՞մ նրան, հիշեցնե՞մ այդ խոսքերը: Զգի՛սեմ: Հետո նվարդն ասում է, որ ինքնասպանությունը հետե-



վանք է քաղաքական-դաստիարակչական անբավարար աշխատանքի, որ դպրոցում բարոյական թեմաներով զեկուցումներ չեն լինում: Սարսափելի էր: «Ես պաշտպանում եմ դպրոցի դիրեկցիայի քայլերը,— ամփոփեց նվարդը,— իհարկե, դասարանը, դպրոցը չպիտի մասնակցեին նրանց թաղմանը: Կներեք, բայց պատանիների մահը մի քիչ նման է դավաճանության, իսկ մեզ չեն սովորեցրել փառքով թաղել դավաճաններին: Ես այսպես եմ կարծում»: Նվարդը նստեց, դարձյալ նայելով նույն դատարկությանը: Ստեփանյանը գլխով արեց ու թեթև ծպտաց: «Գուցե դիրեկտորին էլ լսենք, հետո...»: Ես դեռ փորձում էի բռնել նվարդի հայացքը, իսկ դիրեկտորը խոսում էր արդեն: Ես լսել էի նրան, ոչինչ նոր չէր: Վերջում ինձ էլ անդրադարձավ. «Օրինակ, ընկեր Շահինյանն էլ, խոսք չունեմ, մեկ-մեկ լավ բաներ է գրում, կարդում ենք, բայց եկավ մեր գյուղ, սխալ ուղղության վրա դրեց մեր ջահելներին...»:

...Սուրճը շատ դառն էին արել, կոնը շամեց: Մի բաժակ կոնյակ ուղեց: Նստած էր «Արաքս» սրճարանում, բարձր, պտտվող աթոռին, դիմացը հայելի էր, որ կրկնակի էր դարձնում մարդկանց, շշերը, քաղցրավենիները, լույսերը, ծուխը: Վահրամն, ուրեմն, դեռ չի արթնացել, հետաքրքիր է, զգո՞ւմ է հիմա որևէ բան, ի՞նչ է զգում: Երեկ գիշեր Ռուբինը զանգահարեց, քիչ անց՝ Հրանտը: Լսել էին Վահրամի հիվանդության մասին: «Ի՞նչ կարող ենք անել»,— ասացին: Ինչ պիտի անեն որ, բայց լավ էր, որ զանգահարեցին: Տաթևիկը այսօր եկած պիտի լինի, երևի տուն է զանգահարում: Լավ աղջիկ է:

— Մի բաժակ էլ:

Տեսավ կնոջ ձեռքը միայն, որ շշեց կարմրավուն հեղուկ էր լցնում իր բաժակը: Ի՞նչ է զգում Տաթևիկի նկատմամբ, դժվար է ասել: Զարմանալի աղջիկ է: Կոնյակը խմեց միանգամից, ներսը տաքացավ:

Իսկ գլխում գրամեքենան շարունակում էր տկտկալ:

«...Ես կարծում եմ,— շարունակում էր դիրեկտորը,— այստեղ ընկեր Շահինյանի մասին էլ խոսք պիտի լինի, քանի որ նա հորված է գրելու և վախենում եմ հիմա էլ թյուրիմացության մեջ գցի մեր ամբողջ փառապանծ երիտասարդությանը»: «Դա արդեն Ձեզ չի վերաբերում,— ընդհատեց Ստեփանյանը,— ասացեք, որտե՞ղ էիք դուք, ձեր մանկավարժները, կոմերիտա-

կան կազմակերպությունը, ինչպե՞ս կարող էր դա տեղի ունենալ մեր օրերում,— հետո հանկարծ նկատեց դիրեկտորի կողքին կուշ եկած աղջկան,— դու ինչ կասես, ընկեր...— նայեց առջևը դրած թղթին. երևի կանչվածների ազգանուններն էին,— ընկեր Կարապետյան»: Աղջիկը շփոթված ոտքի կանգնեց. «Ի՞նչ ասեմ»: Նայեց հավաքվածներին: Ստեփանյանը վրա տվեց. «Չգիտե՞ս ինչ ասես: Տարիներ շարունակ կողք-կողքի սովորել եք, ընկերություն եք արել ու շեք ճանաչել նրանց: Գոնե չէի՞ք նկատում նրանց կապը, չէի՞ք տեսնում ո՞ւր են գնում դասերից հետո, ի՞նչ են անում: Իսկ ինչո՞ւ երկու կոմերիտական գնացին նրանց թաղմանը, զբաղվե՞լ եք նրանց հարցով...»:

Աղջիկը լուռ նայում էր Ստեփանյանին, զարմացած էր, երևի բառեր էր որոնում: «Նոսիք, Գայան ջան,— բարձր ասաց Պապիկյանը,— քեզ են սպասում, ի՞նչ ես բերանդ ջուր առել»: «Սպասում ենք, օրիորդիկ»,— սառը ասաց նվարդ Անտոնյանը:

Ոչ, ես չէի կարող լուել:

— Գայանե, — բարձր ասացի ես, — ի՞նչ մի դժվար բան է դատապարտել ընկերներին, մանավանդ որ նրանք մեռած են... Համարձակ կեղծիր, համարձակ:

Ստեփանյանը ինչ-որ բան ասաց, երևի իմ հասցեին, նվարդը վերջապես նայեց ինձ, ես տեսա, որ նրա աչքերը բաց կանաչ են, Պապիկյանը գլխով արեց, իսկ դպրոցի դիրեկտորը սկսեց հազալ: «Երգիծանքը թողքեք, ընկեր Շահինյան,— շոր ասաց Ստեփանյանը,— սրամտելու տեղը դա, մենք էլ կսրամտենք, հիմա լուրջ հարց ենք քննում»: «Ես, ախր, ի՞նչ ասեմ,— ի վերջո խոսեց Գայանեն,— Հասմիկը իմ ամենալավ ընկերուհին էր, իսկ Մերոբից լավ տղա աշխարհում չկար: Ես ամեն օր ծաղիկներ եմ տանում նրանց գերեզմանին,— բարձրացրեց հայացքը, նայեց մեծավարի,— անիծում եմ ինձ, որ թաղմանը չդնացի: Մայրս մեր դպրոցում դասատու է, շթողեց: Որ չեմ գնացել, դրա համար պիտի պատժեք՝ միայն դրա համար»: «Եվ կպատժենք,— նստած տեղից ճշաց նվարդը, նվարդ Անտոնյանը,— այդպես մտածող չի կարող զեկավարել ուրիշներին»:

Ոչ, ես չէի կարող լուել:

— Հենց այդպես մտածողն է, որ կարող է:

Մեր աչքերը վերջապես հանդիպեցին: Ոչ, նրա աչքերը կու-



նաչ չէին, ոչ էլ բաց կանաչ, ինձ թվացել էր, սովորական նշածև աչքեր էին՝ կարճ թարթիչներով, հանգիստ ու ոչ մի բանից չզարմացած:

— Լեոն, մի խանդարիր, — մեղմ ասաց Ստեփանյանը, — քեզ ձայն կտամ, ուզո՞ւմ ես:

— Չեմ ուզում:

Գայանեն նստեց: Մի քանի րոպե սենյակում աղմուկ էր, հետո իրար հետևից խոսեցին մի քանի ուրիշը, ասացին նույնը, ինչ Նվարդ Անտոնյանը: Գայանեն նստել էր զլխահակ, Պապիկյանը նրա ափանջին ինչ-որ բան էր ասում՝ երկար-բարակ, սենյակում կարծես օդ չկար:

... Խեղճ, միամիտ գերեզմաններ, դուք, իհարկե, ծիծաղելի եք ատամային կայանի հարևանությամբ, բայց դա ոչինչ, կոմունիզմի ժամանակ էլ երևի մարդիկ կմեռնեն հանուն սիրո և մի օր երևի արձան կդնեն: Անհայտ սիրահարներին, ինչպես Անհայտ զինվորին են դնում: Եթե մինչև այդ օրն ապրեն, Վարդան Ստեփանյանն էլ, Նվարդ Անտոնյանն էլ սրտամորմոք ճառ կասեն հուշարձանի բացման ժամանակ, ծաղկեպսակ կդնեն: Ոչինչ, որ ճառի տեքստը ուրիշը գրած կլինի, նրանք վարժ կարդում են, երբ որ լավ է մեքենադրված, կկարդան և գուցե նույնիսկ ձեր օրինակն էլ մտաբերեն՝ իբրև սիրո բարձր արտահայտություն: Այդ հետո, իսկ հիմա... Հիմա դուք օրակարգի սովորական հարց եք, քննարկվում եք բայտ կարգի, ձեր մասին երկու օր առաջ արդեն որոշման նախագիծ է գրված, որ Ստեփանյանը նայել է, ուղղումներ արել կարծիր մատիտով, հիմա այդ նախագիծը կդառնա որոշում, և դուք վերջապես կխմանաք՝ ճիշտ եք արել, որ սիրել եք իրար, իրավունք ունեի՞ք մեռնելու, երբ արդեն անհնար էր սիրել: Նրանք կորոշեն, նրանք բոլոր հարցերի պատասխանները գիտեն, միայն համբերություն ունեցեք, գերեզմաններ, ի՞նչ ունեք շտապելու...

Ոչ, ես չէի կարող լսել:

— Տեսնում եմ, որ շատերը շտապում են, երևի կինոյի առնս ունեն, Ֆրանսիական նոր նկար է, կարճ կկապեմ: — Այս խոսքերից հետո Ստեփանյանը սառը նայեց ինձ, ուղեց ինչ-որ բան ասել, կույ տվեց, — կարճ կկապեմ՝ ահա թե ինչ եմ առաջարկում. Հասմիկին և Սերոբին ետմահու հեռացնել կոմերիտ-միությունից, իսկ զպրոցի գերեկտորին, ընկեր Բեգույանին ներ-

կայացնել վաստակավոր ուսուցչի կոչման, և թե դեռ շունի այդ կոչումը:

— Ձե՞ռ ես առնում այսքան մարդուն, — խուլ ասաց Ստեփանյանը:

— Տրամաբանության բոլոր կանոններին համապատասխան՝ ամփոփում եմ ձեր քննարկումը, — ու նստեցի:

— Ես կամփոփեմ...

Խեղճ, միամիտ գերեզմաններ, դուք ինչ-որ բան էիք ուզում ապացուցել աշխարհին:

Սենյակում մուլ էր, միայն մագնիտաֆոնի կանաչ աչքն էր վառվում: Զգզվեր համեմատություններից, կմտածեր, թե նման է կիկլոպի աչքի, խորհրդավոր՝ ինչպես անհայտությունը: Գրամեքենան զլխում հանդարտվել էր, իսկ մինչև հիմա գրված էջերը շնչվում էին, կարծես ինքնահոսով գրված թղթերին անձրև էր գալիս, հանդարտ, աշնանային անձրև, որ մանուշակագույն թանաքը փոքրիկ առվակներով խառնում էր իրար: Ինչ-որ մեկը թղթերի վրա կարծես լաց էր եղել մանուշակագույն արցունքներով: Միացրեց ռադիոն, վերջին լուրեր էին հաղորդում, մագնիտաֆոնի պատարագը խառնվեց վերջին լուրերին: «Սուրբ-սուրբ...» և «Ամասիայի շրջանի անասնապահները պատվով են կատարում...»: Փորձեց քնել, փորձեց ոչինչ չմտածել: Մայրը եկավ աչքերի առաջ՝ նույն դիրքով, ինչ հիվանդանոցի բակում: Մարդկանց թվում է, թե լավ գիտեն իրենց հարազատներին: Միեկ: Ինչ գիտի մոր մասին: Մանկության դժվար օրերին, երբ մայրը, գրավ դնելով երիտասարդությունը, հաշտվելով մենակության հետ, պահում էր իրեն ու վահրամին, ինքը համարյա ոչինչ չէր հասկանում: Հետո, երբ տարան վահրամին, և հայրը մեռավ, նա մոր հետ մնաց մենակ, մոր սիրտը կարծես կծկվեց, քարացավ: Քանի՞ անգամ է մայրը համբուրել իրեն: Լեոնը դժվար թե հիշի: Մայրը պարտավոր էր ուժեղ մնալ, իսկ ուժը փոխում է կնոջը, նրան դարձնում է ուրիշ: Հետո վահրամը վերադարձավ, և մայրը ամբողջությամբ նվիրվեց որդուն, կարծես ուղում էր վերադարձնել նրան այն տարիներին չծախսած քնքշանքը, երբ իրարից հեռու էին: Լեոնն արագ մտավ կյանք, կյանքը նրան երես տվեց, ինչպես ասում են: Լավ էր սովորում, ոտանավորներ էր գրում, արտասանում, անկեղծ էր ու բռնկուն, շատ ընկերներ ունեցավ: Շուտ հասունացավ: «Դուրսն է հասունա-



նում,— կասեր Կարոն,— մարդը ծերանում է: Մերացավ...  
Ով գիտե, ծերանալը ոչ կնճիռ է, ոչ արշան ճնշման փոփոխու-  
թյուն, ոչ դիմում՝ կենսաթոշակի խնդրանքով... Անջատեց  
ոսպիտոն: Ավելի լավ է քնել, հիմա Աշոտը կզանգահարի: Փա-  
կեց աչքերը: Ի՞նչ է կատարվում նվարդի հետ, արժե՞ր արդյոք,  
որ ինքը տաքացավ, ում ինչ համոզեց: Հետո ամեն ինչ խառնվեց  
իրար՝ ինչպես վերացական նկարում: Երեկ քնեց: Քաղաքի  
ձայները համարյա չէին հասնում նրան, միայն մագնիտաֆոնն  
էր շարունակում իր պատարագը:

Քնեց:

Հեռախոհան է:

Իհարկե:

— Աշոտ:

— Լեոն, շտապ արի:

Շտապ:

Վահրամը ծածկված էր սպիտակ սավանով, և Լեոնը հաս-  
կացավ, որ ամեն ինչ վերջացել է: Հիվանդասենյակում պրո-  
ֆեսորն է, Աշոտը և երկու բուժքույր: Պրոֆեսորը կանգնած  
էր գլխահակ, ձեռքերը խաշած կրծքին: Լեոնը ետ տարավ սա-  
վանը, նայեց եղբոր դեմքին: Բերանը կիսաբաց էր, երեսի  
մագերը երկարել էին ու ավելի էին սև երևում: Ուրեմն ամեն  
ինչ վերջացավ: Վերջացավ:

Հիվանդանոցի բակում Հրաման էր, Կարոն, խմբագիրը,  
Տաթևիկը: Ե՞րբ իմացան, և՞ որ հասցրին հավաքվել: Գիշերը  
նման էր թույնի, որ հարկավոր էր խմել մինչև վերջ: Եկավ նաև  
Ռուբենը: Նստեցին: Լուս ծխեցին:

— Ե՞րբ եկար,— հարցրեց Տաթևիկին:

— Մի ժամ առաջ, զանգահարեցի, հեռախոսը շարժախա-  
նեց:

Նորից բարձրացավ վերև: Վահրամի մահահալը դատարկ էր:

— Ներքև տարան,— ասաց բուժքույրը:

— Մորդ առավոտյան կհայտնենք,— ասաց Ռուբենը, որ  
գալիս էր կողքից:

— Հա, ի՞նչ կարիք կա հիմա:

Իջան ներքև:

Վահրամին դեռ չէին տարել ներքնահարկ, միջանցքում էր:  
Պատգարակը հատակին էր դրված: Միջանցքում ոչ ոք չկար:

Լեոնը կռացավ, ետ տարավ սավանը, Վահրամը մերկ էր: (Այլևս  
մրսելու վախ չկա,— մտածեց Լեոնը): Ռուբերը երևում էին  
սավանի տակից: Լեոնը ձեռքը դրեց եղբոր ճակատին:

— Տաք է,— հանկարծ ասաց, տաք է:

Ռուբենն էլ կռացավ, շոշափեց ճակատը, Իրոք, մի քիչ տաք  
էր: Լեոնը ձեռք տվեց ոտքերին, կրծքին: Եկավ բժիշկը:

— Միջանցքի օդից է,— ասաց և հետո՝ տարբեր մարդիկ  
սառչում են տարբեր ժամանակամիջոցում:

Լեոնը ծածկեց եղբոր մարմինը: Ծածկեց զգուշությամբ:  
Ներսում հանգիստ ամալություն էր, անապատի պես հանգիստ:

— Գնանք,— ասաց Ռուբենին:

ԺԵ.

Հենց շեմին Լեոնը հանգցրեց սիգարետը, շգիտես ինչու  
հազաց և հրեց կաշեպատ դուռը, որի վրա, ապակե տախտա-  
կին, ոսկեգույն տառերով, ինչ-որ բան էր գրված: Ներս մտավ:  
Գրասեղաններից մեկի մոտ նստոտած կանայք միանգամից  
դեպի դուռը շրջվեցին: Լեոնը տեսավ, որ գրասեղանին հաց  
կա, մածուի շեր, թեյնիկ: Ապակե նույնատիպ տախտակի  
վրա, նույն ոսկեգույն տառերով՝ գրասեղանի վերևում էլ ինչ-  
որ բան էր գրված, այս անգամ երկու բառ: Լեոնը կարդաց:  
Կարդաց և կարծես նոր միայն գիտակցությանը հասավ, որ  
կանայք նախաճաշում են եղբոր գրասեղանի շուրջը նստած:  
Ինչ-որ նյարդ նվաց ներսում, և նա շտապ ետ դարձավ, ձեռքը  
մեկնեց դռան բռնակին. դրոտմ կսպասի:

— Ներս եկեք,— լսեց իր հետևից,— մենք հիմա կվերջաց-  
նենք:

— Ոչինչ, դուք նախաճաշեք,— ասաց արդեն հանգիստ,  
սիրտը հանկարծ դարձավ հաշտված ու անտարբեր,— այստեղ  
կսպասեմ,— դուր ծածկեց, հետո շուտ եկավ դեպի լուսամու-  
տը, որ ավելի մոտիկ էր:

Լուսամուտից երևում էր բակը: Մարդիկ էին գնում-գալիս:  
Բակում ցխի էր: Գարպասից աղմուկով ներս մտավ մի բեռ-  
նատար ավտոմեքենա, և վարորդը, շտապ իրեն ներքև գցելով,  
բռնեց անցնող մարդկանցից մեկի թևը: Լեոնը չէր լսում նրանց  
ձայները, հետո տեսավ, որ նրանք թևանցուկ արին իրար ու  
դուրս եկան բակից:



Կանայք շտապով հավաքում էին սեղանը: Լուսամուտի անդրադարձումի մեջ Լեոնը տեսավ, որ մեկը եռանդով փայլեցնում է գրասեղանի հաստ ապակին: Վահրամի մատնահետքերն են ջնջվում,— անասելի տխրությունը մտածեց, կույ տվեց ծխախոտի ծուխը, շուրջ հիշել ուշին: Հետո զգաց, որ մեկը կանգնած է կողքին, շուտ եկավ:

— Ինչպե՞ս են, Հասմիկը, երեխաները,— կինը պարզապես ուզում էր գրադեցնել նրան, Լեոնը հասկացավ,— վաղն ուզում ենք գնալ-տեսնել:

— Լավ են,— ասաց Լեոնը,— լավ են, ինչպես պիտի լինեն:

— Եթե ժամանակին ասեր, տանելիք հիվանդանոց...

— Հա, իհարկե, ինչ խոսք...

Վահրամի սեղանի հեռախոսը զնգաց:

Զնգաց երկար:

Կանայք իրար նայեցին ու շարունակեցին՝ ով ինչ անում էր:

Ոչ ոք չվերցրեց խոսափողը: Խոսափողի վրա էլ Վահրամի մատներին հետքերն են, շնչառության հետքերը: Խոսափողն էլ կտրեհն, կփայլեցնեն, երևի նաև կմաքրեն սպիրտով: Այստեղից պիտի դեղատուն գնա, հետո երևի եղբոր տուն՝ հիմնարկի որոշ գործեր են մնացել տանը, կբերի, կտա սրանց և վերջ: Վերջ: Ինչի՞ն: Մի անգամ, անցյալ տարի էր, Վահրամի հետ էր այստեղ եկել: «Լավ հարեմ ունես»,— կատակեց, շորս հաշվապահուհիներին ցույց տալով: Եղբայրը ծիծաղեց, կանայք էլ ծիծաղեցին. նրանցից ամենաջահելը բառասուն տարեկան էր: Հիմա այդ «հարեմը» նստած է նույն սենյակում, իսկ եղբայրը չկա, չի լինի երբեք: Վերջին տարում շատ քիչ էին հանդիպում իրար, շեր ստացվում: Լեոնը մտածում էր, որ մեծ եղբայրը իր աշխարհն ունի, ապրում է դրանով և երջանիկ է: Երբ հանդիպում էին, չգիտեին ինչի մասին խոսեն, միակ ընդհանուր նյութը ֆուտբոլն էր: Հեռախոսը նորից զնգաց: Լսափողը վերցրին:

— Այո, այո,— կինը խոսում էր զգուշ, համարյա շշուկով,— Շահինյանի՞ն,— դա նաև Վահրամի աղբանունն էր,— դուք զանգահարեք, զանգահարեք մի շարաթ հետո... զլխավոր հաշվապահը կլինի:

Մի պահ անհնարին դարձավ այդ սենյակում մնալը, ուզեց դուրս փախչել, բայց մնաց. հարկավոր է ամեն ինչ այսօր վերջացնել, այլևս երբեք չի գա, երբեք: Սեղանն արգեն մա-

քուր էր, կանայք անշշուկ դուրս էին գնացել: Նստեց աթոռին, որ մոտիկ էր: Ո՞ր են գնացել: Երևի Հակոբյանին կանչելու: Շինվարչության պետի սենյակը երկրորդ հարկում է: Հակոբյանը մի անգամ եղբոր տանը բաժակաճառ ասաց ուղիղ քառասուն րոպե: Շուտ է հարբում: Մոտեցավ Վահրամի գրասեղանին, գունավոր մատիտները խնամքով սրված-շարված էին ապակու վրա, երևի հենց ինքն է սրել, նա հատուկ հաճույքով էր դա անում: Ապակու տակ թղթեր էին: Զնայեց:

— Ընկեր Հակոբյանը հիմա կգա,— կինը մոտեցավ Լեոնին,— ինչպե՞ս եք, Հասմիկը, երեխաները: Հակոբյանի մոտ մարդ կար միևիստրությունից:

— Երեխաները լավ են,— ասաց Լեոնը,— կսպասեմ:

Հասմիկը եղբոր կինն է, արգեն մի շարաթ է ծնողների տանն է: Երեխաներն էլ: Եղբոր բնակարանը կարգի բերել է հարկավոր, սառնարանը շի աշխատում, վարպետ պիտի կանչել: Գազիկին, եղբոր փոքր տղային, մանկապարտեղ պետք է ընդունել տալ: Դա երևի ամենազոժվարն է, բայց հարկավոր է, Հասմիկն ասաց, որ ուզում է աշխատել: Որտե՞ղ:

Ի վերջո Հակոբյանը եկավ:

— Բարև, բարև,— նա մեկնեց ձեռքը,— ներիր, մոտ մարդ կար:

Դեմքը հոգնած էր, կոպերի տակ կարծես մեղու էր կծել: Երևի երեկ գիշեր խմել էր, խոսել երկար, որ ավելի է հարեցնում: Նստեցին, Հակոբյանը՝ սկզբում Վահրամի աթոռին, հետո վեր կացավ, ուրիշը վերցրեց: Մի րոպե լուռ էին, ինչպես ճանապարհ դուրս գալուց առաջ: Հետո Հակոբյանը մոտ կանչեց կանանցից մեկին.

— Արամին կանչիր,— ասաց,— պլանային բաժնում է, շուտ:— Կինը, որ կլինեք հիտուն տարեկան, արագ դուրս եկավ: Հակոբյանը դարձավ Լեոնին:— Մենք Արամի հետ ամեն բան նայեցինք. մաքուր էր, ամեն ինչ բռնում էր, կոպեկ առ կոպեկ: Շշմել էինք: Դու գիտես, որ ես ինչքան էի վստահում, բայց շշմել էինք: Է՞... Սեյֆն է մնում: Ասացի անձնական բան-ման կլինի, մտածեցի, որ միասին նայենք, դրա համար զանգ տվի: Ահա, Արամն էլ եկավ:

Արամը ակնոցավոր էր, երևի երեսուն-երեսուներկու տարեկան: Նա լուռ բարևեց, հետո ծոցազրպանից դեղին մի բանալի հանեց, տվեց Հակոբյանին:



— Ինչո՞ւ ես ինձ տալիս,— ասաց Հակոբյանը,— բաց արա ինքդ:

Լեոնի ներսում դարձյալ նվազ նույն այն նյարդը: Նայեց էժանագին դադաղի գույնով ներկած մետաղե պահարանին: Թվաց, թե դարչնագույն դադաղի հետևից հիմա ինչ-որ գաղտնիք գուրս կգա, մշուշ, որ չի ցրվելու: Գեղին բանալին շորս անգամ պտտվեց փականի մեջ:

— Մխախտ տուր,— ասաց Հակոբյանը, Լեոնը մեկնեց տուփը,— է՛...:

Մտեցան:

Սեյֆի ներսում քիչ բան կար: Արամը հանեց ամեն ինչ, դրեց սեղանին: Հաշվապահական մի քանի մատյան, հեռախոսագրք, թղթեր, մի գիրք, որի կազմին ոչինչ չկար գրած:

— Այս ծոցատետրը վերցրու,— ասաց Հակոբյանը,— հասցեներ են, գիրքն էլ նայիր, մյուս թղթերն էլ...:

Լեոնը ձեռքն առավ ծոցատետրը, թերթեց: Հասցեներ էին՝ հայերեն, ռուսերեն, հեռախոսի համարներ: Նախավերջին էջին մատիտով ինչ-որ բան էր գրված: Կարգաց առաջին տողը...

— Ի՞նչ կա,— հարցրեց Հակոբյանը:

— Ոտանավոր է,— ծանոթ թվաց ոտանավորը. տողն՝ րն էին ծանոթ, թե՛ տխրությունը: Ծոցատետրը գրպանը դրեց,— Ի՞նչ գիրք է...:

— Վերնագիր չկա,— ասաց Հակոբյանը:

Լեոնը բացեց կազմը և ներսում նվազ, այս անգամ երեխա էջաց նույն նյարդը. երկու անգամ իր ձեռքով էր թաղել այս գիրքը և հետո հանել հողի տակից: Մի պահ հալվեց շուրջն ամեն ինչ՝ գրասեղանները, կանաչը, Հակոբյանը, Արամի կլոր ակնոցը: Վերժուշը կշաբարեթի նման կախվեց ոտքերից, աչքերից, բայց նա կարողացավ դիմանալ: Գիրքը դրեց լրագրի մեջ, ծածկեց բոլոր կողմերից՝ ինչպես վերքն են փաթաթում, հետո սկսեց նայել թղթերը: Ահա, դարձյալ ոտանավոր. «...նվ վերհիշելու նույնիսկ ուժ չունեմ...»: Մի՞թե եղբայրն է գրել, երևի նախորդը՝ ծոցատետրի ոտանավորն էլ: Հազիվ թե: Լեոնը նայեց սեյֆի որովայնին, որ կարծես նոր էր բացվել վիրահատի դանակով և քիչ հետո կկարեն: Այլևս ոչինչ չէր մնացել: Նորից սկսեց նայել թղթերը, նայել մեկիկ-մեկիկ:

— Ամեն ինչ կարգին է,— ասաց Հակոբյանը,— դու նեղություն մի քաշիր, ամեն ինչ կարգին է:

Մի թղթի վրա, մուտքի օրդեր էր կարծես, նորից ոտանավոր: Չկարգաց:

— Կարելի՞ է սա վերցնել:

— Ի՞նչը,— Հակոբյանը ձեռքն առավ օրդերը, նայեց՝ մի քիչ զարմացած,— պե՞տք է...:

— Ոտանավոր կա մյուս էջին:

— Հա...— ասաց Հակոբյանը,— Ի՞նչ ոտանավոր:

— Չգիտեմ: Գուցե ինքն է գրել:

— Շահինյանը:

— Հա:

— Շահինյանը ոտանավոր է գրել,— Հակոբյանը զարմացած էր,— մտքովս չէր անցնի:

— Գրում էր,— հանկարծ խոսեց Արամը,— մի անգամ խմած էր, արտասանեց, ասաց իր գրածն է, տխուր ոտանավոր էր:

— Վերցրու,— ասաց Հակոբյանը,— մյուս թղթերն էլ նայիր,— օրդերը մեկնեց Լեոնին,— ուրեմն, ոտանավոր է գրել...:

Հինգ-վեց թղթի վրա էլ խզմզված տողեր կային, Լեոնը հավաքեց լրագրի մեջ: Արամը հաշվապահական մատյանները նորից դրեց պահարանը, փակեց դուռը գեղին բանալիով:

— Արամը կգա քեզ հետ,— ասաց Հակոբյանը,— Վահրամենց պիտի գնաս, չէ՞, ինչպես պայմանավորվել ենք: Արամը կգա, գործերը կվերցնի:

Լեոնը նայեց ակնոցավոր հաշվապահին, որ լսել էր եղբոր տխրությունը: Երևի հենց նա էլ գլխավոր կզառնա, Վահրամի փոխարեն:

— Ուրեմն, Շահինյանը ոտանավոր է գրել,— ինքն իրեն մտմտում էր Հակոբյանը,— ո՞վ կմտածեր,— հետո դարձավ Լեոնին,— ես կարգադրել եմ, որ նրա մեկ ամսվա աշխատավարձը գուրս գրեն, տուն կուղարկեն, Հասմիկը տանն է, չէ՞...:

— Տանը կլինի,— ասաց Լեոնը ու, շփոթես ինչու, նայեց հեռախոսի կապույտ ապարատին: Հեռախոսը թվաց եղբոր մի մասը, ձեռքը, ոտքը, ստվերը: Մեկ-երկու շաբաթ էլ կզանգահարեն, կհարցնեն նրան, հետո կսովորեն, կհարցնեն Արամին: Արամը կգրի եղբոր սրած մատիտներով, մակազրույթյուններ կանի, կհաշվի եղբոր հաշվիչներով, ակնոցը կզնի եղբոր սեղանի ապակուն: Սենտիմենտալ է դառնում, հանկարծ զգաց, նայեց Արամին, որն այդ պահին սեյֆի դեղին բան:



լին միացնում չը իր բանալիների փնջին, և ուղեց ժպտալ. օղը դժվարությամբ էր ենթարկվում, Արամը մատն էլ ցավեցրեց, բայց համառում էր, կարծես դրանից մեծ, շատ մեծ բան էր կախված:

— Է՛... — ասաց Հակոբյանը, այսինքն, կյանք է, ո՞վ կսպասեր, բայց դե ամենքս էլ գնալու ենք, — Հասմիկին կբարենս, — Հասմիկը Վահրամի կինն էր, — ամեն օր ասում եմ ժամանակ գտնեմ, գամ: Մինչև հիմա էլ չեմ հավատում, ո՞վ կսպասեր:

Առնը նայեց, հասկացավ, որ նա ոչ մի օր էլ ժամանակ չի գտնի Հասմիկին տեսնելու, որ նա լավ մարդ է, չնայած երկար բաժակաճառ է ասում, և հիմա, հենց որ բարձրանա իր հարկը, կմոռանա և՛ Վահրամին, և՛ Հասմիկին, կզնգա հեռախոսը կամ մեկնումեկը ներս կմտնի, քարտուղարուհին թղթեր կբերի ստորագրելու:

Եղբոր «հարեմը» նստած էր գրասեղանների առաջ, որոնց վրա լուռ սպասում էին հաշվիչները: Կանայք այդ պահին դեռ մտածում էին Վահրամի մասին, թեպետ Առնի դուրս գալուց հետո անմիջապես կշխկշխկան հաշվիչների հատիկները, և կյանքը կշարունակվի՝ ինչպես ամեն ինչ այս աշխարհում: Առնը նայեց նրանց, հետո ասաց Արամին.

— Գնանք:

Միջանցքում ցուրտ էր, հատակին թեփ էին լցրել, ինչպես բանվորական հանրակացարաններում: Հարկավոր էր երեխաների համար ճամբարի ուղեգիր ճարել, Հասմիկն ասաց նաև, որ ինքն էլ հոգնած է, կուզենար հանդատանալ... Առնը նկատեց, որ միջանցքի էլեկտրալամպը վառվում է, Վահրամը հավանորեն հանգչրած կլինի դեռ առավոտյան, նա տանել չէր կարողանում իզուր տեղը վառվող էլեկտրալամպ, կարող էր դրա վնասի մասին տասը ռուպե խոսել: Այս թեփը երևի մի շաբաթ առաջ էլ կար, երևի տասը օր առաջ էլ: Այն ժամանակ Վահրամն էլ կար:

— Գե ես գնամ, — ասաց Հակոբյանը: — Ի՞նչ ասեմ, զանգահարիր, եթե բան-ման լինի: — հետո մեկնեց ձեռքը, որ լայն էր ու խոնավ, — անցիր մեկ-մեկ, եթե ժամանակ ունենաս:

— Տեսնենք:

— Զորքող համարն ուղիղ գնում է ընկեր Շահինյանենց տուն, — ասաց Արամը:

— Կարծեմ, — Առնը թևատակին շոշափեց գիրքը, թղթերը, հետո, չգլխես ինչու, հարցրեց, — երևի դուք կաշխատեք նրա տեղը, չէ՞...

Արամը շփոթվեց: Նրա ձեռքին բանալիների տրցակն էր, որի մեջ ոսկուն էր տալիս սեյֆի դեղին բանալին, և Արամի մատներն այդ պահին դեղինի վրա էին: Երևի բնագոյաբար:

— Տեսնենք, — կե՛լմաց աղան, ակնոցն ուղղելով, — ներսես Տիրգրանիչը պիտի տրեստում խոսի, ուրիշ թեկնածու էլ կա:

Ներսես Տիրգրանիչը Հակոբյանն էր:

— Ինձ համար շատ դժվար կլինի, — շարունակեց ակնոցավորը, — ընկեր Շահինյանից հետո... Զգիտեմ:

Առնը ոչինչ չասաց: Նա հանկարծ մոռացավ Արամին, վերհուշի կշռաբարը նրան քաշեց ներքև, մինչև 1940 թվականը, երբ եղբայրը վերագործավ աքսորից: Նրան բանտարկել էին երեք տարի առաջ, ավարտական քննությունների օրերին, Առնն այդ ժամանակ ինք տարեկան էր: Երբ Վահրամին տարան, գիշերով մայրը վառեց նրա բոլոր գրքերը: Տեսրակներն էլ վառեց, որտեղ նրա շարագրություններն էին, բանաստեղծությունները: Վառում էին նկուղում, որտեղ գինու կարասներն են: Կրակի մոտ նստած էին երեքով. հայրը, մայրը, Առնը: Առնը ոչինչ չէր հասկանում. հունիս ամիսն էր, ցուրտ չէր, ինչու էին վառում: Եվ հետո՞ պատշգամբի տակ այնքան փայտ կար: Հայրը նստած էր անկյունում, թախտի վրա, ու լուռ ներս էր քաշում լրագրի կտորի մեջ փաթաթված թուփունի ծուխը: Մայրն էր գրքերը պոստ կրակի մեջ: Գրքեր կային, որ գուցեզուց նկարներով էին, Առնն ավելի շատ դրանց համար էր տխրում: Մոր դեմքը հանգիստ էր թվում, միայն թե գիրքը կրակի մեջ պղծուց առաջ նա բացում էր, տառատառ կարդում վերնագիրը: Հայրը մեկ-մեկ վեր էր կենում տեղից, բակ կնում, հետո ներս գալիս:

— Մարդ-մուրդ չկա, — ամեն անգամ ասում էր նույնը և մի նոր ծխախոտ փաթաթում:

Մի անգամ երկուսով դուրս եկան, շունը հաշեց, թե՛ ինչ, Առնը շիմացավ, դուրս իր վրա փակեցին: Մի կես ժամ չեկան: Առնը սկզբում նայում էր կրակին, հետո վերցրեց գրքերից մեկը, սկսեց թերթել: Հետո մեկ ուրիշը վերցրեց: Ոչինչ չէր հասկանում: Երբ լսեց ծնողների ոտնաձայնը, ձեռքին մի գիրք կար: Նկարներով էր, թեպետ գունավոր չէին նկարները: Զգի-



տես ինչից վախեցաւ և գիրքը շտապով ծոցը զրնց: Մայրը ոչինչ չնկատեց: Իսկ առավոտյան նա գիրքը թաղեց իրենց պարտեզում, մեծ խնձորենու տակ: Երեք տարի անց եղբայրը վերադարձավ: Հենց առաջին օրը Լեոնը նրան խնձորենու մոտ տարավ, փորեց հողը: Գիրքը թաց էր, կաղմը փափկել էր, բայց նկարները երևում էին, տառերն էլ: Վահրամը գիրքը ձեռքն առավ, և թաց թղթերը, Լեոնին թվաց, այրեցին եղբոր մատները: Վախեցած շորս կողմը նայեց, հետո գիրքը նորից տեղը դնելով, սկսեց հողը վրա տալ:

— Ոչ մեկին բան չասես: Հո չե՞ս ասել:

— Չեմ ասել,— նեղացավ Լեոնը,— հասկանում եմ:

— Ոչ մի բան էլ չես հասկանում,— կոպիտ ընդմիջեց մեծ եղբայրը,— բերանիցդ շթոցնես:

Ո՞ւմ պիտի ասեր: Նրանց տուն, նույնիսկ եղբոր վերադառնալուց հետո, շատ քիչ մարդ էր գալիս: Մի անգամ կեսգիշերին Վահրամի դպրոցական ընկերներից երկուսը եկան: Պարտեզի պատի վրա շով էին թռել, փոխանակ դռնով մտնելու: Ինչո՞ւ, Լեոնը չէր հասկանում, տարօրինակ են մեծերը: Եկան, նստեցին նկուղում:

— Հով տեղ է,— ասաց մեկը: Գրսում հոկաեմբեր ամիսն էր,— ես տանն էլ պաղվալում եմ քնում:

Ոչինչ չհարցրեցին, պատմեցին:

Վահրամը նստած էր հոր տեղը, թախտին: Խուզած զլխով, դեռևս ուռած, հին թղթի պես դեղին դեմքով, Վահրամը շատ տարիքով էր թվում իր ընկերներից: Նա էլ չէր խոսում: Նավթի լամպի լույսի տակ կուշ էր եկել ու կարծես մրսում էր Միայն հարցրեց.

— Տվի՞ր քննությունները:— Նրան արքսրել էին դպրոցական քննությունների օրերին, ինքը չէր հասցրել:

— Տվինք,— ասաց երկրորդը,— ծխել սովորեցի՞ր...

Վահրամը նայեց:

— Գնացեք,— ասաց նա,— գնացեք, տղերք, ուշ է:

Կարծես դրան էին սպասում:

— Մենք էլի կգանք,— ասացին: Ու կորան մուլթի մեջ:

Երկու անգամ էլ եկան, հետո սկսվեց պատերազմը: Վահրամին շտարան, հիվանդ էր: Ավելի մոալլվեց, ավելի շատ էր ծխում:

...Լեոնը սթափվեց: Ինչո՞ւ հիշեց այս ամենը: Թևի տակ

եղբոր թղթերն էին: Երկրորդ անգամ հողի տակից գիրքը հանեց արդեն մենակ: Գարուն էր, ճնճալի օրեր էին՝ հողը փափկել էր, ծառերը բողբոջել էին, ժամանակից շուտ: Լեոնը քսաներկու տարեկան էր արդեն, սովորում էր համալսարանում, գիտեր, որ թագվածը «Գիրք ճանապարհին» էր, գիտեր, թե այն ժամանակ ինչու էին այրում գրքերը: Հայրը վաղուց արդեն շկար, իսկ Վահրամը տասը տարի է, ինչ հաշվապահ էր, ապրում էր Երևանում, երեսաներ ուներ: Գիրքը տարավ նրան: Վահրամը վերցրեց, մի պահ մատներով դիպավ մզած կջերին, հետո պահարանից հանեց օղու շիշը, իր բաժակը լցրեց, խմեց: Խմեց առանց Լեոնին նայելու, հետո նորից խմեց: Գրքի մասին բան չասաց ոչ այդ օրը, ոչ հետո, միայն վերցրեց սեղանի վրայից, պահեց դարակում: Եվ ա՛հա, տասը տարի անց՝ նույն գիրքը հանեցին սեյֆից: Լեոնը փորձում էր հասկանալ, իրար միացնել օղակները, չէր ստացվում: Այս բոլոր տարիներին, երբ փորձում էր եղբոր հետ խոսել գրքերից, բանաստեղծություններից, համարյա միշտ նույն պատասխանն էր ստանում. «Թող, այ Լեոն, ես հաշվապահ մարդ եմ, դու ինձ հետ դեբետից-կրեդիտից խոսիր, բալանսից-բանից, ես ի՞նչ գործ ունեմ բանաստեղծությունների հետ...»: Թվում էր՝ եղբայրը գիծ է բաշել անցած կյանքի վրա ու շի հիշում ոչինչ: Բայց ա՛հա գիրքը, ոտանավորները՝ հաշվապահական թղթերում: Դեռ այն տարիներին, երբ Լեոնը 8—10 տարեկան էր, գիտեր, որ եղբայրը ոտանավորներ է գրում: Ամեն անգամ, երբ տանը հյուրեր էին լինում, Վահրամը կանգնում էր սենյակի անկյունում, ետ էր տալիս երկար մաղերը, արտասանում: Լեոնը հաճախ թաքուն նայում էր նրա տետրերը, փորձում էր կարդալ, ոչինչ չէր հասկանում:

Արքսրից վերդառնալու երկրորդ-երրորդ օրն էր, մորը հարցրեց.

— Տետրակներս էլ վառեցիք:

— Հա, տղա ջան:

— Բոլո՞րը:

— Աչքերս բռռանան, բան չկա, էլի կգրես:

Չգրեց:

Եղբորն այլևս շտեսավ արտասանելիս կամ կարդալիս, նրա գրասեղանին հաշվապահական թղթեր էին միայն և սովորական մի հաշվիչ, որի մաշված հատիկները հնազանդ ենթարկ-



վում էին նրա գունատ մատներին: Մի անգամ Լևոնն իր նոր լույս տեսած գիրքը տարավ եղբորը: Երկու ամիս էր անցել, հարցրեց՝ «Կարդացի՞ր»:

— Դե իմ կարծիքը քեզ համար ինչ,— ասաց:— Չխմե՞նք...

Սկզբում վշտանում էր, հետո մտածեց, դե ինչ կա, տասնը-հինգ-քսան տարի է անցել, հիմա ուրիշ աշխարհ ունի մարդը: Եվ այլևս չփորձեց մոտենալ այդ նյութին. երևի այնքան էլ բարի բան չէ՝ հիշեցնել կորցրածը:

Եվ ահա...

— Եկավ,— լսեց նա:

Արամի ձայնն էր, իսկ եկել էր տրուխյրուսը:

— Տոմս վերցրեք,— ասաց բարալիկ մի աղջիկ, որի աչքին մարդկությունը երևի մի հավաքական անտոմս ուղեոր էր:

— Իմը մշտական է,— ասաց Արամը:

Տրուխյրուսը, չնայած իր մետաղյա մարմնին, կարծես գալարվում էր ասֆալտի վրայով: Իալարվում էր դանդաղ, ալարկոտ: Այն օրը, երբ գիրքը տարավ և օդի խմեցին, Վահրամը հանկարծ տխրեց, սկսեց դժգոհել կնոջից, երեխաներից, նույնիսկ մորից, ասաց, որ ոչ ոք աշխարհում չի հասկանում իրեն, ասաց շրջորոժվում է դիմել, որ թույլ տան բակում ջրի ծորակ գնի և հինգ ամիս է պատասխան չկա: Իրեն՝ Լևոնին էլ չխնայեց: Ասաց, որ սիրտն անկանոն է աշխատում, հիշողությունը մթազնում է, երբեմն իրեն հարկավոր տրամվայի փոխարեն ուրիշն է նստում: Լևոնը մտածում էր, որ օդին է մեղավորը, շատ խմեց, կամ երևի գործերը լավ չեն: Հետո մի անգամ էլ տեսավ նրան, էժանագին մի սրճարանում: Նստած էր շորս-հինգ մարդու հետ, իրեն էլ կանչեց, ծանոթացրեց. անտեսվարն էր, գանձապահ, վարորդը և երևի Արամը: Վահրամը բաժակաճառ էր ասում, իսկ նրանք հարգալից լսում էին: Սեղանի տակ, լինուլետմե հատակին՝ ջարդված մի բաժակ էր, ծխախոտի մնացորդներ և շորս զույգ ոտք: Վահրամը խոսում էր ընկերության մասին, հավատի, առանց որի դժվար է ապրել: Լևոնը գիտեր, որ նա իր ասած ոչ մի խոսք վաղը չի հիշի, բայց այդ օրը հասկացավ, որ եղբորը դուր է գալիս սեղանակիցների երկչուղած լուսնունը, նրանց զարմանքը՝ իր գործածած բառերով, որ չէին լսել: Հասկացավ նաև, որ Վահրամը այս սեղանի մոտ իրեն ավելի լավ է զգում, քան տանը:

Երբ ճանապարհին փորձեց խոսել նրա հետ, եղբայրը կարճ կապեց. «Թող, դու ինտելիգենտ մարդ ես, գիրք ես գրում, ի՞նչ պիտի հասկանաս մեզ»: Ասաց մի տեսակ շարունակմամբ, օտարի հայացքով շփեցնելով Լևոնին ոտից գուլիս...

Հանեց եղբոր ծոցատետրը: Կարգաց անուններ, հասցեներ, հեռախոսի համարներ, ոչ մեկը ծանոթ չէր իրեն: Փնտրեց «Լ» տառը, իր անունը կամ հեռախոսը չկար: Ահա և այն ոտանավորը, նախավերջին էջի վրա, մատիտով խզրզված. «Չլուսել է աշխարհը, ձյունն է նմազերս...»:

— Հասնում ենք,— լսեց Արամի ձայնը,— առաջ գնանք, որ իջնենք:

Երևի շտապում էր: Լևոնը նայեց նրան համարյա ատելությամբ:

Իջան:

Ցեխոտ փողոցով Լևոնը գնում էր դանդաղ, մոլորված քայլերով: Ուզում էր, որ երկարի ճամփան, բայց ճամփան զրսպանակ չի, որ ձգես: Եղբոր թաղումից հետո առաջին անգամ պիտի բացեր նրա դուռը, մատների մեջ արդեն շոշափում էր բանալիները, որ հարսը տվեց:

Ճանապարհը վերջացավ:

— Սպասիր այստեղ,— ասաց Արամին,— ես ձայն կտամ:

Բացեց դուռը, ներս մտավ, շմոռացավ մաքրել կոշիկները: Եեմին հողաթափեր կային, մի զույգ կրկնակոշիկ: Եղբայրը միշտ ձմեռները կրկնակոշիկ էր հագնում: Անկյունում կախված էր վերարկուն: Մեկ-երկու ամիս հետո հավանորեն կտանեն որևէ կոմիսիոն խանութ, կորոշեն գինը, կկախեն ցուցափեղկում: Դե, որ մնաց, ո՞վ պիտի հագնի, թեպետ նոր է, այս գարնանը կարել տվեց: Եղբոր մեծ տղան չի հագնի, նա քսան տարեկան է, մոդայիկ շորեր է սիրում: Դե պարզ է, կոմիսիոն կտանեն, բայց զոնե ծայրամասային խանութ լինի: Հիմար, անօգուտ մտքեր. ենթադրենք տարան ծայրամասային, հետո ինչ... Լևոնը հանկարծ մտածեց, որ կոմիսիոն խանութների զգեստների մեծ մասը երևի մեռածների է պատկանել, նստեց բավոնցին, փակեց աչքերը ու հասկացավ, որ մարդիկ ծերանում են այդպես: Որքա՞ն անցավ...

— Արամ,— ձայն տվեց,— ներս արի:

— Յուրտ է,— ասաց Արամը,— լույսը վառե՞մ...

— Լո՞ւյսը, վառիր:



կարծես քննիչ լինե՞ր, որ խուզարկում էր հանցագործի տուներ: Պահարանի գարակներին հանեց թղթապանակներ, մատյաններ, առանձին թղթեր, հին լրագրեր, լուսանկարներ: Լցրեց սեղանին:

— Սրանք են,— ասաց Արամը՝ թղթապանակներից երկուսը վերցնելով,— սրանք են:

— Սպասիր,— Լևոնը հանգիստ նրա ձեռքից առավ թղթապանակները, բացեց, սկսեց թերթել: Խնամքով իրար կարած հաշվապահական փաստաթղթերի, փոխանցման ձևերի, մուտքեկլթի օրգերների վրա Վահրամի ձեռագիրն է, բոլոր տառերը գրած մանրամասն, մազագծերով, հատ-հատ, ինչպես մայրը կասեր՝ բրինձ-բրինձ:

— Սրանք են,— նորից ասաց Արամը:  
— Հասկացա,— շոր, արդեն թունավոր շեշտով, ասաց Լևոնը,— շտապում եք, գնացե՞ք, առավոտ շուտ ես կուղարկեմ:  
— Ձէ, ինչ եք ասում,— կմկմաց Արամը,— կսպասեմ, ուզո՞ւմ եք թերթ կարդամ:  
— Շատ եմ ուզում:

Գործի մեջ կարած փոխանցման մի ձևի հակառակ երեսին Լևոնը կարդաց. «Շատ ծանր ապրեցի ես անցած կյանքս, և մնացածը թեթև անցնելու ոչ մի հույս չունեմ: Եթե մարդիկ ապրում են ինչպես ես...»: Զգուշությամբ հանեց թուղթը, գրեց մի կողմ: Հետո սկսեց թերթել ասես տենդի մեջ. բոլոր թղթերը, որոնց վրա ոտանավորներ էին, առանձնացրեց: Հետո նայեց մնացած թղթերը: Գարձյալ ոտանավորներ, ինչ-որ կիսատ մտքեր: Նայեց տարեթվերը. 1942, 47, 49, 54, 56, 59, 62, 65... Ամենավերջինը՝ մահվանից երկու ամիս առաջ: Գասավորեց հերթականությամբ, հետո սկսեց կարդալ. «...Քանզի թմբել եմ ծանր մտքերի թունավորումից: Եվ սա է կյանքս»: «Լուսթյունն եմ ես մտերիմ բնորդ, թեկուզև մարդկանց ներկայության մեջ»: «Եվ այսպես, կյանքը ինձ դատապարտեց կենդանի մահվան»: «Կանգնել եմ ես հիմա, հիսուն տարվա սեմին՝ հոգնած, ճգմված՝ որպես ֆիլտրից անցած խաղողի ողկույզ: Ազատվելու էլ ոչինչ չունեմ. ոչ հույս, ոչ նպատակ, բոլորը նվաճել եմ կամ մոռացել ամիշտ»: Սա՞ ինչ է՝ պարտքերի ցուցակ: Իսկ սա՞, դիմումի պատճեն, զրված նույն գեղեցիկ ձեռագրով: Հետո նորից ոտանավորներ:

Լևոնը կարդում էր, և այդ միամիտ, զարմանալի տողերը լույս էին տալիս նրա ներսում, ինչպես ժամացույցի ֆոսֆորե թվերը՝ խավարի մեջ: Ուրեմն, այս բոլոր տարիներին եղբոր մեջ ծխացել է անցյալը, հաշվապահի ուղեղի մի բջիջում ապրել է սպանված բանաստեղծը: Եղբորը տեսավ պարզ, կենդանի, հանկարծ հիշեց այն օրը, երբ իրենց գյուղի ձորը գնացին: Առավոտյան նա պիտի քաղաք մեկներ, հաշվապահական դասընթացում սովորելու, և հանկարծ.

— Չորն իչնենք:  
Լևոնը զարմացավ. հոկտեմբերին ի՞նչ ձոր...  
Գնացին:

Գնացին երկար. ճանապարհով, եղբայրն ուզեց: Չոր իջան, Աբրորաքարի մոտ, որտեղ տարիներ առաջ Վահրամը փոքր եղբորը լողալ էր սովորեցնում: Լևոնը իսկույն քարեր հավաքեց ու սկսեց նետել ջրերի մեջ: Չորը սսկված էր, ջրերի ճողփյունը թույլ էր ու մրսած, Լևոնը շուտ ձանձրացավ: Եվ հանկարծ... Լևոնը տեսավ, որ եղբայրը լաց է լինում, փովել է գետնին ու լաց է լինում, ուսերը ցնցվում են, շորացած խոտերը խռոնվել են մազերին, մատները ճանկոտոտում են աշնան գետինը:

— Վահրամ:  
Ի՞նչ անեք: Նա ընդամենը տասներկու տարեկան էր, նա դեռ չգիտեր այն բառերը, որ այդպիսի բոպենների համար են, միայն նայում էր զարմացած, մատների մեջ ճզմելով քարի վերջին կտորը, որ ջրերի մեջ պիտի նետեր:

Հետո Վահրամը վեր կացավ, սրբեց աչքերը, ծոցագրպանից հանեց մի բարակ աշակերտական տետր: Թերթեց, ոտանավորներ էին, եղբոր ձեռագիրն էր:

— Որտեղի՞ց:  
— Մնացել էր հացի տաշտակի մեջ:  
Թերթեց, կարդաց մինչև վերջ, հետո շատ արագ պատառոտեց, թղթե գունդ սարքեց ու նետեց Աբրորաքարի տակ: Լևոնը ապշած նայում էր, բայց եղբոր գեմքը հանգիստ էր, մի քիչ շար, աչքերը ասես կլոր ապակիներ էին:

— Վահրամ, ինչո՞ւ:  
— Չես հասկանա, Լևոն, հետո:  
Չհասկացավ, հետո էլ չհասկացավ, որովհետև նույնիսկ եր-



կու շարաթ առաջ էլ մտածում էր, թե ամեն ինչ վերջացավ Աբլրարարի մոտ, այն պահին, երբ Քասախի ջրերը խլեցին տարան իրենց որդու վերավոր թղթերը: Ուրեմն, չէր վերջացել, ոչինչ չէր վերջացել, միայն թե բանաստեղծը այդ օրից սկսած դարձել էր լուսնոտ, որ դուրս էր գալիս, երբ աշխարհը քնած էր, քնած էին մարդիկ, արևը, խոտերը: Լեռներ բախտավոր էր համարում եղբորը, նրա նմաններին, որ վերադարձան: Բախտավոր էր համարում, և միայն հիմա, կարգալուծ այս զարմանալի թղթերը, այս կիսատ, միամիտ տողերը, որ թաքնվել-մեացել էին հաշվապահական ձևերի մացաններում, սկսում էր հասկանալ: Հասկանալ ոչ միայն եղբորը, այլև բոլոր նրանց, որ եղբոր պես՝ հրաշքով վերադարձան: Հատկապես նրանց, որ եղբոր տարիքին էին և վերադարձան, կենդանի մնացին, տուն, երեխաներ ունեցան, լուսանկարվեցին ծիծաղելով, բաժակաճառ ասացին խնջույքներում, հանգստյան տներ գնացին: Բայց հարցրե՞ց մեկնումեկը այդ տղաներին՝ բախտավոր են արդյոք...

Լեռներ մոռացել էր Արամին, շատ բան էր մոռացել: Ներսում փլվում էր ինչ-որ բան, որովհետև ո՞ւմ էր պետք այս ուշացած հայտնադործությունը, երբ իր կողքին ապրեց-վերջացավ եղբայրը...

Չուզեց այնևս կարգալ:

Սո՛ւտ է, աշխարհում ոչ մի մարդուց որևէ հետք չի մնում. ոչ ավազի վրա, ոչ ուրիշների հիշողության մեջ, ոչ ժամանակի ծալքերում: Մարդուն մնում են միայն ապրած տարիները: Ուրիշ ոչինչ: Ուրեմն Վահրամից ոչինչ չի մնում, չի մնա: Մանր էր: Նորից վառեց ծխախոտը:

— Արամ:

— Հը, — Արամը մի կողմ գրեց թերթը:

— Ի՞նչ ոտանավոր էր, որ Վահրամը կարդաց:

— Չեմ հիշում, տխուր ոտանավոր էր:

— Դու ֆուտբոլ գնո՞ւմ ես:

— Մեկ-մեկ տանում էր ընկեր Շահինյանը:

Հիշեց եղբոր վերջին գիշերը:

— Կապրե՞մ, — հարցրեց:

— Իհարկե, ի՞նչ ես ասում:

Վահրամը նայեց խեղճ ու երեխավարի, ասես իրենից՝ Լեռ-

նից էր կախված ամեն ինչ, ասես Լեռներ Աստված էր: Ոչ, նա այդ պահին երևի չէր մտածում իր շապրած տարիների մասին, ոչինչ չէր մտածում. նրա ներսում երևի մի հոգնած, շատ հոգնած ամայություն էր, ինչպես երբ մարդ նայում է իր հրդեհված-մոխրացած տանը:

— Ես գնամ, — ասաց Արամը, — նրա թևի տակ թղթապանակներն էին, — եթե դրանց մեջ փաստաթղթեր լինեն, ես հետո կգամ, կվերցնեմ...

Լեռներ նայեց: Ո՞վ է այս մարդը, ի՞նչ կապ ունի իր եղբոր, նրա թղթերի, նրա տան լույսի հետ, որ քիչ առաջ վառեց:

— Գիտե՞ք, — ասաց Արամը, — երեխային դպրոցից պիտի տուն տանեմ, յոթին է վերջանում: Այնպես որ... Անդրիական դպրոց է գնում:

— Ո՞վ:

— Տղաս՝ Անդրանիկը:

— Հա, — Լեռներ նոր միայն անդրադարձավ իր տված հարցին, — գնա, իհարկե, ես զանգ կտամ, եթե հարկ լինի: Ցտեսություն:

— Ցտեսություն, — ասաց Արամը, — ես շատ եմ պարտական նրան, կյանքով եմ պարտական:

— Ո՞ւմ:

— Ընկեր Շահինյանին:

— Հա, — Լեռներ մանրամասն տեսավ իր դիմաց կանգնած մարդուն, որ թևի տակ տանում էր եղբոր շապրած կյանքի ձեռագրերը: — Ո՞ր դասարանում է տղադ:

— Երկրորդ:

— Կավ է:

Ինչ-որ կիսատ զեկուցազրի էջ, թե՞... Լեռներ կարգաց. «Մուտքի օրգերով պահված ապառիկ գումարը վերաբերում է կենտրոնական ունիվերսիտետին...», իսկ հաջորդ տողի վրա՝ «...և ժամանակը փոխում է ինձ մսե մոխրամանի»: Նույն թղթի վրա, իրար հաջորդող տողերում, այսինքն, այդ մտքերը ծաղել են իրարից հետո, կողք-կողքի՝ ապառիկ գումար և՛ «ժամանակը փոխում է ինձ մսե մոխրամանի»: Մարդ կարող է խելագարվել: Ժամանակը մարդու սրտի, ուղեղի, հույսերի մեջ թափ է տալիս իր մոխիրը: Կամաց-կամաց: Կամ արագ:

Այլևս չնայեց մնացած թղթերը, ամեն ինչ հավաքեց, 1976



մի թղթապանակի մեջ, վրան մեծ-մեծ տառերով գրեց. Վահ-  
րամի թղթերը:

Կկարգա:

Երեկ ամբողջ կյանքում կկարգա, և այս թղթապանակն  
այսուհետև նրան կխանգարի ապրել, կխանգարի մտածել, թե  
ինքը ճանաչում ու հասկանում է մարդկանց:

Երեկոյան զանգահարեց հարսին:

— Վահրամենց հիմնարկում եղա, հետո՝ ձեր տանը:

— Ի՞նչ կար:

— Սեյֆը նայեցինք:

— Ի՞նչ կար:

— Ինչ պիտի: Ամեն ինչ կարգին էր: Տնից էլ Արամը տա-  
րավ հիմնարկի թղթերը:

— Արամն ո՞վ է:

— Վահրամի տեղի պիտի աշխատի:

— Ասա, լսում եմ:

—... Վահրամի թղթերի մեջ ոտանավորներ կային:

— Ո՞վ էր գրել:

— Ինքը: Տխուր ոտանավորներ էին:

— Հա... Չեմ կարգացել: Ասենք, հա, նա գիշերները միշտ  
ուշ էր քնում, վառում էր լուսամփոփը ու գրում էր: Չգիտեմ  
ինչ էր գրում:

Լեոնը հանդարտ ցած դրեց խոսափողը:

Քիչ անց ինքը՝ հարսը զանգահարեց:

— Ի՞նչ եղավ, ինչո՞ւ անջատվեց...

— Չգիտեմ,— ասաց Լեոնը,— ես ի՞նչ իմանամ,— և հիշեց  
գարմանալի տողը մսե մոխրամանի մասին,— ինքն իրեն  
եղավ, հիմա ո՞ր հեռախոսն է կարգին աշխատում:

— Ճիշտ է,— հարսը երեկ ոչինչ չհիշեց,— առավոտյան  
ընկերուհիս էր զանգահարում, էլի անջատվեց, իսկ նա տաք-  
սահողնից էր խոսում,— հարսը ի՞նչ պիտի հիշեր,— Լեոն...

— Բարի գիշեր:

Բարդին, որ երևում էր սեստորանի ապակե պատի մի-  
ջից, ավելի բարձր էր, քան Արագածը: Բարդին Քասախի մյուս  
ափին էր, Արագածը՝ հեռվում, բարդին ավելի բարձր էր:  
Լեոնը նայում էր Արագածից բարձր թվացող բարդուն, թմրել  
էր մի քիչ: Թմրեցրել էին կոնյակը, սիգարետի ծուխը և միայն  
սուրճի բաժակներն էին հուսահատորեն փորձում արթուն պա-  
հել նրա միտքը: Վերջին օրերի անասելի լարումից հետո առա-  
ջին անգամ էր նա թմրած, ասես մերկ նստել էր արևի տակ՝  
դատարկված ու ամաչի: Գյուղ եկավ առավոտյան, իջավ ձոր,  
երկար նայեց Աբլբրնաբարի ժալոերին, երկար նայեց ալիքնե-  
րին՝ ինչպես այն ժամանակ: Ալիքները նույնը չէին. այն  
ալիքները, որ տարան Վահրամի թղթերը, ով գիտե որ ծով կամ  
օվկիանոս են հասել ու ետ շեն գա, իսկ քարերի համար ապ-  
րած կամ չապրած տարիներ չկան: Չորում ոչ ոք չէր երևում,  
իսկ գետի աղմուկը ամենալավ լուսթյունն էր: (Օ՛, եթե մար-  
դիկ սովորեին լռել: Հիշեց Կարոյին. «Խոսել մարդիկ սովորում  
են մեկ-երկու տարում, իսկ մնացած տարիներին փորձում են  
լռել սովորել. կարգին մարդկանց չի հաջողվում...»): Երեկ, երբ  
վերադարձավ Վահրամենց տնից, զանգահարեց նվարդը: Սովու-  
րական հարցուփորձ և հանկարծ. «Խնդրում եմ ինձ հասկա-  
նաս, ես իբրև... դու հասկանո՞ւմ ես, ես չէի կարող... Քեպես  
իբրև մարդ...»: Լեոնն էլ ինչ-որ բան ասաց: «Մի նեղանա, խնդ-  
րում եմ, ես իբրև մարդ լրիվ համաձայն եմ քեզ հետ, բայց...»: Նոզկալի էր: Մատուցողը ես մի բաժակ սուրճ դրեց սեղանին, նա  
զարմացած ու ձանձրույթով էր նայում Լեոնին, որովհետև սես-  
տորանում ուրիշ ոչ ոք չկար: Այս ժամերին ոչ ոք չի լինում,  
կզան երեկոյան, կդասավորվեն սեղանների շուրջ, կաղմկեն,  
կխմեն, կհայհոյեն, հետո կհամբուրեն իրար: Կամ հակառա-  
կը՝ սկզբում կհամբուրեն, հետո կհայհոյեն: Հիմա ոչ ոք չկա:  
Օրեր առաջ սիրում էր սրամտել. «Մարդն էլ, ստոնարանի նման,  
համապատասխան լարումից հետո, պիտի անջատվի ավտո-  
մատ կերպով, հետո ավտոմատ միանա...»: Սրամտում էր, չգի-  
տեր, որ մի օր պիտի ճիգ անի անջատվելու և դա չպիտի ստաց-  
վի: Խոսքով հեշտ է, խոսքով ամեն ինչ հեշտ է: Ի՞նչ էր ուզում  
նվարդը, ինքը կարիք չուներ նրա բացատրությունը, ինքը այդ  
օրը ոչ մի բանի կարիք չուներ: Լեոնը հանկարծ ժպտաց, հի-



շելով Պապիկյանին. «Տիկուշը շատ նեղացավ, Փանակի հետ լավ կովեցիք էն նկարի համար, ո՞ւմ էր ձեռ առնում: Տիկուշն ասաց, որ մյուս անգամ հարսի հետ գաս մեր գյուղ...»: Ամեն մտտիկ մարդու մահով մեռնում է նաև մեր մի մասը: Բայց ամեն մտտիկ մարդու մահ մեզ նաև պարտավորեցնում է ապրել նրա շարժած տարիները, խմել այն գինին, որ նա շհասցրեց խմել, երևի նաև սիրել, ում նա շկարողացավ... Տարօրինակ ու համառ մտքերը երբեմն զարթնում էին Լևոնի մեջ, և նա փորձում էր այդ ձայները խլացնել կոնյակով, ծխի պատաներով, բժժիծադով:

— էլի կոնյակ բեր:

Մատուցողը հաշտված նայեց Լևոնին:

— Շատ շեղավ...

— Բեր, — կարողացավ ճզմել դառը խոսք ասելու ցանկությունը, ուրիշ գեպքում կպայթեր, բռնեք դուրս կթռչին, ինչպես խցանը՝ շամպայնի շշի կոկորդից, այսօր լոց:

Բարդին բարձր էր Արագածից, այս միտքը մի անգամ էլ կրկնվեց Լևոնի ներսում, և նա դարձանքով մտածեց վերջին տասը-տասնհինգ օրերի մասին: Հետո նրա ներսում սկսվեց անձայն մի երկխոսություն: Այդպես լինում էր Լևոնը ժամերով մնում էր մենակ, սեղանի մյուս ծայրին էլ պատկերացնելով ինքն իրեն: Դա լինում էր հոգեկան լարման պահերին, իսկ հոգին նույնքան նյութական է, որքան մարմինը, և ինչպես մարմինը՝ երևի նաև հոգնում է նույն դիրքից, նույն զգացումներից, նույն ախրությունից: Հոգին էլ, ինչպես մարմինը, գուցե նաև նստում է, կաննում, թավալվում: Դատարկ բան է, պարզապես մարդը երբեմն կարիք ունի մենակ մնալու ինքն իր հետ, ինքն իր դեմ, ճնդգվելու, ինչպես ատոմի միջուկը: Լուսնուն ձայնագրող մազնիտաֆոնը, եթե դա լիներ, երևի այդ պահին հանդարտ կձայնագրեր տարօրինակ մի զրույց՝ Լևոնի և Լևոնի միջև...

— Հոգնած եմ:

— Հետո ինչ: Ապրում ես, խմում, կյանքը շարունակվում է: Առավոտյան անեկդոտ էիր լսում, մտքումդ ծիծաղում էիր: Կապրես:

— Չեմ ասում, թե չեմ ապրի: Կապրեմ, բայց շատ կարևոր մի բան փոխվեց այս մի քանի օրում:

— Ուզում ես ասել՝ հասունացա՞ր:

— Դրո՞ւմն է հասունանում, մարդը ծերանում է:

— Ախ, ծերացա՞ր: Քեզ է թվում միայն: Կանցնի մի քանի օր, կտեսնես ամեն ինչ նույնն է:

— Նո՞ւյնը: Ես գրքերի պահարան չեմ, որ հանգիստ կուլ տամ, տեղավորեմ ամեն ինչ: Մարդ եմ:

— Գիտեմ: Իսկ չե՞ս մտածում, որ ավելի լավ կլիներ՝ այդ հույզերի կեսը ծախսելիր այն ժամանակ, երբ Վահրամը կենդանի էր:

— Փորձել եմ:

— Գիտեմ: Կասես, որ նա էր մեղավոր, որ նա մոտիկ չէր թողնում իրեն, ձևանում էր, թաքնվում: Հետո ինչ, հազար անգամ փորձելիր, թող քեզ պիտուրեր, շհասկանար, բայց փորձելիր: Կամ՝ հիմա վերջ տուր: Մարդկանց պիտի սիրել կենդանի ժամանակ, նրանց հետ կենդանի ժամանակ պիտի զգույշ լինել: Երբք չես կարող ասել՝ այն մարդուն, որին այսօր տեսար, կհանդիպե՞ս նորից: Զգույշ պիտի լինել, թե չէ՞ ո՞ւմ են պետք ծաղիկներն ու արցունքները:

— Ես լաց չեմ եղել:

— Գիտեմ, կարծում ես լա՞վ էր՝ բոլորը նկատեցին, նույնիսկ փոփոսացին. տեսեք, եղբայրը մեռել է, վեջը չի, նույնիսկ սափրվել է:

— Ինձ ինչ, թե փոփոսացին, ի՞նչ է, հոգուս կուկտիով դիտո՞ւմ կաղձակերպեմ:

— Զգիտեմ: Բայց թաղումից մի շաբաթ հետո դու ասա խմում ես ռեստորանում, իսկ երկու օր առաջ կիլիթի մոտ էիր:

— Հետո ինչ:

— Ոչինչ: Կյանք է: Բայց դու էլ դատաճե՞ր մի կարգա ուրիշների զլխին: Գառնացած ես նվարդից, իսկ քի՞չ ես ինքդ մոտավորապես նույնն արել:

— Օրինակ:

— Ի՞նչ էր քո կույթը բլուրդում: Սրամտեցիր ու թվաց, թե ամեն ինչ ասացիր: Միծաղելի է: Միբու՞մ ես, չէ՞, կրկնել՝ մարդ իր կյանքի ամեն օրը պիտի աչրի այնպես, ինչպես եթե դա իր կյանքի վերջին օրն է. պիտի հասցնի սրիկային ասելու, որ նա սրիկա է, պիտի հասցնի ատել, սիրել, հավատարմ վաղը կարող է ուշ լինել:

— Ես ի՞նչ կարող էի անել:

— Ուրեմն, մի քրթմնջա նվարդի վրա: Աղջիկ է, նոր է



պաշտոն ստացել, ի՞նչ է, ուզում է՞ր, որ նա փառաբանե՞ր ինքնասպաններին:

— Ուզում էի, որ նախորդ օրը լաց չլիներ նույն բանի համար:

— Դատարկ բան է, դու ինքդ էլ շատ հաճախ ես ձևանում:

— Չի կարելի կեղծել արցունքները:

— Կարծում ես միայն ստորագրութուննե՞ր կարելի է: Եվ հետո՞ ի՞նչ է նա կեղծել, հուզվել է, լաց է եղել, իսկ պաշտոնական տեսակետն ուրիշ բան է:

— Չեմ հասկանում:

— Ինչո՞ւ: Քեզ շի՞ պատահել. մտածել ես ուրիշ բան, գրե՞լ՝ ուրիշ: Չի՞ պատահել:

— Ես պարզապես չեմ գրել, երբ հնարավոր չի եղել ասել ամբողջ ճշմարտությունը:

— Լռել ես, իսկ դա հերոսություն է, չէ՞:

— Գերություն մեջ, օրինակ, լռելը հերոսություն էր:

— Վերջ տուր, դա թույլ մարդկանց մխիթարանք է և հետո՞ աչ թե բան գտար համեմատելու...

— Ես ի՞նչ կարող էի ասել բյուրոյում:

— Ամբողջ ճշմարտությունը: Ապտակեցիր, չէ՞, այն լակոտին: Կեցցես: Բայց ինչո՞ւ վախեցար բյուրոյում խոսել:

— Խոսեցի:

— Վերջ տուր: Այնտեղ պաշտոնյա մարդիկ էին, կարող էին այսօր-վաղը հարցը լուծել, իսկ Սեանում՝ գեղնակտուց լակոտ էր, կողքիդ էլ ընկերներդ էին:

— Ընկերներս, այդ ճիշտ է: Իսկ բյուրոյում ո՞վ կպաշտպաներ ինձ:

— Թող շպաշտպանեին: Կամ՝ հիմա հերոս մի խաղա:

— Ես հերոս չեմ խաղում:

— Հիմա դա մոգայիկ դեր է. դժգոհում են, կուրծք ծեծում, բայց բավական է չնշին մի քամի, շարՖ են կապում, ականջներով գլխարկ են դնում, շմբոսե՞ն հանկարծ: Միրում եք սուրբ, հթե պատյանում է: Կամ շեք հանում, որվհետև գիտեք՝ փաշտից է:

— Հոգնել եմ:

— Իսկ ի՞նչ ես արել, որ հոգնել ես: Չանձրալի է: Ավելի լավ է, խմիր:

— Խմում եմ, ուրիշ ի՞նչ պիտի անեմ, ի՞նչ է մնում:

— Դարձյալ խաղում ես Վերջ տուր:

— Չեմ խաղում: Տեսա՞ր, ընկերներով էլ հանդիպեցինք, ի՞նչ ստացվեց:

— Ի՞նչ պիտի ստացվեր. հավաքվեցիք, հիշեցիք, ուրախացաք, խոսեցիք:

— Լռեցինք, ավելի շատ լռեցինք:

— Ավելի շատ, ավելի քիչ՝ անընդհատ կշռում ես, չափում: Այդ նույն ընկերներդ չէի՞ն, որ Վահրամի հիվանդության օրերին զարմացրին բոլորին: Հիշո՞ւմ ես, բժիշկն ասաց, թե լիմոն է հարկավոր, կես ժամ հետո հարչուր հատ բերեցին, մեկն էլ շատ էր Վահրամին: Հիշո՞ւմ ես, ամբողջ գիշեր մնացին կողքիդ...

— Հիշում եմ, կան բաներ, որ չեն մոռացվում: Բայց...

— Ի՞նչ բայց: Իսկ դու, օրինակ, ի՞նչ ես արել նրանց համար, հը՞:

— Չգիտեմ, նրանք իմ կարիքը չեն զգացել:

— Վերջ տուր: Մարդկանց ներքին աշխարհը լիմոնադի շիշ չէ՞, որ դատարկես բաժակների մեջ մինչև վերջին կաթիլը, դու էլ ոչ մեկի առաջ չես դատարկվում:

— Ես չեմ կարող տանել ստորությունը:

— Հետո ինչ, երևի նորից կհիշես, որ թողիր-դուրս եկար Սարգիս Գևորգյանենց անից. «Չհանդուրժեց հոգին բանաստեղծի...»:

— Ես չէի կարող նստել մի մարդու սեղանին, բաժակ խփել մեկի հետ, որ հանգիստ, անվրդով կարող էր խոսել 1937 թվականի մասին, մարդու, որ իր ծննդյան օրը, իսկ դա երկու ամիս առաջ էր, նվեր էր ստացել Ստալինի կիսանդրին, ես չէի կարող, դուրս եկա, հետո ի՞նչ...

— Ճիշտ արիր, բայց հարկավոր է հասկանալ նաև քո ասած այդ թվականը, միայն մեղադրելը քիչ է:

— Հոգնել եմ հասկանալուց:

— Միժադելի է, անգլիական մի անեկզոտ հիշեցի: Մեկն ինքնասպան է լինում, սեղանի վրա գտնում են նրա նամակը. «Իմ մահվան համար ոչ ոքի մի մեղադրեք, պարզապես զզվեցի ամեն օր սափրվելուց»:

— Ի՞նչ կա որ...

— Անգլիացու պատճառաբանությունը ինձ ավելի հիմնավոր է թվում...



Արդեն կեսօր էր:

Լեոնը դուրս եկավ ռեստորանից:

Առավոտյան Քերոբի մեքենան նրան գյուղ բերեց:

— Քանի՞ երեխա ունեիր,— հարցրեց Քերոբը:

— Երեք:

— Փոքրը շա՞տ փոքր է:

— Չորսը լրացավ փետրվարին:

— Արալիկիս շափ է: Կմեծանա: Բոլորն էլ կմեծանան, ինքն էր ափսոս:

Մեքենան դանդաղ էր գնում: Խմբագիրն ասաց, որ հող-վաճը կարող է տպեն, եթե որոշ բաներ փոխի: «Մինչև գնալս ուզում եմ տպեմ»: «Ո՞ր ես գնում»: «Ո՞նց թե ուր, մոռացել էս»: «Ձեր գործն է,— ասաց,— ուզում եք, տպեք»: Գյուղ տանող ճանապարհը առաջ երկար էր, ոլոր-մոլոր, հիմա ամեն տարի կարճացնում են: Պատերազմի տարիներին և դրանից անմիջապես հետո՝ նրանք գյուղից քաղաք էին գալիս բեռնատար մեքենաներով, շորս-հինգ ժամում: Ճանապարհի կեսին մի շինք կար, գյուղացիները «փոստ» էին ասում, տարիներ առաջ երևի իջանատուն է եղել, կանգնել են, հանգստացել, փոխել ձիերը, հետո քանդեցին: Որտե՞ղ էր, փորձեց տեղը հիշել, չկարողացավ: Ինչո՞ւ քանդեցին: Ճանապարհը հիմա լայն է, ուղիղ: Տաթևիկն ամեն օր զանգահարում է:

— Արձակուրդ պիտի վերցնեմ,— ասաց Քերոբը:

— Ե՞րբ:

— Խմբագիրն էլուց-մյուս օրը գնում է, հենց որ գնաց:

— Սանատորիա գնա, հանգստացիր:

— Սանատորիա՞... Չէ, կքնեմ: Գիտես ինչ լաղաթ է գիշերվա քունը:

— Սանատորիայում էլ կքնես:

— Տանն ուրիշ է: Չե՞ս պսակվում:— Հետո հանկարծ լռեց, երևի զգաց, որ անտեղի հարց էր՝ այս օրերին,— մի հարևան ունենք, քառասունութ տարեկան է, շորս օր առաջ պսակվեց, լավ էլ աղջիկ առավ: Քսանյոթ տարեկան աղջիկ: Աշխարհ է, հա...

— Ուրեմն, ես ահադին ժամանակ ունեմ:

Գյուղը երևում է միանգամից: Երևում են ձորը, տները, գերեզմանոցը, Մարինե եկեղեցու սրածայր դմբեթը, ձորի վրա կախված պատշգամբները:

— Լեոն...

Գյուղը ընդառաջ էր վազում, մեծանում էր, մանրամասներ ձեռք բերում, դուռներ, Հիմա ճանապարհը մի փոքր էլ կթեքվի, կերևա դպրոցը, որտեղ շորս-հինգ տարի սովորել է: Գյուղոցը սպիտակ է ներկած՝ ինչպես այն օրերին, լուսամուտները պլավրում են:

— Բա՞ն էիր ասում:

— Կովա՞ծ եք... Խմբագրի հետ, հը...

— Չէ, ինչի՞ պիտի կովենք:

— Եսիմ: Տղա որ ունենաս, անունը դիր Սմբատ, գիտե՞ս ինչի:

— Տղա չեմ ունենա:

Գյուղի առաջին շինությունը բենզինի լցման կեսն է: Քերոբը մեքենան թեքեց աջ, դանդաղ մոտեցավ, կանգնեց, դուրս եկավ մեքենայից: Ապակե դռնից երևում էր մեկը, որ գլուխը սեղանին էր դրել:

— Սուրիկ,— ձայն տվեց Քերոբը, նա հաճախ էր անցնում այս ճանապարհով, ճանաչում էր: Լեոնն էլ էր ճանաչում, միասին սովորել էին մինչև շորորոգ դասարան:

— Սուրիկ,— մի անգամ էլ ձայն տվեց Քերոբը, բայց ավելի ցածր, զգույշ:

Գլուխը մնաց սեղանին:

— Քնած է, արթնացրու,— ասաց Լեոնը:

Քերոբը հտ դարձավ:

— Հետո կլցնեմ, շորս-հինգ լիտր կա:

— Նոր ասում էիր կես լիտր:

— Շատ բան էի ասում: Որ ուզում ես իմանաս՝ Երևանում կլցնեմ: Քունը սուրբ բան է:

Գնացին:

Լեոնը քայլում էր գյուղի փողոցով, որ նեղ էր, երիզված բարախիկ առվով, հողմած տներով: Հին փողոցները նման են տիրություն, բայց հայրենի գյուղի հին փողոցը ուրախություն էլ ունի: Հին փողոցներում ավելի մաքուր, շխանկարված է մնում մանկությունը, դեռ կենդանի է մնացել մի պատ, որի վրա կանգնել ես յոթ տարեկանում, առուն, որի վրայից թռչելիս չուրն ես ընկել, ծիրանին, որից ցոզու ես պոկել: Լեոնը քայլում էր դանդաղ, իսկ առվակն աղմուկով, հեխհե վազում էր, կարծես շատ կարևոր հեռագիր էր տեղ հասցնում: Կիսա-



քանզ մի տան պատին, լուսամուտի փտած փայտին ձուլված՝ նստել էր սևամազ մի կատու: Գարուն էր, նույնիսկ հին փայտերը տաքացել էին: Չէր ուզում ծանոթի հանդիպել, բայց հանդիպեց:

- Բարի օր, կոն, էս ո՞ւր:
- Հենց էնպես, ման եմ գալիս, Սեդրակ:
- Տուն մտնենք, մի բաժակ բան խմենք:

Սեդրակը հինգ տարով մեծ էր կոնից, կապույտ, մեծ-մեծ աչքեր ուներ: Տարիներ առաջ, երբ շրջկենտրոնում թատրոն կար (այն ժամանակ շրջկենտրոնը գյուղ էր կոչվում, հիմա քաղաք է), նա դերասան էր՝ «Սոս և Վարդիթեր»-ում Սոս էր խաղում, երգում էր, Սեյրան էր խաղում «Նամուս»-ում, հիմա կենհական տանող ճանապարհի վրայի փոքրիկ սրճարանում է աշխատում: Աշխույժ, կատակասեր, սրամիտ մարդ է:

— Կնեղանամ, թե որ տուն չմտնենք:

Սեդրակի հայրն էլ զարմանալի մարդ էր, չորս հինգ տարի առաջ մեռավ: Երեսնական թվականներին առաջիններից էր, որ կուլանտեսություն մտավ, բայց սեփական այգու կարտոր էրկար մյվում էր նրա սրտում: Պատմում են, որ մի օր, 1956 թվականին, երբ Սեդրակը տուն է գալիս, հայրը թե. «Աղա, էս իքանիք վայ թե նորից ետ տան»: «Ինչո՞ւ,— զարմանում է Սեդրակը: «Վաղիտն առավոտվանից անհատի մասին է խոսում, հը՞...» Սեդրակը ծիծաղում է, բացատրում, որ ուղիով խոսքը անհատի պաշտամունքի մասին է, որ Մոսկվայում կուսակցության քսաներորդ համագումար է: «Ուրեմն, Ստալինն է անհատը»,— հարցնում է շքամ ծերունին: Սեդրակը գլխով է անում: «Տես է,— շարունակում է ծերունին,— ուրեմն, սաղ աշխարհը կոլխոզ տարավ, ինքը մնաց անհատ, տես է...»: Մերունին կենդանի լինեք, գուցեև տուն մտնեք կոնը. կխոսեք, կծիծաղեին...

— Չէ, Սեդրակ ջան, մի ուրիշ անգամ, շնորհակալ եմ:

— Կավ շարիր,— Սեդրակը թեքվեց դեպի ձախ, մտավ մի նեղ փողոց:

Տների արանքից երևաց Կարմրավոր եկեղեցին:

Սարգիս Գևորգյանը Ռուբենի ծանոթն էր, նա էլ կոնին հետը տարավ: Ապրում է Հրազդան գետին շատ մոտիկ կառուցած երկհարկանի առանձնատան մեջ, հսկա հյուրասենյա-

կում դրքեր կային, շինական, շեխական ծաղկամաններ, բազմաթիվ մոխրամաններ, երկու հեռուստացույց: Անկյունում Ստալինի արձանիկն էր՝ կանգնած ամբողջ հասակով, ձեռքերը գրպանում: Հենց դրանից էլ սկսվեց խոսակցությունը, նոր-նոր սեղան էին նստել, Սարգիս Գևորգյանը բարի գալուստ էր մաղթել կոնին: Զրույցը բնկվեց բենգալյան կրակի պես: Տանտերը շատ հանգիստ ասաց. «...Իսկ ի՞նչ է եղել որ 1937 թվին, մի քանիսին էլ անմեղ տեղն էին բռնել՝ արդարացրին, հը՞...» Ասաց ու պատառաքաղը մեկնեց ձիթապտուղ վերցնելու, ասես սովորական խոսք էր, ուրիշ ոչինչ: Ասաց հանգիստ, գոնե խմած լինեք, գոնե կատաղի վեճի պահին ասվեք: Այն ժամանակ դեռ ապրում էր Վահրամը, կոնը դեռ չէր կարգացել նրա զարմանալի ոտանավորները, բայց... Վեր կացավ տեղից, ցած դրեց բաժակը, որ պատրաստվում էր խմել, ու գնաց: Գրքսում քաղաքն է, մարդիկ, երեխաներ, շենքեր, օդ կար: Վաղելով հասավ Ռուբենը: Լուռ քայլեցին, մտան ռեստորան, խոսեցին ուրիշ բաների մասին:

— Բարև, կոն:

Նայեց. դեմքը կարծես ծանոթ էր, չհիշեց: Անորոշ ժպտաց:

— Բարև...

— Չե՞ս հիշում...

Կարմրավոր եկեղեցին ավելի էր մոտեցել: Իսկ բարձունքի վրա նա խոսված էր թվում, արդեն երևում էին գերեզմանները:

— Ճիշտն ասած՝ չեմ հիշում, ներիր:

— Թաթոսն եմ, չե՞ս հիշում, մի անգամ գիշերով Բյուրական գնացինք, էլը վերջից էր գալիս, ուտելու բան-մանը վրեն, ոտք ցավում էր, ինձ էլ էին նստեցրել էլին, դու էլ նեղացել էիր, թե ինչի քեզ չեն նստեցնում: Մի էլ էր...

— Հա...

Այդ ե՞րբ էր. երևի քսան-քսաներկու տարի առաջ:

— Բարև, Թաթոս ջան, դե ներիր, վաղուց չէի տեսել:

Քայլեցին:

— Հինգ երեխա ունեմ, մեծս տասնվեց տարեկան է: Իրիկունը կմնա՞ս:

— Չէ, Թաթոս ջան:

— Ինչի՞, մնա, էլի, տուն գնանք, աղջիկս ոտանավորներ է գրում, կկարդաս, էնքան եմ ասել քո մասին, ես մարդ չդառա, գոնե սրանք...



Գուրս եկան գյուղամեջ:

— Ես քեզ կգտնեմ, հիմի պիտի Օշական զնամ:

Գնաց:

Առնը դրեց սև ակնոցը, հիշեց Կարոյին. «Սև ակնոցը ոչ թե արևից պաշտպանվելու համար է, այլ ծանոթներին»: Այդպես ավելի լավ էր: Քայլեց դեպի Մարինեի եկեղեցու կողմը:

Ժէ.

Գրասեղանի վրա Առնը երեք ծրար տեսավ: Մեկը բաց էր, խմբագրի մակագրությամբ: Զբացած նամակներից մեկը Տաթևիկից էր: Երբորդ ծրարի վրա ետադարձ հասցեի մասում գրված էր՝ Գայանե Կարապետյանից: Հաստ ծրար էր, բացեց: Աշակերտական մի տետրակ էր, փոքրիկ գրություն կար հետը.

«Բարև Ձեզ, ընկեր Շահինյան:

Ձեզ գրում է Հասմիկի և Սերոբի ընկերուհին:

Երեկ, հրր որ նայում էի Հասմիկի պայուսակը, գտա նրա հուշատետրը: Քիչ էր գրած, մի քանի էջ: Գիշերը արտագրեցի բոլորը, ուղարկում եմ: Հասմիկի ձեռագիրը մոտոս եմ պահել, բայց ամեն ինչ ճիշտ-ճիշտ արտագրել եմ: Չգիտեմ, լա՞վ եմ անում, որ ուղարկում եմ: Ես այն աղջիկն եմ, որ Երևան էի եկել, հիշ՞ում եք, բյուրոյի ժամանակ խոսեցի: Ամեն օր ծաղիկներ եմ տանում նրանց գերեզմանին, հուշատետրն արտագրում էի ու լաց էի լինում: Գասարանում մերոնց պատմեցի, թե ինչեր ասացին Երևանում: Դե լավ, չեմ երկարացնում: Բարևում են մեր դասարանցիները: Ես նրանց չեմ ասել Հասմիկի հուշատետրի մասին, բայց ասել եմ, որ Ձեզ նամակ պիտի գրեմ:

Գայանե»

Բացեց տետրը:

«Գեկտեմբերի 30

Չգիտեմ ինչու, ուզեցի հուշատետր գրել: Վեցերորդ դասարանում մի անգամ սկսեցի: Երկու տարի գրում էի, հետո վառեցի: Կարդացի ու վառեցի: Թիթիլ բաներ էին: Հիմա ինչու եմ գրում, չգիտեմ: Տխրում եմ, շուտով նոր տարի կլինի, ինչո՞ւ եմ տխուր: Երեկ ձեռագրի խաղացիք, արև էր: Շարունակ վահան Տերյան եմ ուզում կարդալ, ինչ լավ մարդ է եղել...

Մեր գյուղի մոտ ատոմային կայան են կառուցում: Ֆիզիկայի դասատուն երկար բացատրեց: Առաջինն է Հայաստանում: Մաման ամեն օր շանչում է կայանի կողմը, բացատրում եմ, չի հասկանում: Հայրիկն ասում է, թե դարունը բացվեց ու ամեն ինչ ճիշտ գուրս եկավ, կբռնեք ուրիշ գյուղ, կարող է՝ շրջկենտրոն: Չեմ ուզում, մեր գյուղից ո՞ւր պիտի գնանք... Սերոբի համար պիտի հիմա շարագրություն գրեմ «Վարդանանքի» մասին: Մեկն էլ կմտածի, թե ինքը չի կարող: Ալարում է, թե չէ՝ ո՞վ է նրա շափ գիրք կարդացել: Մաման ասաց, որ հայրիկը Երևան պիտի գնա, ինձ համար նոր շոր կանի, կոշիկներ էլ: Էլի տխուր եմ, հանկարծ, չգիտեմ ինչու, տխրում եմ: «Չլինի՞ սիրահարվել ես», — երեկ հարցրեց Սերոբը: Վերջին ամիսներն են, կավարտենք. ինչ պիտի անեմ, տեսնենք կընդունվե՞մ... Սերոբը պիտի տա աշխարհագրական, թեպետ շորս օր առաջ ասում էր ֆիզիկուս ինտիտուտ կզնա: Ո՞վ է նրանից բան հասկանում: «Կոլումբոս ես ուզում դառնալ, — ձեռ առավ Գայանեն, — հայաստանցի Կոլումբոս, ի՞նչ աշխարհամաս պիտի գտնես...»: «Գտել եմ», — կարճ կապեց Սերոբը ու հանկարծ ծիծաղեց: «Ի՞նչ», — հարցրի: «Շատ բան իմանաս, շուտ կպառավես», — ու գնաց: Պիտի ասեմ եռանկյունաշափության խնդիրները միասին լուծենք: Կուզի՞ որ...

14 հունվարի

Ժողովը ուշ վերջացավ, միասին տուն եկանք՝ ես ու Սերոբը: Չորս անգամ պտավեցինք եկեղեցու պատերի տակ: «Ես եկեղեցու վրա պտակվեմ», — ասաց Սերոբը: Ծիծաղեցի, թիթիլ: «Տասնմեկ տղա պիտի ունենամ»: «Ինչո՞ւ», — հարցրի: «Որ ֆուտբոլի թիմը լրանա»: «Բա որ աղջիկներ էլ լինեն»: «Այ դա չէի մտածել»: Ծիծաղեցինք: Ճանապարհին չէինք խոսում: Մեկ էլ սսկվեցինք: Առվի վրայից պիտի անցնեինք, ձեռս բռնեց, անցանք, բայց էլի բռնել էր, չէր թողնում, հետո հանկարծ ասաց. «Հասմիկ, «Ռոմեո և Ջուլիետ» կարդացե՞լ ես...»: «Ձէ, — ասացի: — Գիտեմ, որ Շեքսպիրն է գրել, կինո էլ կա, կկարդամ, կվերցնեմ գրադարանից կկարդամ: Բայց ինչո՞ւ ասաց, հը՞...»:



Խոռով եմ Գայաների հետ: Սերոբի հետ էլ: Չեմ գրի, թե ինչի: Հայրիկը բերեց շորս, մի քիչ կարճ է, այսինքն, կարճ չէ, բայց ասաց, որ շորս մատ երկարացնեմ: Կլինեմ Հոռոմսիմ ձալս: Մաման կերկարացնի: Ախր, կարճ չէ:

## 22 հունվարի

Սերոբը կովեւ էր Եղիշի հետ, ծեծել էր, Եղիշի քթից արյուն էր գալիս: Կարո՞ղ է՝ առավոտովա, ֆիզկուլտի դասի համար. երբ որ ես հանվում էի, տեսա, որ Եղիշը պլշած ինձ է նայում դռան արանքից, կոշիկս շարտեցի: Շորս չեմ երկարացնի: Սերոբը հետս չի խոսում, լավ, ե՞ս ինչ մեղավոր եմ: Սերոբին տարան ընկեր Բեգոյանի մոտ, բա որ հեռացնե՞ն... Ախր, ինչո՞ւ է ծեծել էդ փսխեքտին: Ինչ ուզում է լինի՞ վաղը կասեմ, որ երկրաշափությունը չեմ հասկացել, թող բացատրի:

## 10 փետրվարի

Գնացել էինք Փառնակ քեռու տուն: Ես, Գայանեն, Աստղիկը, Սերոբը, Վազգենը: Նայեցինք Գերմանիայից բերած ալրոմները: Ի՞նչ լավ քաղաքներ են: «Կմեծանանք, կզնանք ման կզանք: Իտալիա էլ կզնանք: Ռոմեոն ու Ջուլիետը էնտեղ են ապրել...», — ասաց Սերոբը: «Շա՞տ շեղավ», — ասաց Վազգենը: Հետո սիրուն-սիրուն աղջիկների նկարներ տեսանք, վայ մամա ջան, ինչ սիրուն աղջիկներ: Փառնակ քեռին ասաց, որ Գերմանիայի ինչ-որ քաղաքում, կովի տարիներին՝ ինքը բուրգոմիստր է եղել, այսինքն քաղխորհրդի նախագահ: Մեր զորքից ոչ ոք գերմաներեն չի իմացել, ինքն է ասել, թե գիտի, իրեն են դրել: «Բա ո՞նց էիր խոսում», — ասաց Սերոբը: «Ձեռքով-ոտքով»: «Շա՞տ մնացիր»: «Երկու օր»: «էլի բան է»: Փառնակ քեռին շատ հետաքրքիր բաներ պատմեց, զրքեր ցույց տվեց, ուրիշ-ուրիշ լեզուներով էին, բան չհասկացանք, հետո ասաց, որ իր կյանքն իզուր փշացնում է մեր խուլ, կորած-մոլորած գլուղում: Աղջիկներով ավիեցինք-հավաքեցինք նրա սենյակը. դե, ոչ ոք չունի, շատ ուրախացավ: Երբ որ դուրս եկանք, Սերոբն ու Վազգենը ծոցներից հանեցին մի-մի նկար: Թոցրել էին: «Չի իմանա, — ասաց Վազգենը, — էնքա՞ն կար...»: Սիրուն աղջիկների նկարներ էին: Չգիտեմ ինչու, ես խլեցի Սերոբի ձեռքից, ձղեցի: Սերոբը սկզբից բարկացավ, բայց հե-

տո ծիծաղեց, ամբողջ ճամփին ուրախ-ուրախ բաներ էր պատմում: Վազգենը երևակայում էր իր նկարով: Պահ... Պայթում եմ տղաներից:

## 20 փետրվարի

Գնացինք սար, ձնծաղիկի, շգտանք: Ամբողջ դասարանով էինք: Մենակ Անահիտը չէր եկել: Սերոբը մեզնից բաժանվեց: Մուժն ընկնելու վրա էր, եկավ, մի փունջ բերել էր, որտեղի՞ց՝ «Քո ինչ գործն է, — ասաց, — խանութից առա. Մոսկվայից էին ստացել»: Գի՞ծ: Ոչ մեկի չեմ ասի, կպահեմ կչորացնեմ, կզնեմ Տերյանի զրքի մեջ... Բայց ախր պայթում եմ, ուզում եմ աշխարհն իմանա: Ի՞նչ լավն ես, առաջին, ձնծաղիկ...:

## 27 փետրվարի

Այս անգամ ձնծաղիկ կար: Մրսած, կապույտ ծաղիկներ. ի՞նչ զարմանալի է բնությունը: Ճանապարհին Սերոբը տխուր էր, կամ առաջ էր ընկնում, կամ ետ: Յուրտ չէր: Թեպետ ձյուն էր, արևը վառում էր. ինչպես է, որ ձյունը չի հալվում: Հիմար եմ, իսկ Գայանեն ասեց. «Սերոբը այսօր քիթը կախել է, մի տեսակ է երևում...» «Ի՞նչ անեմ, — ասացի, — գնա քիթը բարձրացրու»: Բայց տխրեցի, ուզում էի լաց լինեմ: Գայանեն զնաց Սերոբի մոտ, ի՞նչ էին քշվում... Վազգենը բոլորին ցույց տվեց Փառնակ քեռուց թոցրած նկարը: Ես էլ նայեցի. գեղեցիկ աղջիկ էր, կիսաբաց ուտերով: «Հիշո՞ւմ ես», — հարցրեց Սերոբը: «Ը՛հը», — ասացի ու չհասկացա ինչը: Երեի իր վերցրած նկարի մասին էր ասում, որ ես պատռեցի: Գայանեն մոտեցավ, ես ասացի, որ գարնանը քոշելու ենք շրջկենտրոն: Սերոբը զարմացած նայեց. «Ի՞նչ»: Ես ասացի՝ ինչ որ հայրիկս է ասում: Սերոբը ծիծաղեց, ես լրջացա: «Ու կզնանք, — ասացի, — ինչ կա մեր գլուղում, բաղնիք էլ չկա...»: Սերոբը հանկարծ տխրեց: Ես էլի ինչ-որ հիմար բաներ ասացի: Սերոբը շարտեց ձեռքի ձնագունդը, ոչինչ չասաց: Երբ որ նա հեռացավ, Գայանեն կպավ ինձ. «Ճի՞շտ»: «Եսիմ, — ասացի, — հայրիկն է ասում, ինչ կա որ, մեկ չի՞»:

## 8 մարտի

Սերոբն ինձ համար նվեր էր բերել. մի շիշ գուլսի, մի գուլգ բարձրակրունկ կոշիկ: Իսկական աննորմալ է: «Շրջկենտրոնի՞ խանութից առա, — ասաց, — իմ փողով է, ամառը որ



աշխատել էինք...»: Կոշիկը երկու համար մեծ էր, թաքուն  
գնացի դուզարան, փորձեցի: Գպրոցից միասին տուն գնա-  
ցինք: «Ախր դու հասկանո՞ւմ ես, ինչ ես արել,— ասում եմ  
ես,— ես տանն ինչ ասեմ, ասեմ, ո՞վ է առել»: Գլուխս կորց-  
րել եմ, կպահեմ դո՞մում, պատի մեջ տեղ կա, մինչև տեսնենք  
ինչ կլինի: Դուխուց մի քիչ ցանեցի մազերիս: «Տնից շան  
հոտ ա դալիս»,— ասաց հայրիկը, ներս մտնելով: Մաման  
զարմացավ. «Ի՞նչ հոտ, այ մարդ, քեզնի՞ց ես հոտ առնում»:  
«Եսիմ»: Ես սարսափից պատի ձեփ էի դառել, բա որ իմանա-  
լին... «Ջուր դիր, գլուխս լվանամ»,— ասացի մամային: Գիժ,  
գիժ, գիժ:

### 11 մարտի

Երկրաշափության տեղիս մեջ Սերոբը նամակ էր գրել. «Որ  
մութն ընկնի, կգաս նկեղեցու մոտ»: Ճանապարհին ավից,  
տանը կարդացի: Երկար մտածում էի, ի՞նչ անեմ, ինչո՞ւ է  
կանչում: «Երեսիդ գույն չկա»,— ասաց մաման: Գնացի դո՞մ,  
դուռը փակեցի, հագա կոշիկները: Գոնե լույս լինեք, տեսնեի:  
Երկու համար մեծ է, քթերին բամբակ կո՞նեմ: «Ի՞նչ էիր անում  
դո՞մում»,— հարցրից մաման: «Ինչ պիտի, գլուխս ցավում է»: Ի՞նչ  
անեմ՝ գնամ, թե՞ շփնամ: Մութն ընկավ, հայրիկը չկար  
ու չկար: «Ո՞ւր է»: «Շրջկենտրոն գնաց, տուն ա ճարել, բա-  
զար են անում»: Ինչ լավ եղավ... «Գպրոցում ժողով ունենք,  
մամա»: «Բա գլուխդ ցավո՞ւմ էր»: «Անցավ»: «Չուշանաս, հերդ  
տանը չի»:

Մութ էր, վախենում էի, մեկ էլ լսեցի անունս: Սերոբն էր:  
«Ի՞նչ ես ասում, ինչո՞ւ ես կանչել»: «Մի քիչ նստենք», «Քաղը  
սառն է»: «Ոչինչ»,— ու փոեց թաշկինակը: Նստեցինք մի  
գերեզմանաքարի: Մութ-մութ էր: «Չե՞ս վախենում»,— հարցրի:  
«Որ դու հետս ես, չէ»: «Մուտասան»: Նստել էր ու ոչ մի ձայն  
չէր հանում: «Հայրիկս տանը չի»,— ասացի: «Գիտեմ»: «Որ-  
տեղի՞ց: «Գիտեմ, էլի»: Ցուրտ էր: «Ուզում էս պիջակս  
տամ քեզ»— «Բա դո՞ւ»: «Ոչինչ»: Մրսում էի, պիջակը գրեց  
ուներիս, տաքացա: «Դե, — ասացի, — ի՞նչ ես ասում»: Սե-  
րոբը լուռ նստել էր, կարծես մոռացել էր, որ ես եկել եմ, հետո  
հանկարծ ասաց. «Երկու ամիս հետո կավարտենք»: «Ինչ շատ  
են ասողերը, — ես երկինք նայեցի, — այ, այ, իմ ասողը: Դու  
ասող ունե՞ս»: «Ըհը»: «Ո՞րն է»: «Վերևում չի»: «Բա՞...»:

«Տասի «Ա»-ում: «Ի՞ր...», «Ա»-ն մեր դասարանն է»: Գիժ:  
Մեկ էլ հանկարծ. «Հասմիկ, դու ինձ սիրո՞ւմ ես»: Ի՞նչ ասեի,  
ձայն չհանեցի: «Մրսում ես, — ասացի, — հագիր պիջակդ,  
ես գնամ»: «Մի քիչ էլ մնա»: «Մրսում ես, որ էդպես է, պի-  
ջակդ գցեմ երկուսիս վրա»: Մի քիչ մոտ նստեցի, իսկապես  
մրսում էր: էլ շտտեցինք...

Հիմա ուշ գիշեր է. հայրիկը եկավ, մաման քնած է: Նոր էլի  
արթնացավ, քրթմնջաց. «Քնի, այ աղջի, պչերդ քոռացան»: Կարծում է  
հանրահաշիվ եմ լուծում, ասել եմ, որ վաղը ստու-  
գողական է: Մեր գյուղից ոչ մի տեղ էլ չենք գնա, ինչ ուզում  
է լինի, չենք գնա:

### 19 մարտի

Շարադրություն գրեցինք. ինչ եմ ուզում գառնալ: Ես գրե-  
ցի, որ ուզում եմ ճարտարապետ դառնամ, շենքեր, կամուրջ-  
ներ, եկեղեցիներ շինեմ: Ընկեր Քերոբյանը եկեղեցիներ բառը  
ջնջել էր կարմիր թանաքով, լուսանցքում էլ գրել. «Մեր երկրում  
վաղուց արդեն եկեղեցիներ շեն կառուցում»: Բայց ինչո՞ւ էի  
գրել, շեմ իմանում: Ես գրել էի, որ երկնքում աստղ ունեմ,  
ընկեր Քերոբյանն ընդգծել էր, լուսանցքում ավելացրել. «Ի՞նչ  
ասող»: «Երեք» էր նշանակել: Սերոբը «հինգ» էր ստացել,  
չհարցրի, թե ինչ է գրել, ոչ մի դասամիջոցի իրար շոտեցանք:

### 10 մարտի

Սերոբը դասի չէր եկել: «Հիվանդ է»,— ասաց Վազգենը ու  
նայեց ինձ «Գնանք տեսնենք, — ասաց Գայանեն, հետո հարց-  
րեց, — կգա՞ս...»: Ես իբր թե չսեցի: Ի՞նչ հիվանդ է, տուն եմ  
եկել ու շփտեմ ինչ անեմ, ինչո՞ւ չգնացի: Երեկ գիշերը մրսել  
է: Գիժ:

### 22 մարտի

Սերոբը էլի դասի չէր եկել:

Բոլորով գնացինք:

«Տաքություն ունի»,— ասաց մայրը: Մի քիչ նստեցինք  
կողքի սենյակում, ինքը քնած էր: Ես հարցրի՝ քանի՞ աստի-  
ճան: «Չենք չափել, հերը չերմաշափի է գնացել, քառասուն  
կլինի»: «Ես գնամ բերեմ»,— ասացի ու վեր կացա: «Հերը  
ուր որ է կգա, դու ո՞ւմ աղջիկն ես»: Իբր թե չգիտի: Ասացի:  
Մի քիչ նստեցինք, վեր կացանք: Դուան արանքից նայեցինք:



Ես էլ նայեցի: Քնած էր, դեմքը քրտնած էր, գլուխը շալով կապած: Գիժ, գիժ, եկեղեցու մոտ մրսեց: Քիչ մնաց բարձր ասեի:

28 մարտի

Երկու օր է, որ Սերոբը դասի է գալիս: Մի քիչ նիհարել է, գուշնը գցել: Միասին տուն եկանք: Փողոցում մարդ չկար, պայուսակս ինքը վերցրեց. «Ծանր է»: «Դու հիվանդ ես»: «Ոչինչ»: Գլուխորհրդից դուրս եկավ բնկեր Բենոն: Սերոբը պայուսակը տվեց ինձ: Հանկարծ ասաց. «Որ մեռնեմ, ի՞նչ կանես»: Գիժ: «Մե կհագնեմ», — ասացի: «Ծի՞շտ»: «Փորձիր»: Միծաղեցի: «Գիշերը բան հարցրի, է՛, ե՞րբ պիտի պատասխանդ իմանամ»: «Ի՞նչ հարցրիր»: «Մոռացե՞լ ես»: «Չեմ մոռացել, — ինչ՞ու պիտի սուտ ասեի, — ի՞նչ ես ուզում, որ ասեմ»: Ինչ խելքիս փշեց, չգիտեմ: Նա հանկարծ տխրեց ու էլի ոչինչ չասաց:

Եկա տուն, ամբողջ օրը Տերյան էի կարգում:

Ապրիլի 1

«Սիրում եմ, — ասացի, — սիրում եմ»: Սերոբը զարմացած նայեց ինձ: Ֆիզիոլոգահիճում ոչ ոք չկար: «Ծի՞շտ»: «Այսօր ամսի քանի՞սն է»: «Ապրիլի մեկը»: «Այսինքն, խաբելու օրը», — ասացի ու փախա բակ: Վազեցի ձոր, արդեն կանաչ էր, հողը՝ փափուկ-փափուկ: Ոտքերս հանեցի, մտա ջուրը, թրջվեցի: Հետո գժի նման թռչկոտում էի, ինձուինձ երգում: Ի՞նչ պատահեց: Ես էլ եմ ախր աննորմալ: Ֆիզիոլոգի դասին չգնացի: Հիմա էլ եմ քթիս տակ երգում: Գնամ կոշիկներս փորձեմ, հայրիկը քաղաք է գնացել:

Ապրիլի 10

Սերոբը շտոսեց հետս: Անցավ կողքիցս, շտոսեց: Քիթը ցցել է, պահ... Նստեց վերջում, մենակ: Ես էլ գնացի ու Վազգենին հարցրի հանրահաշվի խնդիրը: Բացատրեց-բացատրեց, չհասկացա, իսկ Սերոբը լուսամուտից դուրս էր նայում: Երեակայում է: Ի՞նչ անհասկացող են տղաները...

Ապրիլի 19

Միասին ձոր իջանք: Ինչպես եղավ, չգիտեմ: Դասից հետո տուն պիտի գնայինք, մեկ էլ տեսա՝ ձորի ճամփին ենք:

«Ո՞ր»: «Մանուշակի տեղ գիտեմ»: «Հա՞...»: «Խաբելու օրդ վերջացա՞վ»: «Դրա՞ համար էիր քիթդ ցցել»: «Որ ջրնդունվեցի, կգնամ ատոմային կայանի շինարարություն, փող կհավաքեմ»: «Մաման ասաց, ջրնդունվեցիր, պսակում ենք, ուզող կա»: «Ի՞նչ»: Հանկարծ տեսա, որ Սերոբը դունատվել է, աչքերը մի տեսակ են: «Ասաց ուզող կա»: Սուտ էի ասում, մաման ոչ մի բան էլ չէր ասել, թիթիկ-թիթիկ խոսում էի: Հետո մանուշակ գտանք: Ամեն ինչ լավ էր, միայն... Արդեն տուն էինք դառնում, մեկ էլ թփերի մեջ Սերոբը գրկեց ու համբուրեց ինձ: Չիմացա, թե ինչ կատարվեց, միայն ապտակի ձայնն եմ հիշում: Ապտակեցի ու փախա: Չեմ խոսի հետը, հարյուր տարի էլ մնա՝ չեմ խոսի: Անամոթ:

Ապրիլի 20

Չեմ խոսում: Մոռեցավ, ինչ-որ բան ասաց, չնայեցի:

Ապրիլի 25

Չեմ խոսում:

Ապրիլի 27

Քիմիայի դրքի մեջ նամակ էր գրել: (Գայանենն արտագրել է նաև նամակը, որ, հավանորեն, հուշատետրի մեջ է մնացել: «Հասմիկ ջան, ներիք ինձ, լա՞վ... Մի հանցանքին մի պատիժ է հասնում, սիլա տվիր, հերիք չէ՞ր: Մի շարաթ է հետս չես խոսում, հերիք է, լա՞վ... Թե չէ ինձ կզցեմ ձորը»): Հանկարծ չզցի, գիժ է, չէ՞: Լավ, առավոտյան եռանկյունաշափուկյան գիրքը կուզեմ:

Ապրիլի 28

Ուզեցի: «Կգա՞ս ձորը», — հարցրեց: «Ե՞րբ, — հարցրի հիմարի պես, փոխանակ ասեի՝ ինչ ձոր — ինչ բան: «Էսօր, վաղը, մյուս օրը, դու ասա»: Նիհարել էր: Վաղը, — ասացի:

Ապրիլի 29

Ինչ լավ կլինեն չգնայինք, աստված ջան, ի՞նչ կլինի հիմա, ի՞նչ: Նվարդ ձալոն՝ Վազգենի տատը, տեսավ: Չանչեց մեղ, փնթփնթաց ու վռազ-վռազ բարձրացավ գյուղ, համարյա վաղում էր... Չորս ժամ է տանն եմ, ի՞նչ կլինի, ի՞նչ...



Այստեղ հուշատետրը վերջանում էր: Գրված էր ամսաթիվը միայն, երևի մեկն ու մեկը ներս է մտել, Հասմիկն ընդհատել է գրելը, պահել տետրակը... «Իսկ մայիսի 12-ին...» սա արդեն Գալյանն էր ավելացրել:

Մնացածը Առնը գիտեր:

Նամակը Տաթևիկից էր. հետո կկարդա: Կկարդա, երևի դարձյալ չի պատասխանի: Ինչպես են մարդիկ նամակ գրում, զարմանալի էր:

Երրորդ ծրարը բաց էր, պաշտոնական թղթի վրա: Կարդաց.

«...Բյուրոն ս/թ լ մայիսի 28-ի նիստում, լսելով և քննարկելով ԿԿ բարտուղար ընկ. Ն. Անտոնյանի հազորդումը, արձանագրում է հետևյալը:

Ս/թ մայիսի 4-ին Վ. Ա. դյուղի լրիվ միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի, ՀամԿԵՄ անդամ Հասմիկ Սարուխանյանը ինքնասպանությունը վերջ է տալիս իր կյանքին: Երկու օր անց ինքնասպանություն է գործում նույն դասարանի աշակերտ, ՀամԿԵՄ անդամ Սեդրե Վարդանյանը: Հետագա ուսումնասիրությունը պարզում է, որ բավական երկար ժամանակ երկու պատանիների մեջ եղել է սիրային կապ, որը, որքան էլ զարմանալի լինի, դուրս է մնացել դպրոցի մանկավարժական կոլեկտիվի և կոմերիտական կազմակերպության տեսադաշտից: Ավելին, նույնիսկ այն բանից հետո, երբ նրանց անառողջ հարաբերության մասին խոսում էր գյուղի հասարակությունը, մանկավարժական կոլեկտիվը և կոմերիտական կազմակերպությունը հարկ չհամարեցին միջամտել և ճիշտ ուղղություն տալ պատանիների դաստիարակության գործին: Միանգամայն պարզ է, որ եթե դպրոցում կոմերիտական կազմակերպությունը գտնվեր իր բարձրության վրա, եթե հաճախակի զրույցներ, բանավեճեր կազմակերպվեին դաստիարակության, բարոյականության հարցերի վերաբերյալ, դպրոցը չէր կանգնի նման խայտառակ փաստի առաջ:

Բյուրոն արձանագրում է, որ այս օրերին, երբ մեր երկրի կոմերիտականներն ու արտամիութենական երիտասարդները հերոսական գործեր են անում աշխատանքում, ուսման մեջ՝ ՀամԿԵՄ անդամներ Հ. Սարուխանյանի և Ս. Վարդանյանի ինքնասպանությունը չի կարելի բնութագրել այլ կերպ, քան իբրև փախուստ՝ մեր հերոսական առօրյայից, իբրև հոգեկան թուլության, փոքրոգության նշան:

Ելնելով վերոհիշյալից, բյուրոն որոշում է.

1. Ի ցույց դնել Ա. շրջանի Վ. Ա. գյուղի միջնակարգ դպրոցի կոլեկտիվը (ղիրեկտոր Ս. Բեգոյան, կոմերիտական կազմակերպության բարտուղար Գ. Կարապետյան):

2. 10-րդ «ա» դասարանի կոմերիտական կազմակերպիչ Գալյանն Կարապետյանին ազատել իր պարտականություններից և հայտարարել խիստ նկատողություն, գրանցելով անձնական բարտում:

3. Ծիշտ համարել ինքնասպանությունից հետո ղիրեկցիայի ձեռնարկած միջոցառումները, դատապարտել այն կոմերիտականների վարքագիծը, որոնք, հակառակ ղիրեկցիայի հրահանգի, մասնակցեցին ՀամԿԵՄ անդամներ Հ. Սարուխանյանի և Ս. Վարդանյանի թաղմանը...»:

«Ընկ. Լ. Շահինյանին Հողվածք վերակառուցիր այս որոշման ոգով»:

Ոգով...»

ԺԸ.

Ամեն անգամ, երբ գնում էր Աշոտենց տուն, Առնը նախ մտնում էր Արայիկի սենյակը:

Այս անգամ էլ:

— Բարև ձեզ, Ի՞նչ բանի եք, — հարցրեց, որովհետև սենյակում նաև Սևակն էր, Արայիկի համալսարանական ընկերը:

— Ջնջում ենք, — ասաց Արայիկը, — բարև:

— Ա, դո՞ւք եք... — ասաց Սևակը:

— Ի՞նչ եք ջնջում, — Առնը թաղվեց հին բաղկաթոփ մեջ, որը, ըստ Արայիկի, պատկանել է Երևանի նախավերջին նահանգապետին: — Ձերոնք ո՞ւր են:

— Ընկերդ հերթապահ է, մաման կինո գնաց:

Արայիկի սենյակն այս տան միակ մարդավայել անկյունն:



է, ըստ Լեոնի: Մտնում ես ներս, սենյակի տերչ շի ասում  
: Ի՞նչի կըշիկներդ, հողաթափեր հագիր կամ տիկին Արինայի  
հին բոկոտիկները, այս սենյակում ոչ ոք չի հարցնում առողջու-  
թյունդ, չի տրանջում, թե վերջերս ուշ-ուշ ես երևում: Արայի-  
կին կարող ես նույնիսկ շքարենել: Նա մի օր Լեոնին լուրջ-  
լուրջ բացատրում էր, որ 50—60 տարի ապրող յուրաքանչյուր  
մարդ ամենաբարձր կյանքում երկու ամիս ծախսում է բարենելու  
վրա, եթե մեկ-մեկ գումարում ես բարենելու վրա ծախսած  
բույսերը: Այնպես որ, ներս մտնելուց հետո կարող ես պար-  
զապես փովել թախտին կամ բազկաթոռին և՛ ուզում ես խոսիւր,  
ուզում ես «կոճկիր բերանդ» (Արայիկի դարձվածքն է):

Ամեն անգամ Արայիկի սենյակը մտնելիս Լեոնը նայում է  
պատերին. ի՞նչ ներ բան կա: Իսկ ինչն էր ասես չկան. մի  
քանի բառ Շառլ Ազնավուրի երգերից, դասացուցակ, երգիչների  
անուններ, հեռախոսների համարներ, ընկեր-ընկերուհիների  
երկտողեր, մոտավորապես այս ոճի. «Հաստազլուխ, եկա,  
սպասեցի 17 րոպե 45 վայրկյան, գնացի...» Կամ «Ժակ Բրեյլը  
տանում եմ, լավ-լավ, կրեքեմ...»: Կամ՝ «Նա ասաց, որ քեզ  
սիրում է: 20-րդ դարի երկրորդ կես, Երկիր մուրբակ»:

— Հը՞,— ի վերջո գլուխը բարձրացրեց Արայիկը,— ի՞նչ  
սիգարետ ես ծխում, հորընկեր (դա Արայիկի գյուտն է. «Ինչո՞ւ  
հորեղբայր կլինի, հորընկեր՝ ոչ, հը՞...»):

Լեոնը մեկնեց սիգարետի տուփը, պատին նոր բան կար.  
«Ինձ տվեցին աչքեր և ասացին նայիր, նայեցի, բայց ոչինչ  
չտեսա ես կյանքում...»:

— Դո՞ւ ես թարգմանել:

— Թարգմանությունը միշտ կես խնձոր է, մի կեսը կերած  
է լինում թարգմանիչը: Հը՞...

Տղաները խճճվել են մազնիտաֆոնի ժապավենների մեջ:

— Չեմ հասկանում ինչ եք անում:

— Ժապավեն չի ճարվում, հորընկեր, ջնջում ենք, որ նոր  
բան գրենք, հասկացա՞ր,— հետո հարցնում է,— ծանոթ շունե՞ս  
ժապավենի դժով:

— Գլխացավ ունեմ ու պարտք: Չայնը բարձրացրու:

Լեոնը փակեց աչքերը. ոչ, երաժշտությունը չի կիսում մար-  
դու մենակությունը, ընդհակառակը, լրիվ է դարձնում, օգնում  
է, որ մարդ անջատվի աշխարհից, առանձնանա:

— Արայիկ:

— Հը:

— Մանոթ ներկարար ունեմ, էժան էլ կապիտակեցնի:

— Տեղ շատ կա,— Արայիկը ծիծաղեց, հետո լրջացավ.—  
հորս մոտ շատես, թե չէ կես ժամ կճառի: Հորընկեր, միշտ մտա-  
ծում եմ՝ ինչո՞ւ իրար նման չեք...  
Արայիկը մատը սեղմում է մազնիտաֆոնի ստեղծերից մե-  
կին, և սկավառակը պտտվում է ավելի տարգո՝ Հետո լսում են  
մյուս երգը, երրորդը, ամեն մեկից՝ մեկ-երկու տակտ, և հնչում  
է դատավճիռը. ջնջել կամ չջնջել:

— Գիտե՞ս ինչու... — Արայիկը շարունակում է քիչ առաջ-  
վա զրույցը:— Քարոզից շուտ ես հոգնում: Ոչ տերտեր գուրս  
կգար քեզանից, ոչ պատմություն գասատու:

Լեոնը մի պահ մոռացավ Արայիկին, ականջը ձգվեց դեպի  
մազնիտաֆոնը. ծանոթ երգ էր, չկարողացավ մտաբերել՝ ի՞նչ...  
— Թող նվագի: Պիտի ջնջե՞ք...

Արայիկը ցավակցանքով նայեց նրան:  
— է, հորընկեր, հիմա սա նվագում են նույնիսկ կոմերի-  
տական ժողովից առաջ: Հորս խելք սովորեցրու:

— Ի՞նչ է եղել:

— Ասա թող հոտ չքաշի:

Լեոնը ծիծաղեց:  
— Գիտես, չէ՞, անցյալ տարվանից ծխում եմ: Ինքն էլ  
գիտի, բայց ամեն անգամ չի ալարում, որ զարմանա. զուգա-  
րանից գուրս եմ գալիս թե չէ, հոտ է քաշում: Գե տանը որտե՞ղ  
ծխեմ: Ասա թող հոտ չքաշի:

— Ինչ-որ երգ տղաները լսում են հանկարծ լրջացած, թե՞  
Լեոնին է թվում:

— Ջնջե՞նք,— հարցրեց Սեակը:

— Եսիմ,— Արայիկը սիգարետի ծուխը խնամքով ներս է  
քաշում, մտախո՞հ է,— Ջեմմայենց տանն ենք ձայնադրել, լսե-  
ցի՞ր չխկոցը: Ջեմման-սուրճ բերեց, զգալն ընկավ...  
— Հա,— ասում է Սեակը,— հիշում եմ:

— Ջնջենք,— ի վերջո Սեակին արձագանքում է Արայիկը:  
Լեոնը նրա ձայնի մեջ տխրություն է որսում,— ջնջենք,— ար-  
գեն անտարբեր է, ի՞նչ պատահեց:

— Լավ,— համաձայնում է Սեակը,— Աղամոն հիմա ուրիշ  
ոթիմով է երգում, կճարեմ: Ջեմման վերջերս չի երևում:



— Թող մնա,— հանկարծ ասում է Արայիկը, հետո դադանում կռնին,— հորընկեր, մի բան հարցնեմ. քանի՞ տարեկանում լավ խմեցիր առաջին անգամ...

Քանի՞: Երեսունհինգ-քառասուն տարեկանից հետո հիշողությունը միայնակ կնոջ է նման. հեշտ է դավաճանում: Յոթերորդ դասարանում, պատերազմից հետո առաջին ամառն էր, երևանում նոր էին սկսել պաղպաղակ արտադրել ամերիկյան կաթի փոշով, Կարոյի հետ մի շաբաթ շարունակ կոպեկներ հավաքեցին, մի հատ պաղպաղակ առան, կիսեցին: «Այնքան հարուստ լինենք,— երազեց Կարոն,— որ երկու հատ առնենք ու առանձին-առանձին ուտենք»: Ե՞րբ խմեցին... Պատմի՞:

— Չեմ հիշում, ընկերորդի,— կռնն էլ մեկ-մեկ Արայիկի սնով էր խոսում,— այդպիսի օրերը անկետայի մեջ չեն գրում, մոռացվում են,— ու մտածեց. «Թեպետ լավ կլինեիր գրվելին, մեր սերնդի համար լավ կլինեիր...»:

Արայիկը ծիծաղում է. նա չի լսում այն, ինչ մտածում է կռնը: կռնը ժպտում է տխուր:

— Ասում եմ՝ շխմե՞նք, քանի մաման չի եկել:

— Խմենք,— ասում է կռնը, հետո հանկարծ լուում:

— Ի՞նչ պատահեց:

— Սուա,— ցույց է տալիս մագնիտաֆոնը,— լսենք:

— Է՞, ձերացել ես,— հետո ձեռքով է անում Սևակին,— թող: Ոնց է մնացել դա, չեմ հասկանում:

Մագնիտաֆոնը նվազում էր «Փոքրիկ ծաղիկը». հին, հոգնած տանգո, թոշակի գնացած երգ՝ ինչպես կասեր Արայիկը: կռնը խրվել էր բազկաթոռի մեջ, փակել աչքերը. ոչ, հիշողությունը միշտ չէ, որ դավաճանում է...

...Դա նրա առաջին գործուղումն էր, աշխատանքի երրորդ ամսում: Քաղաքում (քաղա՞ք էր, թե գյուղ, դժվար էր ասել) ոչ մեկին չէր ճանաչում. եկավ հյուրանոց, անսովոր էր, հոգնած: Ճանապարհին երկու շիշ կարմիր գինի էր վերցրել, խմեց մի քանի բաժակ: Գրասեղանին ձայնապնակ կար: Մի կերպ կարգի զցեց ուղիորդան, և սև պլաստմասսան սկսեց երգել: «Փոքրիկ ծաղիկը» այն ժամանակ նոր էր, առաջին անգամ էր լսում: Խմեց: Ավելի հեշտ էր ներս գնում գինին, երբ սենյակում երգ կար: Դուռը ծեծեցին: Քսանմեկ-քսաներկու տարեկան աղջիկ էր, բարալիկ, մաղեբը թափած ուսերին: «Լուցիկի ունե՞ք»: «Կա»: «Ինձ մի քանի հատիկ է հարկավոր,

սենյակումս մի լիքը տուփ կար, բայց հատիկներն այրված: Բոլորը»: «Վերցրեք, ես էլի ունեմ»: «Շնորհակալ եմ, լավ տանգո է, չէ՞»: «Առաջին անգամ եմ լսում, կիմե՞ք մի բաժակ, թույլ գինի է»: «Ի՞նչ եք ասում: Թեյը դնեմ կրակին, դամ»:

— Հորընկեր,— կռնը հանկարծ լսում է Արայիկի ձայնը,— նորի՞ց պատենք...

— Ի՞նչը,— հետո հասկանում է,— հա, իհարկե...

...Նկավ: Նորից՝ «Փոքրիկ ծաղիկը»: Միասին խմեցին մի բաժակ, երկու, երեք. առաջին անգամ էր տեսնում, թե ինչպես են խմում աղջիկները: Հետո պարեցին երկար, լուռ: Սենյակում կիսախնավար էր, միայն լուսնի լույսն էր ներկա, լավ էր ամեն բան: Չհարցրին ոչինչ, ո՞վ ես, որտեղի՞ց, ինչո՞ւ ես եկել: Երևի նաև համբուրվեցին: Պարելու ժամանակ (կռնը դա շմոռացավ երբեք) աղջիկը մեղմ շոյում էր նրա մազերը, ասես թե երեսա էր կռնը: Փոքր-ինչ բարձրահասակ էր աղջիկը, համբուրվելիս ինքն էր կռնում: Ե՞րբ լուսացավ:

— Հինգերորդ անգամ է, ես խելագարվում եմ,— Արայիկի ձայնն է,— նորի՞ց...

կռնը ձեռքով է անում....

...Այլևս երբեք նրան չտեսավ: Տեսներ, երևի կստացվիր սենյակ-մենտալ պատմություն, հետո զուցե նաև երեսաներ ծնվելին, միասին կգնային ծոգափ, թթվի համար կաղամբ ու վարունգ առնելու, կգնային ծնողական ժողով... Ոչինչ չեղավ: Մնաց այն գիշերը, «Փոքրիկ ծաղիկը»: Երևի նաև համբուրվեցին, բայց կռնը հիշում էր, որ աղջկա բարակ մատները իր մազերն էին շոյում, երբ պարում էին: Երկու-երեք տարով փոքր էր երևի, բայց շոյում էր մոր նման, քրոջ, հազար տարվա սիրուհու նման: Այդպես երբեք, ոչ ոք այլևս չշոյեց նրան աշխարհում, թեպետ սիրեցին երևի, ո՞վ գիտե: Բուպեն մեղանխուլիկ էր, գինին հաճելի թմբիր էր բերում, և կռնը մտածեց, որ մարդու կյանքը կամաց-կամաց դառնում է լուցիկու տուփ, որտեղ աճելանում են այրված հատիկները: Վաղն առավոտ կծիծաղի այս համեմատությունը հիշելիս, երևի էլ կծիծաղեր: Լուցիկու այրված հատիկը կարող էս և փոշոց նետել, ապրած շրեբը մնում են: Ու մի օր էլ կյանքդ դառնում է լուցիկու տուփ՝ միայն այրված հատիկներով:

կռնը խմեց Արայիկի մեկնած չգիտես որերորդ բաժակը, իսկ մագնիտաֆոնը դեռ պտտում էր հին, մաշված երգը: (Ինչո՞ւ



երդիրի կոմիսիոն խանութ չկա, մարդիկ կվաճառեն իրենց գործածածը, դուցե պետք զար ուրիշներին, էժան կվաճառեն): Գառը ժպտաց, շար ու հանգիստ:

— Զնչիր:

Արայիկը հանգիստ նայեց.

— Լավ,— ասաց,— շարունակութունը լսենք, կջնջեմ:

Դառնության կծիկը կանգնել էր կոկորդում, Լեոնին հանկարծ գրգռեց տղաների հանգստութունը, նրանց ալարկոտ շարժումները, թվաց Սևակը քմծիծաղ է տալիս: Ուզեց կովել, վշտանալ ու դարձավ ձանձրալի՝ Աշոտի նման, այս աշխարհի բոլոր հայրերի նման.

— Ուրեմն չե՞ք հավանում մեզ...— բառացիորեն Աշոտի նախադասութունն էր, նույնիսկ նրա տոնով երկարացրեց ձայնը «չեք»-ի վրա:

— Ի՞նչ պատահեց,— Արայիկը նայեց դարմացած,— մի քիչ պառկիր թախտին, հա՞...

— Լսիր...

Արայիկը ընդհատեց նրան՝ հանգիստ-հանգիստովոր.

— Սպասիր, ես շարունակեմ, հա՞: Լսիր, երբ մենք քո տարիքին էինք, հայրդ մեծ էր ինձնից ութ տարով, պատերազմը նոր էր վերջացել, պատկերացնում ես դա ինչ է, ես չորս դասարանում նույն բուլդով եմ դպրոց դնացել, ուզում ես նկարներս ցույց տամ: Հայրդ երեք տարի շարունակ բանակից բերած կիտեղն էր հագնում: Ամառ-ձմեռ, հասկանում ես,— Արայիկը մի պահ լռեց,— շարունակե՞մ: Ես ու հայրդ տարիուկես բռնակիր ենք աշխատել կայարանում, իսկ դուք ծնվել-չեք ծընվել՝ ունեցել եք ամեն ինչ, առավոտը զարթնել՝ թնկերդ մեկնել եք, դիպել է ճապոնական տրանզիստորի, իսկ ես քսաներեք տարեկան էի, երբ... Շարունակե՞մ:

Լեոնը ծիծաղում է: Ծիծաղում են երեքով:

— Ոչինչ,— ասում է Լեոնը,— երեխաներդ նույն բաները քեզ կասեն, կհիշես ինձ...

— Չեն ասի:

— Ինչո՞ւ:

— Ես չեմ հիշեցնի նրանց,— Արայիկը նայում է լուրջ, մեծավարի, ճակատին կնճիռներ կան,— քեզ հետ դեռ հեշտ է: Ընկերդ եթե հիմա լիներ, կսկավեր երրորդ համաշխարհայինը. ու մեկ-մեկ կծալեր մատները, թե քանի զույգ կոշիկ ունեմ,

քանի ինքնահոս, կասեր, որ ինքը քիմիական մատիտով էր գրում համալսարանում, կհիշեցներ, որ Միծենակաբերդի առաջին ծառերը դուք եք տնկել, որ Երևանում քսան թվին հաղիվ երեսուն հազար մարդ էր ապրում, իսկ մենք ձրիակեր ենք...

Լեոնը ծիծաղում է:

— Լավ, լավ, անշատվիր, ավելի լավ է լսենք:

Սևակը մատը սեղմում է մազնիտաֆոնի ստեղին, և սենյակը լցվում է աղմուկ-աղաղակով:

Հասմիկն ու Սերոբը շսեցին այս երգերը, շին լսի: Վահրամն էլ շսեց, թեպետ օրացույցով ապրեց քառասունյոթ տարի: Ի՞նչ եղավ, որտե՞ղ է հիմա հյուրանոցի աղջիկը: Երեխամեն մարդ թանկ մեկին պիտի կորցնի, որ որոնի՝ հետո ամբողջ կյանքում, քանի ապրում է: Հենց գտավ, ուրեմն նա չ'ու նրան շպիտի գտնես: Գինին աղմկում էր Լեոնի մեջ, գինին բանաստեղծ էր դարձնում, փիլիսոփա, շատախոս, երկխա էր դարձնում: Երեխ նրան, այն աղջկան է փնտրում ինքը կիլիթի, Տաթևիկի, ուրիշների մեջ և տխրում է, որ գտնում է. ուրեմն, նա չի: Վահրամի որդին հազվադեպ կհիշի հոր գերեզմանը, ծաղիկ էլ չի տանի: Վահրամին գյուղում թաղեցին, ծաղիկ տանելը 17-րդ դար է: Երեխ: Երեխ ամեն սերունդ այրված լուցիկների իր տուփն ունի. և՛ տուփն է նման, և՛ այրված հատիկները, բայց նույնը չեն: Թվում է նույնն են, բայց նույնը չեն: Լեոնը նորից լցրեց բաժակը, իսկ դռան զանգը տվին:

— Փիլիսոփա մաման ժամանեց,— ասաց Արայիկը և շտապով պահարան դրեց գինու շիշը, բաժակները, Լեոնի նոր լցրած գինին արագ կու տվեց և բաժակը թաքցրեց:

Լեոնը վեր կացավ: Հարկավոր է գնալ: Տղաները չեն իմանա, թե ինչ կատարվեց նրա հոգում, չեն հարցնի, հարցնեն էլ, չի ասի, ասի էլ չեն հասկանա, իսկ նախասնյակում արդեն լավում է Ալինայի ձայնը: Նա Արայիկին արդեն պատմում է կինոնկարի սկիզբը, քիչ հետո ներս կմտնի, Լեոնին կհարցնի ինչպես է, ինչպես չի, կնեղանա, որ ուշ-ուշ է երևում, կստիպի մնալ, թեյ խմել վարդի մուրաբայով, որ ինքն է եփել, խոհանոց գնալ-զալու արանքում կպատմի կինոնկարը՝ ծայրից ծայր: Հետո անպայման կնկատի, որ Լեոնի գլուխը մի թեթև ցավում է («երևի մրսել ես»), խորհուրդ կա քնելուց առաջ անալգին խմել: Եթե ժամանակ մնաց, կսկսի զանգատվել Արայիկից: («Ամբողջ օրը էս մազնիտաֆոնին է կպած.



ուչ հորն է լսում, ոչ ինձ, ասես աղբը թափիր, կասի՝ քննություն ունենմ: Էն օրը տնային կառավարիչն էր եկել, ասում է. «Էս պատ է, թե՞ բողոքի գիրք»: Գոնե դու մի բան հասկացրո՞ւ):

Չէ, հարկավոր է դնալ:

Առնը վեր կացավ, ուղղեց փողկապը, շփտես ինչու նայեց մազնիտաֆոնին, իրար վրա շարած ժաշակեններ՝ տալիներին:

ՃԹ.

Առավոտ էր, բայց շոգ: Վեր կացավ գլխացավով, հիշեց երեկվա շոգը: Հետո սկսեց սափրվել: Սափրվեց երկար, մանրամասն, կարծես հարսանիքից առաջ: Երևի շատ խմեց երեկ: Տաթևիկը աչսեր պիտի գա, ուրեմն, հարկ չկա նամակին պատասխանել, լավ է: Հրանտին պիտի գանդահարի: Մայրը պատվիրել էր սե կտոր առնել պլխաշորի համար, տունը հավաքելու ժամանակն է:

Փողոցում ավելի շոգ էր:

Առավոտյան ժամը ինն էր ընդամենը, բայց ասֆալտն արդեն տաքացել էր, ես մի քանի օր, հուլիսին, կփափկի: Փողոցի երկու կողքերին՝ ասես նկարվելու համար կանգնած շենքերը գույնզգույն վարագույրներով փակել էին բոլոր լուսամուտները, թվում էր գունավոր ակնոցներ էին դրել: Անցավ ջրցան մեքենան: Աղջիկների երամը թռավ կշիշալով, անհոգ, ո՞վ ասաց՝ անհոգ: Կարողանար գրել այս օրերի մասին, որ օրացույցով մի ամիս էլ չեն լրացնում, Վահրամի, Սերոբի, Հասմիկի, Ռուբենի, Եղաների, Արայիկի մասին... Տրուխբուսից մեկը ձեռքով արեց, ո՞վ էր, իսկ ջրցան մեքենան կարծես կրիա էր խաղում, ծառերը ջրելով: Չղզաց, մեքենաբար, բնազդով մտավ սրճարան, ոտի վրա մի բաժակ սուրճ խմեց, սիգարետ առավ, վճարեց, ստացավ մանրը, իսկ մի ուրիշ ծանոթ բարեկեց, այս անգամ՝ մյուս մայթից, ինքն էլ բարեկեց, ժպտաց, ո՞վ էր: Քաղաքը վաղուց արթնացել էր: Մեծ, տարօրինակ քաղաքը մի վիթխարի դանդակատան էր նման, մրջնանոցի, հանրի, ասֆալտե բեմահարթակի, որտեղ ամեն օր թվում է նույն պիեսն են խաղում՝ տարբեր դերասաններով: Քաղաքը փաթաթվում էր նրան սպիրալի պես, ձգում, հրում, դիմադրում, հանձնվում: Իսկ նա բայլում էր կարծես իր մենակության միջով, որ նման էր պատի,

հաստ, մանրամասն շարված պատի: Անտառը շսկավող ու շփրջացող արահետի էր նման, երկու կողմից խեղդող կանաչ, վերևում՝ քիչ-միչ երկինք: Երբ խիտ է անտառը, ծառերը բարձր են լինում, կողքերին տեղ չկա, ստիպված են վեր ձգվել, նրա մենակության ծառերը բարձր էին: Գնում էր Լևոն Շահինյանը՝ քաղաքի մի սովորական բնակիչ, աշխարհի մի աննշան անցորդ, գնում էր իր մենակության, իր ապրած ու չապրած տարիների միջով:

Սովորական օր էր, հունիսի վերջին օրերից:

Ի.

Գրասեղանի վրա թղթեր էին, գրած ու չգրած, նույն չափի թղթեր, մի քանի նամակ, որ խմբագիրը Լևոնին էր մակադրել: Գրված թղթերը մեքենագրուհուն էր հարկավոր հասցնել, չգրվածները՝ դրել:

Հեռախոսը զնդաց:

— Հը, հորընկեր,— Արայիկն էր. ձայնը զվարթ էր, զնգուն,— լավ խմեցի՞նք, չէ՞, մաման բան չիմացավ, իսկ տանգոն շենք ջնջել, թեպետ, գիտես, էլի, թողակի գնացած երգ է: Փոստով կուղարկենք, հը՞...

Դրեց խոսափողը, նայեց լուսամուտից դուրս. նույն շենքն էր, որի լուսամուտները այս վեց տարում հաշվել է երևի հազար անգամ:

Շոգ էր: Սեղանին սպիտակ թղթեր կային, նամակներ, որոնց հեղինակները սպասում են պատասխանի: Հիմա կկարդա, կմտածի:

Նորից զանգ:

— Արի մի բուպեով,— խմբագիրն էր:

Գնաց: Ժպտաց Սեղային, բացեց կաշեպատ դուռը:

— Կարդացի՞ր որոշումը,— հարցրեց խմբագիրը:

— Կարդացի:

Խմբագիրը կանգնած էր սեյֆի մոտ. փակում էր, թե՞ բացում, դժվար էր ասել: Սեյֆը նույն գույնի էր, ինչ կաշեպատ դուռը, ինչ աշխարհը:

— Տեսա՞ր, վերջը չթողեց գնամ,— ասաց խմբագիրը,— ես գիտեի, չէ՞:



— Ո՞ւր, ո՞վ:

— Ստեփանյանն, ո՞վ: Չգձգեց-ձգձգեց, մոռացե՞լ ես ուր պիտի գնայի,— ձեռքի ծոցատետրը զգույշ դրեց սեյֆի վերևի անկյունում, մի քանի ֆուրթ էլ վրան, հետո դուռը փակեց,— ո՞վ գիտի երբ պետք դաս մեկ էլ: Գու ի՞նչ ես անում, մի տեսակ ես Չե՞ս գնում հանդատանալու, ուզո՞ւմ ես արձակուրդ ձևակերպեմ, հը՞...

— Խմել եմ: Երեկ գիշեր: Շատ եմ խմել:

— Էն կոնյակի՞ց:

— Ո՞ր: Հա, նրանից: Գլուխս ցավում է:

— Թող իմ գլուխն էլ կոնյակից ցավեր,— ու թափ տվեց ձեռքը,— է՛...

Առոնը դուրս եկավ:

Գուրս եկավ, քայլեց իր մենակության միջով, որ նեղ ուղեգորգի նման տանում էր դեպի մեծ ու անհասկանալի աշխարհը: Միջանցքը, որի հատակին կարմիր, իսկական ուղեգորգ էր փռած, երկար էր: Երկար էր, բայց ոչ այնքան, ինչքան անտառի արահետը: Միջանցքի պատերը բարձր էին, բայց ոչ այնքան, ինչքան խիտ անտառի ծառերը, որ լույս են մուրում երկնքից: Միջանցքը առաստաղ ունի, առաստաղին էլեկտրական լույսեր են, լամպեր, կարելի է վառել, հանդցնել, փոխել, կարելի է հազար մոմանոց զցել: Միջանցքն իր օրենքներն ունի, արահետն՝ իր:

Առոն Շահինյանը միջանցքով քայլում էր դեպի իր գրասեղանը, իսկ անտառի արահետը նրա հոգու մեջ էր, նրա ապրած ու չապրած տարիների մեջ:

1967—1968 թթ.



Գրական-գեղարվեստական հրատարակություն

Պետրոսյան Վարդգես Համազասպի

ՉՈՐՍ ՎԻՊԱԿ

Վիպակներ

Գլխավորական ժիլիև և բարձր տարիքի համար

Литературно-художественное издание

Петросян Вардкес Амазаспович

ЧЕТЫРЕ ПОВЕСТИ

Повести

Для среднего и старшего школьного возраста

Художник А. Яралян

(На армянском языке)

Издательство «Аревик»

Ереван, 1990

Խմբագրության վարիչ՝ Գ. Ս. Օհանյան, Խմբագիր՝ Ա. Գ. Յագիչյան, նկարիչ՝  
Ա. Ի. Յառայան, Գեղ. Խմբագիր՝ Խ. Զ. Հակոբյան, Տեխ. Խմբագիր՝ Տ. Վ.  
Ավետյան. Վերստուգող սրբագրիչ՝ Մ. Յ. Խաչատրյան.



ИБ № 317

Հանձնված է շարվածքի 8. 02. 90 թ.: Ստորագրված է տպագրության 13. 06. 90 թ.:

Չափեր՝  $80 \times 108^{1/32}$ : Քուղթ՝ տպագր. № 2: Տառատեսակ՝ Գրքի սով.:

Տպագրություն բարձր, 20,58 պայմ. տպ. մամ., 18,92 հրատ. մամ.: Տպա-  
քանակ 3000: Պատվեր՝ 249: Գինը՝ 1 ո. 40 կոպ.:

«Արևիկ» հրատարակչություն, Երևան— 9, Տեղյան 91:

ՀեՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պե-  
տական կոմիտեի № 1 տպարան, Երևան—10, Ալավերդյան 65:

Издательство «Аревик», Ереван-9, ул. Теряна, 91.

Типография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и  
книжной торговли Арм. ССР, Ереван-10, ул. Алавердяна, 65.